

**ՄԵԾ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍՏԾՈ  
ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ  
ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ  
ՊԱՏԳԱՄԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ**

Այս շարադրանքը պարունակում է կարևոր տեղեկություն, որն ընդգրկում է երկինքն ու երկիրը: Բոլոր ժամանակներից ի վեր մարդիկ մտածել են իրենց բաժին ընկած ճակատագրի մասին: Այս շարադրանքի միջոցով հույս ունենք ոչ միայն լուսաբանել դեռևս չվերջացած մեծ ողբերգության ներքին դրդապատճառը, այլև ցույց տալ այս հնագույն խնդրի լուծումը այնպես, որ այս շարադրանքը ծառայի որպես ուղեցույց:

Առաջին մարդիկ աշխարհ եկան մոտ 6000 տարի առաջ: Ըստ ՄԱԿ-ի վիճակագրության 1999 թվականի հոկտեմբերի 12-ին աշխարհի բնակչության թիվը գերազանցեց վեց միլիարդը: 2000 թվականին տեղին կլինի այս հարցը՝ թե արդյոք Սուրբ Գրքում կանխասված իրադարձությունները շուտով չեն կատարվի: Սպասումները մեծ են ամեն առումով: Հատկապես ուշադրության կենտրոնում են այս երկրի երկու քաղաքները՝ Երուսաղմը և Հռոմը: Երուսաղեմը, որովհետև համարվում է երեք համաշխարհային կրոնների՝ հուդայականության, քրիստոնեության և իսլամի ծննդավայրը, թեև Մուհամեդը Քրիստոսից հետո 632 թվականին իր կրոնը հիմնեց ոչ թե Երուսաղեմում, այլ Արաբիայի Մեքքայում և Մեդինայում: «Սուրբ՝ 2000 թվականի» համար Հռոմը առանձնահատուկ շուք է ձեռք բերել: Երուսաղեմի պարիսպների «Ոսկե դարպասը» փակ է մնում, մինչդեռ Վատիկանի «Սուրբ Դուռը» Հովհաննես Պողոս II պապը բացել է «սուրբ տարվա» առթիվ: Մինչդեռ մարդկանց կրոնական գործողությունները չէ, որ մեզ հետաքրքրում են, այլ միակ սուրբ Աստծո գործողությունը մարդկության պատմության մեջ:

Բոլոր դարերի ընթացքում տղամարդիկ և կանայք նորից ու նորից իրենց ակնկալիքները կապել են որոշակի տարիների հետ: Հիմա էլ 2000 թվականը իր «առանձնահատուկ» լինելու պատճառով հայտնվել է նրանց ուշադրության կենտրոնում: Միչնդեռ դա մյուս տարիների նման տարի է, և չեն կատարվելու այն իրադարձությունները, որոնք կանխասում են ինքնակոչ մարգարեներն ու մարգարեուհիները: Արտասովոր իրադարձություններ կատարվում են միայն այն դեպքերում, երբ Աստված է դրանք կատարում: Անշուշտ, մենք իսկապես գտնվում ենք փրկության պատմության շրջադարձային ժամանակաշրջանում, և ցանկացած տարի կարող էր լինել

«հոբելյանական»: Ակնհայտ է, որ ոչ ոք չի կարող ամսաթիվ որոշել: Մինչդեռ ժամանակների նշանները հստակորեն ցույց են տալիս: Ադամից հետո 2000 տարի անցավ, երբ Աստված Իր խոստումների հիման վրա, Աբրահամի հետ նշանակալից և հանդիսավոր ուխտ արեց: 2000 տարի հետո Աստված նոր սկիզբ դրեց, այսինքն, Քրիստոսով իրականացրեց փրկության պատմությունը խոստումների իրականացման միջոցով, որը հանգեցրեց նորկտակարանյան Ուխտի կնքմանը: Հին և նոր ուխտերի միջև ընկած էր օրենքի և մարգարեության ժամանակաշրջանը: Օրենքը իր բազում պատվիրաններով և արգելքներով սահմանված էր մեղսաբնույթ մարդկանց հանցանքները ցույց տալու համար: Մարգարեների առաջադրանքն էր ազդարարել փրկության պատմությունը մինչև դրա իրականանալը:

Մենք հիմա հասել ենք 2000 տարի տևած շնորհքի ժամանակաշրջանի վերջին: Մենք կարող ենք վստահորեն սպասել մեծ իրադարձությունների Աստծո սահմանած ծրագրի համաձայն: «Որովհետև Ջորաջ Տերը որոշեց, և ո՞վ կարող է արգելել, և Նրա ձեռքը մեկնված է, և ո՞վ կարող է Նրան ետ դարձնել» (Ես.14:27): Մարդկության պատմության յոթերորդ հազարամյակը ոչ թե կարող է այլ պետք է լինի «Քրիստոսի խաղաղության թագավորության հազարամյան»: Աստծո խոսքում դրա վերաբերյալ շատ խոստումներ կան, ինչպես օրինակ Հայտն. 20:6 համարում գրվածը. «Երանելի և սուրբ է, ով բաժին ունի հարության մեջ. սրանց վրա երկրորդ մահն իշխանություն չունի, այլ Աստծո և Քրիստոսի քահանաներ կլինեն և նրա հետ հազար տարի կթագավորեն»: Եթե խոսքը մարգարեական ժամանակաշրջանի մասին է, ուժի մեջ է մնում այս խոսքը. «... որ Տիրոջ մոտ մեկ օրը հազար տարվա պես է, և հազար տարին՝ ինչպես մեկ օր» (2 Պետր.3:8 ): Աստված կամենում է Իր փրկագնման գործը ավարտել յոթերորդ հազարամյակում, ինչպես արարչագործությունը ավարտեց յոթերորդ օրը և հանգստացավ Իր գործերից (Ծննդ. 2:1-3):

Ամենավերջում կատարվում է վերջին և վճռորոշ արդար դատաստանը և ամեն մարդ կհայտնվի իր ընտրած վայրում: Մենք գիտենք ասացվածքը. «Ընտրություն ունեցողը տառապանք ունի»: Հավիտենության վերաբերյալ կարող ենք ասել «Ճիշտ ընտրություն կատարողը զերծ կլինի տառապանքից»: «Վերջին դատաստանից» հետո ժամանակը ավարտվում է և մտնում հավիտենություն, երկրի վրա նոր սկիզբ է դրվում, որում երբեք վերջ չի լինի երկնային ներդաշնակությանը: «Որովհետև ահա ես նոր երկինք ու նոր երկիր եմ ստեղծում, և առաջինները պիտի չհիշվեն և միտքը պիտի չգան» (Ես.65:17): «Բայց նրա խոստման համաձայն՝ նոր երկնքի ու նոր երկրի

ենք սպասում, որոնց մեջ արդարություն է բնակվում» (2 Պետր.3:13): «Տեսա նոր երկինք և նոր երկիր, որովհետև առաջին երկինքն ու երկիրը անցան, և էլ ծով չկա» (Հայտն.21:1):

Աստվածաշնչյան հավատացյալները ոչ թե աշխարհի վերջին են սպասում, այլ Հիսուս Քրիստոսի խոստացված վերադարձին: Նրանք ոչ էլ «արմագեդոնային դժոխքով» խուճապի մթնոլորտ են ստեղծում: Առաքյալների ժամանակներից ի վեր Աստծո բոլոր ճշմարիտ զավակները Հովի. 14:1-3 համարներում արված Հիսուսի խոստումի համաձայն սպասել են, որ Նա գա իրենց տուն տանելու: Ամեն դեպքում ուժի մեջ է մնում գրվածը՝ միայն Աստված գիտի ժամն ու ժամանակը: Հիսուսը և առաքյալները, ազդարարելով Նրա երկրորդ գալստյան մասին, չեն սխալվել, ոչ էլ մեզ են խաբել: Պետրոսը նախօրոք ասել է, որ ծաղրողները այդ հարցի վերաբերյալ կծաղրեն և կասեն. «Ու՞ր է նրա գալստյան խոստումը, քանի որ... ամեն բան աշխարհի արարչությունից հետո նույն ձևով կանգնած մնում է»: Մինչև խոստումների իրական կատարումը գրվածը ուժի մեջ է մնում: «Տերը խոստումը չի ուշացնի... բայց մեր նկատմամբ համբերող է ...» (2 Պետր.3:9): մինչդեռ Աստծո համբերությունը մի օր վերջին կհասնի, ինչպես Նոյի ժամանակ(Մատթ. 24:39) և դա կարող է լինել ցանկացած պահի:

Փրկության պատմությանը պատկանող իրադարձությունները միշտ կատարվում են, երբ ժամանակը գալիս է, ըստ Աստծո ծրագրի և Աստծո ժամանակագրության. «Որովհետև Տերն արդարությամբ մի կարճ ու համառոտ բան կանի. Տերը երկրի վրա մի վճռական բան կանի» (Հռոմ. 9:28):

**ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ  
ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ՍԿՍՎԵԼ,  
ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ՎԵՐՋԱՆԱԼՈՒ**

Աստծո կատարած ամեն սկիզբ հրաշալի և կատարյալ է եղել, մինչդեռ հակառակորդը փորձել է ջնջել Նրա ծրագրերը և ձախողել դրանք: Դա սկսվեց արդեն երկնքում և շարունակվեց երկրի վրա: Դա է մեծ ողբերգությունը: Աստված ամեն բան հրաշալի և կատարյալ էր ստեղծել: Մինչդեռ չգիտեն, թե երբ Արուսյակը ապստամբեց Նրա դեմ երկնքում: Հետո խաբեց դրախտում գտնվող առաջին մարդկանց: Աստծո թշնամին ոչինչ չթողեց այնպես, ինչպես եղել է սկզբում: Սկզբից ի վեր և մինչև հիմա նա ստել է, խաբել և կործանարար ազդեցություն ունեցել մարդկության վրա: Չկա մի գույգ, մի ընտանիք, որին նա չի ցնցել, չկա մի մարդ, որին նա հանգիստ թողած լինի, չկա մի ցեղ, մի ժողովուրդ, մի երկիր, որտեղ նա չարիք չի գործել: Արդեն Իսրայելի համար, հետագայում էլ Եկեղեցու համար նա փորձել է ձախողել Աստծո սկզբնական ծրագիրը: Նա չի հարգել ոչ մի արթնություն: Նա սողոսկել է նույնիսկ այնտեղ, ուր գործում է Աստծո Հոգին, և խառնաշփոթություն և բաժանումներ է բերել: Նրա ազդեցության տակ նույնիսկ կրոնական ոլորտում ամեն բան շուռ է եկել, և նրա մոլորությունը այժմ հասնում է գագաթնակետին:

Աստծո Խոսքում տեղեկանում ենք, թե ինչ աղավաղումներ են կատարվել երկնքում և երկրի վրա: Մենք պարզաբանումներ ենք ստանում անցյալի վերաբերյալ, հասկանում ենք ներկան և կարող ենք հայացք գցել ապագային: Որքան որ հաստատ է, որ Աստված ամեն բան կատարյալ է ստեղծել և մարդկության հանդեպ միայն սիրո և խաղաղության մտադրություններ ունի, նույնքան հաստատ է, որ թշնամին միայն չարիք կարող է պատճառել: Որքան որ հաստատ է, որ Աստված խոսել է Իր Խոսքի միջոցով, նույնքան հաստատ է, որ թշնամին միայն աղավաղել և կեղծել է Աստծո ասածները: Սատանան աթեիստ չի, նա հավատում է Աստծուն և դողում (Հակոբ 2:19): Դրա մեջ է մոլորությունը. նա ստում է և մոլորեցնում Աստծո ամուսնով և Խոսքով, որովհետև նա Աստծուն շատ լավ է ճանաչում և Խոսքը շատ լավ գիտի: Նրան իսկապես կարելի է տալ «բոլոր կրոնների գերագույն աստվածաբան» տիտղոսը: Ընդդիմության իր դերում նա վաղուց ի վեր կասկածի տակ է դրել ճշմարտությունը, որպեսզի այն փոխարինի կեղծիքով և ստով: Այդպես է նրան հաջողվել կասկածներ ցանել,

մարդկանց մղել անհավատության, և նույնիսկ բարեպաշտական խոսքերով և կրոնական ձևով նրանց տարել է մոլորության:

Սուրբ Գիրքը խոսում է բնական ստեղծագործության և հոգևոր ստեղծագործության մասին, «առաջին» և «վերջին» Ադամի մասին (1 Կորնթ. 15:45-49): Արարչագործության շարադրանքի վերջում կարդում ենք. «Եվ Աստված կատարեց յոթերորդ օրում, որ արեց, և յոթերորդ օրը հանգստացավ Իր բոլոր գործերից, որ արեց» (Ծննդ.2:2): Նույն կերպ, Աստծո Որդին փրկագնման գործն ավարտելուց հետո նստեց Աստծո մեծության աջ կողմում (Եփես. 1:20 և այլ համարներ) և Պենտեկոստեի օրը լցրեց Իր Եկեղեցուն Իր Սուրբ Յոգու զորությամբ (Գործք 2): Եկեղեցին ճշմարտության սյունն ու հաստատությունն է (1 Տիմ.3:15): Մինչդեռ հրաշալի սկզբից հետո հայտնվեց սատանայի ավերիչ գործը, ինչպես արդեն տեղի էր ունեցել առաջին ստեղծագործության ժամանակ:

Նախ մի հայացք զգենք երկնքին. այնտեղ սկսվեց ողբերգությունը Արուսյակի միջոցով, որը ամենակարևոր հրեշտակապետերից մեկն էր, «օծյալ» էր, լուսաբեր, արշալույսի որդին: Նա առաջնորդող դեր ուներ և մեծ ազդեցություն: Բայց հանկարծ ինչ-որ բան կատարվեց, որը լիովին անհասկանալի է, և դա շարունակվեց երկրի վրա՝ դրախտում: Հնարավոր է, որ սկզբում նա իր ձևով լավ մտադրություններ է ունեցել, որովհետև Աստծո կողմից էր ստեղծված, և չար բան չէր կարող լինել նրա մեջ: Չարը հայտնվում է այն ժամանակ, երբ զատվում են բարուց, խավարը գալիս է այն ժամանակ, երբ զատվում են լույսից: Նրա սեփական կամքը զատեց նրան Աստծո կամքից: Ամեն բան կարող է մնալ աստվածային ներդաշնակության մեջ միայն այն դեպքում, երբ ամեն Աստծո կամքի մեջ է և Նրա սահմանած կարգի համաձայն: Մասամբ ծածկագրված տեղեկությունները մեզ հնարավորություն են տալիս հայացք զգել անցյալին: Հանկարծ Արուսյակը այլևս Աստծո հետ չխոսեց, այլ սկսեց մենախոսել այսպես.

«Վեր կելնեմ երկինքը...

Աստծո աստղերից բարձր կդնեմ իմ աթոռը..

Կնստեմ աստվածների ժողովի սարի վրա...

Վեր կելնեմ ամպերի բարձրությունների վրա...» (Ես.14:13,14):

Այս բոլորը հայտարարություններ էին Աստծուց չեկող մտադրությունների մասին, որոնք ցույց էին տալիս Արուսյակի մտադրությունը՝ զատվել Աստծուց և հռչակել սեփական

անկախությունը: Այսպես նա դարձավ Աստծո հակառակորդն ու թշնամին: Նրա սեփական հայտարարությունները՝ «Վեր կելնեմ», «Կնստեմ» և այլն, Աստծո կամքով չէին և ինքնաբերաբար ուղղված էին Աստծո դեմ: Մինչ այդ չարը գոյություն չուներ:

Նա, որ Աստծուն այնքան մոտ էր գտնվում, ապստամբեց նրա դեմ և անկում ապրեց: Այն ժամանակվանից կարելի է ասել. «Անկումին հպարտությունն է նախորդում»: Այդ սարսափելի անկման ժամանակ Աստծո թշնամի դարձած հրեշտակապետը իր հետ տարավ հրեշտակային բանակի մի մասը: Երկնքում տեղի ունեցած ապստամբությունից հետո ոչ միայն գոյություն ունի անսահմանորեն բարի Աստվածը, այլև չարը, որի մեջ եղած ողջ բարին անհետացավ միանգամից: Կա նաև նրա բանակը, որով նա, որպես աշխարհի իշխան, իր ազդեցությունն է գործում մարդկության վրա երկնային վայրերում և պայքարում է ամեն աստվածայինի դեմ (Եփես. 6: 11-13): Դա պայքար է Լուսի և խավարի միջև, բարու և չարի, կյանքի և մահվան: Մենք բոլորս քիչ թե շատ չափով ներգրավված ենք այդ հոգևոր պայքարում: Փրկագնվածների հափշտակության ժամանակ, սատանայի և իր հրեշտակների դեմ վերջին համընդհանուր ռազմական փորձարկման ժամանակ Միքայել հրեշտակապետը իր զորքով հաղթանակ կտանի. «Եվ երկնքում պատերազմ եղավ. Միքայելն ու իր հրեշտակները վիշապի դեմ պատերազմեցին: Վիշապն ու իր հրեշտակներն էլ պատերազմեցին, բայց չկարողացան դեմ կանգնել, ոչ էլ նրանց համար երկնքում տեղ գտնվեց» (Հայտն.12:7,8):

## ՄԵՂՔԻ ՄԵՋ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՇՏԿՈՒՄԸ

Մեր առջև բացվում է մեր Աստծո փրկության խորհրդավոր ծրագիրը: ԾՆՆՂ.1:27 համարում Աստված մարդուն ստեղծեց Իր պատկերով, հոգևոր մարմնում: 2-րդ գլխի յոթերորդ համարում Տեր Աստված նրա համար հողից մարմին պատրաստեց: 18-րդ համարում Աստված ասում է. «Լավ չէ, որ մարդ մեռնակ լինի. նրա նման մի օգնական շինեմ իրեն հարմար» (ԾՆՆՂոց 2:18): Դրանից հետո Աստված հողից շինեց բուրդ կենդանի արարածներին զույգերով, և Ադամը նրանց անուն տվեց: Հետո Տեր Աստված նայեց, թե արդյոք նրանց մեջ Ադամին հարմար օգնական կար, բայց չկար (հ.20): Ի վերջո Տեր Աստվածը Ադամի կողից հանեց Եվային և ներկայացրեց նրան. նա մարմին էր Ադամի մարմնից, և ոսկոր՝ նրա ոսկորներից (հհ. 21-24): Դրանում է մեծ խորհուրդը և վերաբերում է Քրիստոսին և Եկեղեցուն (Եփես. 5:30-32). ինչպես Եվան վերցվեց Ադամից և տարվեց նրա մոտ, այնպես էլ Եկեղեցին, որ Քրիստոսի մեջ էր, վերցվեց Նրանից և Նրան կներկայացվի որպես մաքուր կույս (2 Կորնթ. 11:2, Եփես. 5:27): Նա Փեսա-Խոսքն է, իսկ Եկեղեցին՝ Հարս-Խոսքը, Նա Գլուխն է, Եկեղեցին՝ Նրա Մարմինը (Կողոս. 1:18 և այլ համարներ):

Արարչագործության սկզբում երկինքն ու երկիրը այնպիսի ներդաշնակության մեջ էին, որ մենք չենք կարող պատկերացնել, երանությունն ու երջանկությունն էր: Երկնային զորքերը երկրպագություն էին մատուցում Աստծուն Նրա գահի առաջ: Տերը այցելում էր երկրի առաջին բնակիչներին դրախտում օրվա հովի ժամանակ և հաղորդակցվում էր նրանց հետ: Չկար տառապանքի, հիվանդության կամ մահվան որևէ հետք: Արուսյակը նույնպես մուտք ուներ այդ վայրերում, ինչպես Եզեկիելն է խորհրդավոր կերպով նկարագրում իր գրքի 28-րդ գլխում. «Դու կատարելության կնիքն ես՝ լի իմաստությունով ու գեղեցկությամբ կատարյալ, Եդեմում՝ Աստծո դրախտում էիր՝ *դու մի* օծված քերովբե էիր ծածկող...» (Եզեկ.28:12-14): Նա առաջին «օծյալն» էր, և դարձավ Աստծո թշնամին: Դա մեծ կարևորություն ունի վերջին ժամանակների օծյալների վերաբերյալ մեր թեմայի համար:

Աստծո թշնամին դարձած այս քերովբեի համար բավական չէր այն, որ աղետ էր բերել երկնքում: Նրան ամենևին դուր չէկավ այն, որ Աստված Ադամին Իր որդուն հաստատել է այն ամեն բաների վրա, որ Ինքը ստեղծել էր երկրի վրա: Ադամն ու Եվան գերիշխան կերպով էին իշխում երկրի վրա: Հակառակորդը, որ ինքը դուրս էր եկել երկնային կարգուկանոնից, իր հետ անկման տարավ նաև երկրի առաջին

մարդկանց: Լինելով հոգևոր էակ՝ նա իրեն ենթարկեց կենդանական աշխարհի ամենազարգացած և ամենախորամանկ կենդանուն (Ծննդ. 3:1), որը անշուշտ, ամենից շատ էր մարդուն նման: Դա օձն էր, որը կարող էր կանգնել և խոսել գիտեր:

Մեզ հայտնի է օձի և եվայի զրույցը: Միայն անեծքի պատճառով (հ.14) այդ կենդանին կորցրեց իր սկզբնական տեսքը և դարձավ սողուն: Այն ժամանակվանից ի վեր մինչև Հայտնության գիրքը Աստծո թշնամուն անվանում են «սատանա», «վիշապ», «առաջին օձ»:

Երկրի վրա էլ ավելի սարսափելի բան կատարվեց, քան երկնքում: Քերովբեներն ու սերովբեները, որոնք Արուսյակի ազդեցության տակ չընկան, մնացին աստվածային կարգուկանոնի մեջ, այսինքն՝ իրենց համար նախատեսված առաջադրանքների շրջանակում: Մինչդեռ երկրի վրա ողջ մարդկությունը լիովին ընկավ սատանայի իշխանության տակ: Նա կարողացավ ազդել առաջին մարդկանց վրա, որ կասկածեն Աստծո խոսքին, այսինքն՝ չուտել բարու և չարի գիտության ծառից: Նա նրանց մղեց խախտել Աստծո սուրբ պատվիրանը, որի խախտման համար մահվան դատավճիռ էր հռչակվել: Նա նրանց ասաց. «Ձեր աչքերը կբացվեն», «Իմաստուն կդառնաք» և «Աստծո նման կլինեք»: Թշնամին ասաց. «Բնավ չեք մեռնի...»: Դա Աստծո ասածի ճիշտ հակառակն էր: Նախ սատանան իր իշխանության տակ վերցրեց կենդանական աշխարհը՝ իրեն ենթարկելով օձին, հետո եվան ընկավ նրա ազդեցության տակ: Սատանան կասկածի տակ դրեց Աստծո խոսքը, կեղծեց Աստծո ասածը՝ «Պարտեզի ամեն ծառից համարձակ կեր...»՝ ասելով. «...պարտեզի ոչ մի ծառից չուտեք» (Համեմատեք Ծննդոց 2:16 և 3:1 համարները) և սխալ իմաստ տվեց ասվածին: Այն ժամանակվանից թշնամին խոսում է աստվածաշնչյան թեմաներով, բայց երբեք չի մնում սկզբնական ճշմարտության մեջ, նա չի ժխտում խոսքը, բայց ամեն անգամ աղավաղում է ասվածի իմաստը, բերելով անվերջանալի փաստարկներ և այդպիսով խախտում է Աստծո խոսքի արժանահավատությունը:

Դա չվերջացավ պտուղ ուտելով. դա միայն սկիզբն էր: Գործը չսահմանափակվեց աչքերի ցանկությամբ, այլ մինչև այսօր դա տանում է մարմնի ցանկությամբ: Սատանան ոչ միայն ներքաշեց եվային իր փաստարկների մեջ, այլևս իսկապես գայթակղեց նրան. նա այդ արեց քանի դեռ բազմացումը տեղի չէր ունեցել այնպես, ինչպես նկատի էր ունեցել Տերը, երբ ասել էր մարդուն. «Աճեցեք և շատացեք...» (Ծննդոց 1:28): Բոլորը գիտեն, թե ինչ է նշանակում, երբ ասում են, որ կինը խաբվել է: Բոլորը գիտեն նաև, թե ինչ է նշանակում,



երբ ասում են. «Նա մեղքի մեջ է ընկել»: Սուրբ Գիրքն ասում է. «Եվ եթե մեկը չնշանակած աղջիկ խաբի ու պառկի նրա հետ...» (Ելից 22:16): Օձի կողմից գայթակղվելուց հետո Եվան տրվեց Ադամին, որը դեռ չէր ճանաչել նրան: Օձը մի սերունդ էր թողել: Կայենը նրա բնական սերունդն էր, ինչպես Աբելը՝ Ադամի: 3-րդ գլխում կատարվածից հետո կարողում ենք 4-րդ գլխի 1-2 համարներում. «Եվ Ադամը գիտաց իր կինը՝ Եվան, և նա հղացավ և ծնեց Կայենը... Եվ դարձյալ ծնելիս ծնեց նրա եղբայր Չաբելը...» (Ծննդ.4:1,2): Աշխարհի եկան լիովին տարբեր երկու որդիներ: 3-րդ գլուխը և 4-րդ գլխի սկիզբը պետք է կարդալ միասին: Սուրբ Գրքի գլանափաթեթներում դեռևս գլուխների և համարների բաժանումը չկար:

Մեզ համար անհասկանալի է, որ դա կատարվեց նույն օրը, երբ դեռ Տեր Աստված պարտեզ չէր եկել օրվա հովի ժամանակ: Դրանից հետո մարդիկ թաքնվեցին, և Աստված կանչեց. «Ադամ, ու՞ր ես»: Դրանից անմիջապես հետո Ադամն ու Եվան թգնու տերևից ծածկոցներ պատրաստեցին՝ իրենց մերկության ամոթը ծածկելու համար: Տեր Աստվածը ուղղակիորեն վկայակոչեց կատարվածը և պատիժը դրեց ճիշտ տեղում: Մինչև հիմա էլ այն նույնն է: Նա ասաց Եվային. «... և ցավով զավակ ծնես...» (Ծննդ.3:16): Ոչ մի կին, այդ թվում և առաջին կինը չի հղիացել միրգ ուտելով: Երբ Տեր Աստված տվեց օրենքը, առանց պատճառի չէր, որ տվեց այս խիստ կարգադրությունը. «Եվ ոչ մի անասունի հետ չզուգավորվես նրա հետ պղծվելով և բնավ մի կին անասունի առաջին չկանգնի՝ նրա հետ զուգավորվելու. գարշություն է այդ» (Դեւտ.18:23): «Անիծյալ է որևիցե անասունի հետ պառկողը. և բոլոր ժողովուրդն ասե. ամեն» (2 Օրինաց 27:21):

Օրինազանցությունը և մեղքի մեջ անկումը կատարվեց այն պատճառով, որ Ադամը ենթարկվեց իր կնոջ ազդեցությանը: Դրա պատճառով է նա հանդիմանվում. «Որովհետև դու լսեցիր թո կնոջ խոսքին...» (Ծննդոց 3:17): Հիմնական մեղադրանքն ուղղված էր Ադամին, որովհետև նա խախտել էր իրեն տրված Աստծո պատվիրանը Ահա թե ինչու է գրված. «Որովհետև ինչպես որ Ադամով բոլորը մեռնում են... » (1 Կորնթ. 15:22): Շնորհիքի և շնորհագրկության պատմությունը ընթացքի մեջ մտավ: Այդ պահից Աստծո և մարդու միջև հաղորդակցությունը խզվեց: Աստծուց բաժանված լինելով առաջին զույգը ստիպված էր հեռանալ դրախտից: Մինչդեռ «կորստյան մեջ մտնելու» պահին Աստված նրանց փրկության խոստում տվեց կնոջ սերնդի միջոցով (Ծննդ. 3:15):

Երբ Աստված ուխտ կնքեց Աբրահամի հետ, Աստված պահանջեց տղամարդու անդամի թլփատությունը: Արդյո՞ք դա մեղսագործության ժամանակ Աստծո պատվիրանի խախտումը հիշեցնելու համար էր: «Սա է իմ ուխտը, որ պիտի պահեք իմ և ձեր մեջտեղը և քեզանից հետո քո սերունդի մեջտեղը՝ ձեր ամեն արուն թլփատվի» (Ծննդ. 17:10): Աստված հաստատեց մարմնի թլփատությունը որպես ուխտի նշան: «Քո ընդոծինը և քո արծաթով առածը անպատճառ պիտի թլփատվի. և իմ ուխտը ձեր մարմնում հավիտենական ուխտ լինի: Եվ մի անթլփատ արու, որի թլփատության մարմինը թլփատված չէ, այն անձն իր ժողովրդից պիտի կորչի. նա իմ ուխտն անարգել է» (Ծննդ.17:13,14): Թլփատությունն այնքան կարևոր էր, որ Աստված ուզում էր Մովսեսին սպանել, որովհետև իր սեփական որդուն չէր թլփատել (Ելից 4:24-26): Հետուի ժամանակ Աստված պատվիրեց թլփատել նաև նրանց, ովքեր ծնվել էին Եգիպտոսից դուրս գալուց հետո (Հեսու 5:2-5): Փրկիչը նույնպես թլփատվեց ութերորդ օրը և այդպիսով ենթարկվեց աստվածային կարգադրությանը (Ղուկաս 2:21-24): Աստվածաշնչում ամեն վճիռ իր իմաստն ու նշանակությունն ունի:

Պողոսը, որ առաքյալ էր և Աստծուց սովորած վարդապետ, Աբրահամի և թլփատության մասին գրել է. «Եվ թլփատության նշանն ընդունեց իբրև այն հավատի արդարության կնիք, երբ անթլփատ էր, որպեսզի ինքը հայր լիներ այն բոլոր հավատացյալներին, ովքեր անթլփատությունից են, որպեսզի նրանց էլ արդարություն համարվի» (Հռոմ.4:11):

Նոր Ուխտում մեջքի մեջ անկումը շտկելուց հետո այլևս մարմնավոր թլփատության պատվեր չկա: Այժմ մեր սիրտը պետք է թլփատվի: Քրիստոսը մահացել է թլփատվածների և անթլփատների համար: Այժմ ուժի մեջ է մնում Պողոսի գրածը. «Քանի որ Քրիստոս Հիսուսի մեջ ո՛չ թլփատությունն է մի բանի կարող, ոչ էլ անթլփատությունը, այլ հավատը, որ սիրով է գործում» (Գաղատ.5:6): «Նրանով դուք անձեռակերտ թլփատությամբ թլփատվեցիք՝ Քրիստոսի թլփատությամբ մարմնական մեղքերի մարմնից մերկանալով, Նրա հետ մկրտությամբ թաղվեցիք, որով նրա հետ էլ հարություն առաք՝ հավատալով Աստծո զորությանը, որ մեռելներից հարություն տվեց նրան» (Կողոս.2:11,12):

Կյանքի Ծառը գտնվում էր պարտեզի մեջտեղում, իսկ գիտության ծառը հենց նրա կողքին էր: Հնագանդությունն ու անհնագանդությունը, կյանքն ու մահը շատ մոտ են իրար, բայց բացառում են մեկը մյուսին: Կյանքի բացակայությունը մահ է, լույսի բացակայությունը խավար է,

հավատքի բացակայությունը անհավատություն է, հնազանդության  
բացակայությունը անհնազանդություն է:

## ԵՐԿՈՒ ՍԵՐՈՒՆԴ

Տերը օձին անիծելուց հետո ասաց. «Եվ ես թշնամություն եմ դնում քո և կնոջ մեջտեղ, և քո սերունդի և նրա սերունդի մեջտեղ: Նա քո գլուխը կջախջախի, և դու նրա գարշապարը կխայթես» (Ծննդոց 3:15): Օձը իրենից հետո սերունդ թողեց. այդպես է ասում Տեր Աստված: Թշնամություն կարող էր լինել միայն երկու տարբեր սերունդների միջև, և դա գալիս է թշնամուց: Աստծո Խոսքը անսխալական է և բացում է տեսնողներին ասվածի և կատարվածի նշանակությունը:

Կայենն իրոք չարի որդին էր, ինչպես ասում է Յովհաննեսը՝ Յիսուսի սիրելի աշակերտը. «Ոչ թե այնպես, ինչպես Կայենը, որ չարից էր...» (1 Յովհ.3:12): Անշուշտ Խոսքը Ադամի մասին չէ, այլ սատանայի, որը չարն է (Մատթ. 6:13, 1 Յովհ. 2:13-14): Ո՛չ Յիմ, ո՛չ էլ Նոր Կտակարանում Կայենը չի հիշատակվում որպես Ադամի որդի: Եթե նա անդրամիկը լիներ, անդրամիկության իրավունք կունենար: Ադամը երբեք չի հիշատակվում որպես Կայենի հայր: Այլապես Ենովքը չէր կարող լինել Ադամից հետո յոթերորդը (Ծննդ. 5:18, Ղուկաս 3:37-38, Յուդա հ.14): Աստծո Խոսքը այնքան կատարյալ է, թեև այնքան խորհրդավոր: Միայն Եվան է բոլոր կենդանյաց մայրը (Ծննդ. 3:20):

Երկու որդիներից մեկը հաճելի էր Աստծուն. Աբելը գառնուկ մատուցեց, որպես քավիչ զոհ, դրա համար էլ նա ինքը դարձավ առաջին զոհը՝ սպանված առաջին մարդասպանի կողմից: Կայենի մեջ կար նախանձ, չարություն, բռնություն, սպանություն: Այդ հատկությունները ոչ Աստծուց էին, ոչ էլ Ադամից, որը Աստծո որդի էր. դրանք սատանայից էին, որը սկզբից ի վեր մարդասպան է (Ծննդ. 8:44):

Մինչդեռ Կայենը նույնպես կրոնասեր էր. նա նույնպես զոհ մատուցեց, բայց դժբախտաբար դրանք երկրի պտուղներ էին, որովհետև նա կապ չէր հաստատել մեղքի մեջ անկման և փրկության ու թողության անհրաժեշտության միջև, ինչպես արել էր Աբելը:

Կայենի և Սեթի երկու բնական ճյուղերը գոյություն ունեին մինչև ջրհեղեղը: Ակնհայտ է, որ Աբելը սպանվեց մինչև սերունդ ունենալը, ուստի նրա մասին ծննդաբանական տեղեկություններ չկան: Ինչ վերաբերում է Նոյի ժամանակներին, Ծննդ. 6:2,3 համարներում կարդում ենք. «Աստծո որդիները տեսնելով մարդկանց աղջիկներին, որ գեղեցիկ էին ամեն իրենց հավանածներից իրենց համար կանայք էին առնում»: Այն բանից հետո երբ երկու սերունդները խառնվեցին, Աստված ասաց. «Իմ Յոգին մարդու վրա միշտ պիտի չմնա... բոլոր

մարմնի վերջը եկել է իմ առաջին» (Ծննդոց 6:3,13), որովհետև Փրկիչը պետք է սերեր Սեթի մաքուր ճյուղից: Նրա սերունդը համարվում էր Աստծո որդիների սերունդ: Մինչդեռ նրանք էլ անհնազանդ եղան, չհավատացին պատգամաբեր և մարգարե Նոյին, մեղք գործեցին մյուս ցեղի հետ խառնվելով: Ինչպես մեր Տերն է ասել Մատթ. 24:38 համարում, դա կրկնվելու է նաև շնորհքի ժամանակի վերջում: Այժմ նույնպես Սուրբ Հոգուն վշտացնում են հոգևոր խառնուրդի պատճառով: Այն ժամանակ հռչակավոր հսկաներ ծնվեցին, հիմա հռչակավոր կրոնական գործիչներ ունենք:

Հուդա առաքյալը Նոյի ժամանակը համեմատում է Սողոմի ժամանակի հետ, ինչպես մեր Տերն այդ արեց Ղուկաս 17:36-30 համարներում, և խոսում է «ուրիշ մարմնի» մասին, որի հետևից գնացին Աստծո որդիները (Հուդա հի. 5-7): Նաև նրանց մասին է խոսում Պետրոս առաքյալը 2 Պետր. 2:4 համարում՝ ասելով, որ նրանք խավարի կապանքով պահվում են դատաստանի համար: Հիսուսը հատուկ դիմեց նրանց, երբ գնաց քարոզելու բանտում գտնվող հոգիներին (1 Պետր. 3:18-22): Նրանք հակառակվեցին Հոգուն, անհնազանդ եղան, խառնվեցին «ուրիշ մարմնի հետ»՝ Կայենի ցեղից եղող մարդկանց աղջիկների հետ: Այդ խառնուրդից առաջացավ մի տարօրինակ տեսակ, որը չկար Աստծո սկզբնական ստեղծագործության մեջ: Գիտնականները չկարողացան որևէ պատասխան գտնել իրենց գտած տարօրինակ կմախքների վերաբերյալ, և դա նրանց մղեց հիմնելու էվոլյուցիայի ոչ աստվածաշնչյան տեսությունը: Հիմա նույնպես Աստված Իր զավակներից պահանջում է հստակ բաժանում, մինչդեռ սատանան միշտ ավելի է խրախուսում խառնուրդը: Աստծո այն զավակները, որոնք չեն լսում Աստծո կողմից ուղարկված մարգարեի պատգամը, պետք է նույնպես կրեն դրա հետևանքները:

Արուսյակի հետ ընկած երկնային հրեշտակները գտնվում են երկնավորների մեջ (Եփես. 6:12) և դեռևս խավարի կապանքով կապված չեն: Մինչև հիմա ոչ մի երկնային հրեշտակ երկրի վրա չի ամուսնացել (Մատթ. 22:30): Մեզ լուսավորելու համար Պողոսը գրում է. «Ամեն մարմին միևնույն մարմինը չէ. ուրիշ է մարդկանց մարմինը, ուրիշ է անասունների մարմինը, ուրիշ է ձկների մարմինը, ուրիշ է թռչունների մարմինը: Երկնային մարմիններ էլ կան, երկրային մարմիններ էլ, բայց ուրիշ է երկնայինների փառքը, ուրիշ է երկրայիններիը» (1 Կորնթ. 15:39,40):

Ձրհեղեղի ժամանակ ողջ մարդկությունը կորսվեց: Ադամի և Սեթի մաքուր ճյուղից մնացին միայն Նոյը, նրա կինը, նրա երեք որդիներն

ու հարսները: Այն ժամանակվանից ողջ մարդկությունը սերուն է միայն Նոյի երեք որդիներից, նրանց միջոցով՝ Ադամից (Ծննդ.9:18,19, Գործք 17:26): Այն ժամանակվանից երկու սերունդները գոյություն ունեն միայն հոգևոր ուղորտում: Հովհաննես առաքյալը գրում է. «Սրանով են հայտնի Աստծո որդիները և սատանայի որդիները: *Ամեն ոք, ով արդարություն չի անում, Աստծուց չէ, և ոչ էլ նա, ով իր եղբորը չի սիրում*» (1 Հովհ.3:10): Տեր Հիսուսը հստակ ասաց կրոնական առաջնորդներին, որոնք հակառակ էին իրեն. «Դուք ձեր սատանա հորից եք և ուզում եք ձեր հոր ցանկությունները կատարել» (Հովհ.8:44): Աստծո Սերմը ցանող Սերմնացանը Մարդու Որդին է, իսկ սերմերը թագավորության զավակներն են: Թշնամին չարն է, որը նույնպես ցանեց իր սերմերը, և դրանցից դուրս եկան իր զավակները: Այդպես է գրված, և իրոք այդպես է. «Բարի սերմը ցանողը Մարդու Որդին է: Արտն աշխարհն է, բարի սերմը նրանք են, որ արքայության որդիներն են, իսկ որոմները չարի որդիներն են» (Մատթ.13:37,38):

Մի կողմից տեսնում ենք Կայենին, որ թշնամու բնական սերունդն է, այնուհետև Քրիստոսին, որ Աստվածային Սերունդն է: Այնտեղ կա Եվան, որ չի հավատում, անհնազանդ է, և նրա հետ է սատանան խոսում օձի միջոցով, այստեղ կա Մարիամը, որը հավատում է, հնազանդ է, և նրա հետ է խոսում Աստված Գաբրիել հրեշտակի միջոցով: Այնտեղ սատանայի ներգործությունն է բնական ստեղծագործության սկզբում, այստեղ աստվածային ներգործությունն է գերբնական ստեղծագործության սկզբում Հոգու միջոցով: Երկուսն էլ աշխարհ եկան ծնունդի միջոցով և հայտնվեցին մարմնի մեջ:

Բուրդին հայտնի է, որ Քրիստոսը՝ Աստծո Որդին, խոստացված Սերունդն է (Գաղատ. 3:16-20 և այլ համարներ), որ եկավ կնոջ՝ Մարիամի միջոցով (Գաղատ. 4:4-7): Նա Իր վրա վերցրեց անեծքը (Գաղատ. 3:13,14), հաղթեց մահին, հանեց մահվան խայթը (1 Կորնթ. 15:55,56), ջախջախեց առաջին օձի գլուխը, սպանեց թշնամությունը (Եփես. 2:16) և մեզ հաշտեցրեց Աստծո հետ (2 Կորնթ. 5:19), և դա է Ավետարանի հիմնական քարոզչությունը: «Արդ, ուրեմն, ինչպես որ մեկի հանցանքով բոլոր մարդկանց վրա դատապարտություն եկավ, այնպես էլ մեկի արդարությամբ բոլոր մարդկանց վրա կյանքի արդարություն է գալիս» (Հռոմ.5:18): Աստծուց բաժանված ամեն ինչ սխալ է ընթանում, Աստծո հետ հաշտված՝ ամեն բան վերականգնվում է: Սա է Աստծո հրաշալի և ուրախ պատգամը, Բարի Լուրը, որը փրկություն է բերում ողջ աշխարհին:

## ՆՈՐԻՑ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԱՎ ԿԼԻՆԻ

Սատանան չի կարող ո՛չ ստեղծել, ո՛չ ծնել. նա խաբեության միջոցով սողոսկեց մարդկության մեջ: Քանի որ նա այդ արեց կենդանու միջոցով, Աստված ընդունեց գառնուկին, որը Աբելը մատուցեց որպես փոխարինող զոհ: Հետագայում, օրենքը տալու ժամանակ Նա պատվիրեց, որ միայն մաքուր կենդանիները մատուցվեն որպես զոհ: Վերջում Փրկիչը, որպես Աստծո Գառ, Իր մահվան միջոցով մատուցեց վերջնական զոհը: Թշնամին Աստծուց հեռացրել էր ողջ մարդկային ցեղը, տարել էր նրան մահվան և բոլոր ստեղծվածներին վերցրել էր իր տիրապետության տակ: Ահա թե ինչու Աստված, որը կարող էր թե՛ ստեղծել, թե՛ ծնել, կարող էր տալ թե՛ բնական, թե՛ հոգևոր կյանք, պետք է մարդկության մեջ մտներ Իր Միածին Որդու միջոցով՝ մարդկությանը մեղքից փրկելու համար: Քանի որ օրինագանցությունը տեղի էր ունեցել մսից ու արյունից մարմնի մեջ, իսկ մարմնի կյանքը արյան մեջ է (Ղևտ.17:11 ), փառքի Տերը պետք է մարդ դառնար և մսից ու արյունից Իր Մարմնի մեջ վճարեր մեր փրկագինը Իր կյանքով: «Արդ որովհետև մանուկներն արյան ու մարմնի մասնակից եղան, Ինքն էլ մինևույն կերպով մասնակից եղավ նրանց, որպեսզի Իր մահով խափանի մահվան իշխանությունն ունեցողին, այսինքն՝ սատանային, և ազատի նրանց, ովքեր մահվան ահից իրենց ամբողջ կյանքում ծառայության մեջ էին բռնված» (Եբր.2:14,15):

«... և առանց արյուն թափելու թողություն չի լինում» (Եբր.9:22):

Քրիստոսի մեջ կատարվեց այս խոսքը. «Դու Իմ Որդին ես, ես այսօր ծնեցի քեզ» (Սաղմ.2:7, Մատթ.1:18-25, Դուկ. 1:26-38), ինչպես նաև Ես.7:14 և 9:5,6 համարներում գրվածները: Նրա միջոցով Աստծո բոլոր որդիներն ու դուստրերը փրկվեցին մեղքի անկումից, ազատվեցին սատանայի իշխանությունից և ստացան իրենց որդեգրությունը (Գաղատ. 4:5-7):

Իրոք սկզբից ի վեր եղել են երկու սերունդ, երկու ճյուղ, որոնք երկուսն էլ կրոնական են: Երկուսն էլ ողջ հոգով հավատում են Աստծուն, երկուսն էլ զոհեր են բերում, երկուսն էլ աղոթում են, մանություններ ունեն, մինչդեռ արմատապես տարբերվում են իրարից: Տարբերությունը սա է՝ Աստծո ճշմարիտ զավակները, Աբելի մամն կապ ունեն փրկագնման հետ, հետևաբար Աստծո հետ: Աբելը գառնուկ զոհաբերեց, որովհետև հայտնություն էր ստացել, թե ինչպես կարող էր հաճելի լինել Աստծուն: Աստծո ճշմարիտ զավակները ճաշակում են իրենց փրկագնումը (1 Պետր. 1:18-21), ինչպես նաև հավատքով արդարացումը (Հռոմ. 5:1) Գողգոթայի խաչի վրա

մեկընդմիջտ մատուցված զոհի միջոցով: Կեղծ զավակները զոհում են իրենց ողջ կյանքը իրենց սեփական կրոնական համոզմունքներին, բայց երբեք ուղղակի հաղորդակցություն չեն ունենում միակ Աստծո հետ, միակ Միջնորդի՝ Հիսուս Քրիստոսի միջոցով (1 Տիմ.2:5): Նրանք փորձում են դրան հասնել կրոնական ճանապարհով, ինչպես իրենց սովորեցրել են: Այն փաստը, որ իրենք կորսված են, ծածկված է իրենց համար, ինչպես նաև յան փաստը, որ փրկության կարիք ունեն: Նա, որ քարոզում է փրկության ծրագրի վերաբերյալ, պետք է նաև համոզիչ կերպով ներկայացնի այն պատճառը, որի համար փրկությունն ու հաշտեցումը անհրաժեշտ են: Մենք պետք է գտնենք չարիքի ակունքը և ցույց տանք փրկության ճանապարհը: «Եվ ինչպես Մովսեսն անապատում օձին բարձրացրեց, այնպես էլ Մարդու Որդին պետք է բարձրանա: Որպեսզի ամեն Նրան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. 3:14,15):

Բացահայտված Խոսքի Լույսը, որում գրված է փրկության ողջ ծրագիրը, փայլում է նախկինում երբեք չեղած պարզությամբ: Փրկության պատմությունը կարմիր թելի պես անցնում է չարիքի պատմության միջով մինչև Աստծո վերջնական հաղթանակը մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով:



## ԱՍՏՎԱԾ ՄԻՆՏ ԳՈՐԾՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՔԻ ՀԱՄԱԶԱՅՆ

Հենց հիմա խիստ անհրաժեշտ է, որ մեր միտքը բացվի ողջ Սուրբ Գիրքը հասկանալու համար. ոչ թե պետք է մարդկային ձևով մեկնել Սուրբ Գիրքը, այլ տեսնել Սուրբ Գրքում գրվածի իրականացումը: Այսօր շատ տեղերում կատարվում է մեր Տեր Հիսուսի ասածը. «Քննեցեք գրքերը, որոնցով դուք ուզում եք հավիտենական կյանք ունենալ, և նրանք են, որ վկայում են իմ մասին: Բայց դուք չեք ուզում ինձ մոտ գալ, որ կյանք ունենաք» (Հովհ. 5:39,40): Առաջին հերթին պետք է անձնական հարաբերություն ունենալ Հիսուս Քրիստոսի հետ. միայն այդպես կհասկանանք խոսքը: Հակառակ դեպքում ժամանակ ենք վատնում աստվածաբանական փիլիսոփայության մեջ (Կողոս. 2:8):

Նրան պետք է մենք գտնենք, յուրաքանչյուրս նախ պետք է հանդիպենք Նրան: Միայն Սուրբ Գիրքն ուսումնասիրելը բավարար չէ: Բնությանը բոլոր մարդիկ իրենց մտքերում շրջանցում են Աստծուն: «Որովհետև իմ խորհուրդները ձեր խորհուրդները չեն, և ձեր ճանապարհները իմ ճանապարհները չեն...» (Ես.55:8): Դրա համար Աստված մեզ հորդորում է թողնել մեր սեփական մտքերն ու ճանապարհները, որպեսզի Նա մեզ համար բացահայտի Իր խոսքը և ցույց տա Իր ճանապարհները:

Մինչև հիմա թշնամին իրոք աղավաղել է Աստծո ողջ խոսքը մարդկանց գլխում և բերանում: Պետրոսը գրում է, որ արդեն իր ապրած ժամանակներում անուսումները Պողոսի նամակները և Սուրբ Գրքերը ծռում էին իրենց իսկ կորստյան համար (2 Պետր. 3:16): Հակառակորդը Տիրոջ Եկեղեցում ոչինչ չի թողել այնպես, ինչպես եղել է սկզբում: Բոլոր վարդապետություններն ու կիրառությունները փոփոխվել են: Առաջացել է կործանարար խառնուրդ, որը ծածկված է «բաբելոնյան ծածկոցով»: Կայսրության եկեղեցին ստեղծվեց որպես առաջին քրիստոնեական կազմակերպություն, որում ոչինչ չի համապատասխանում սկզբնական քրիստոնեությանը: Դա բոլորովին այլ եկեղեցի է, որը նման չէ Հիսուս Քրիստոսի վրա հիմնված նորկտակարանյան եկեղեցուն: Ինչպես բնական ստեղծագործության սկզբում, այնպես էլ Քրիստոսի նորկտակարանյան եկեղեցու սկզբում թշնամին ուրիշ իմաստ տվեց խոսքին և մինչև հիմա ողջ քրիստոնեական աշխարհը տանում է հոգևոր անկման: Մենք բոլորս ծնվել ենք կրոնական աղավաղումների մեջ: Մոլորությունը չսկսվեց Հեռավոր Արևելքի կրոններում, որովհետև նրանք Քրիստոսով Աստծո

անձնական հայտնություն երբեք չեն ստացել և Աստվածաշունչ չունեն: Մոլորությունը պետք է փնտրել և գտնել «մերձավոր Արևմուտքի» կրոններում:

Ահա թե ինչու երբ Աստված ինչ-որ բան է կատարում իր խոսքի համաձայն, դա մարդկանց կողմից դիտվում է որպես խանգարում: Մեր Տիրոջ ծառայությունը ամենամեծ խանգարումն էր այն ժամանակ հաստատված կրոնին պատկանող կրոնական գործիչների համար: Նույնը վերաբերում է սկզբնական քրիստոնեության առաքյալների ծառայությանը: Ռեֆորմացիայի գործիչները և արթնության քարոզիչները իրենց ժամանակ համարվել են «խռովություն բերողներ» և «եկեղեցու անկիրթ հերետիկոսներ», որոնց անիծել և հալածել են:

Ինչ վերաբերում է Հին Կտակարանի մարգարեներին, Աստված նրանց միջոցով է խոսել հայրերի հետ, այնուհետև Հիսուս Քրիստոսի միջոցով և Նրանով է տվել պատասխանը (Եբր. 1:1-3): «Օրենքն ու մարգարեները մինչև Հովհաննեսն են. նրանից հետո քարոզվում է Աստծո արքայությունը... » (Ղուկաս 16:16):

Տերն արել է այս խոստումը. «Դրա համար ահա ես ձեզ մոտ մարգարեներ, իմաստուններ ու դպիրներ կուղարկեմ ...» (Մատթ.23:34): Պողոսը հաստատում է, որ դա իրոք այդպես է: «Աստված ոմանց եկեղեցուն դրեց, նախ՝ առաքյալներին, երկրորդ՝ մարգարեներին, երրորդ՝ ուսուցանողներին, հետո՝ հրաշագործ գործություններ, հետո՝ բժշկությունների պարզներ...» (1 Կորնթ.12:27,28, Եփես. 4:11 և այլ համարներ): Գործք առաքելոց գիրքը և նորկտակարանյան ուղերձները խոսում են առաքելական և մարգարեական ծառայության մասին, որպես Նոր Կտակարանի Եկեղեցու հաստատուն և բաղկացուցիչ մասի: Նաև ճշմարիտ է այն փաստը, որ Աստված ուզում էր ուղարկել Եղիայի մման մի մարգարեի, որը առանձնահատուկ առաջադրանք է ունենալու (Մաղաք. 4:5): Մենք պետք է դա ընդունենք մեր մտքում և հավատանք մեր ողջ սրտով, որովհետև դա մեր ժամանակների Եկեղեցուն տրված հիմնական խոստումներից մեկն է: Ոչ մի իմաստ չունի մտածելը, քարոզելը, երգելը առանց ուշադրություն դարձնելու Աստծուն, ինչպես դա կատարվեց այն ժամանակ հաստատված հրեական համայնքում, երբ Աստված իրականացնում էր պատմությունը, և հայտնվեց Հովհաննես Մկրտիչը, ներկայացրեց Մեսիային: Մենք պետք է հավատանք այնպես, ինչպես Սուրբ Գիրքն է ասում և հարգենք յուրաքանչյուր խոստում, որպեսզի մասնակցենք այդ խոստման իրականացմանը,

որը լի է օրհնություններով: Աստծո ճշմարիտ զավակները խոստումի զավակներ են (Գաղատ. 4:28), որոնք ընդունում են խոստումի Խոսքը (Հռոմ. 9:8,9) և լցվում են խոստացված Հոգով (Գործք 2:33): Միայն ճշմարտության Խոսքը ընդունելուց հետո է կատարվում խոստացված Հոգով կնքումը (Եփես. 1:13, 2 Կորնթ. 1:20-22):

Բոլոր ժամանակներում Աստված Իր Թագավորությունում օգտագործում է մարդկանց, որոնք քարոզում են ճշմարտությունը: Բոլորին հայտնի է, որ Եկեղեցու պատմության ընթացքում նորից ու նորից հանդես են եկել Աստծո մարդիկ: Մենք բավարար չափով տեղեկություններ ունենք Ռեֆորմացիայից հետո տեղի ունեցած բոլոր արթնությունների վերաբերյալ, ինչպես նաև հոգեգալստական արթնության վերաբերյալ, որը տեղի ունեցավ 1906 թվականին: 20-րդ դարի առաջին կեսերին հոգեգալստական եկեղեցին մի փոքրիկ, մերժված փոքրամասնություն էր, մի մեկուսի խումբ, որը չէր ընդունվում պաշտոնական եկեղեցիների կողմից: Միայն երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հոգեգալստական շարժումը դարձավ ամենաարագ աճող ուղղությունը: Եվ Վատիկանի երկրորդ տիեզերաժողովից հետո (1962-1965), որին մասնակցեց նրա համաշխարհային ներկայացուցիչ Դեյվիդ Դյուպլեսսին՝ «պարոն Պենտեկոստեն», այդ շարժումը ճանաչվեց Հռոմի եկեղեցու և մյուս քրիստոնեական եկեղեցիների կողմից:

Մենք այժմ կանգնած ենք այս հարցի առաջ. ու՞մ Աստված օգտագործեց որպես գործիք՝ սկսելու համար երկրի վրա երբևէ տեղի ունեցած փրկության և բժշկության ամենագորեղ արթնությունը: Շատերը ճանաչում են միայն նրանց, ովքեր հետո հայտնի դարձան: Այնուամենայնիվ ինչպիսի՞ն էր սկիզբը 1946 թվականին, և ո՞րն էր դրա սկզբնական նպատակը: Եթե նույնիսկ հիմա ամեն բան շուռ է եկել, ինչպես միշտ կատարվում է հրաշալի սկզբից հետո, չնայած բոլոր մոլորություններին, այն, ինչ ճշմարիտ է, շարունակում է մնալ: Աստված շարունակում է այն, ինչ հիմնել է սկզբից ի վեր: Ավետարանների չորս հեղինակները և առաքյալները շեշտը դնում են սկզբի վրա, այն բաների վրա, ինչ իրենք են տեսել և լսել Կենաց Բանի մասին, ինչին ականատես են եղել և լսել են իրենց ականջներով (Գործք 1:1-3, 2 Պետր. 1:16-21, 1 Հովհ. 1:1-4 և այլ համարներ): Ո՞վ է մեր ժամանակներում իր աչքերով տեսել և իր ականջներով լսել այն, ինչ Աստված արել է վերջին արթնության սկզբում: Ու՞մ բերանում է Նա դրել Իր Խոսքը: Ու՞մ է Նա Ինքն ուղարկել: Բոլոր մյուսները, որոնք հայտնվեցին ավելի ուշ, հնարավոր է, որ արդեն շեղվել են սկզբնական

Պատգամից, կամ շարունակել են պահել իրենց ավանդական ուսմուքները:

Ամենակարևոր հարցը պետք է լինի սա. ի՞նչ է ասում Սուրբ Գիրքը և ի՞նչ խոստում կա դրա մեջ: Նոր Կտակարանում փրկության պատմության իրականացումը սկսվում է խոստացված նախակարապետի ծառայությամբ (Մաղաք. 3:1, Ես. 40:3): Բոլոր ավետարանները վկայակոչում են այս երկու սուրբգրային հատվածները, իսկ Մարկոսն այդ անում է իր ավետարանի առաջին երեք համարներում: Նոր Կտակարանի Աստծո մարդիկ միշտ անդրադարձել են մարգարեների խոսքին և ամեն բան դասավորել են ըստ Սուրբ Գրքի: Նոր Կտակարանում Հին Կտակարանից 845 մեջբերում կա: Այն, ինչ հիմա է կատարվում Աստծո Թագավորության մեջ, շատ կարևոր է դնել աստվածաշնչյան հիմքի վրա, որովհետև Աստված ամեն բան անում է Իր խոսքի համաձայն: Ճշմարիտ հավատքը խարխսված է այն խոստումների վրա, որոնք հասնում են իրենց իրականացմանը:

Գրված է Ամոս 3:7 համարում. «Որովհետև Տեր Եհովան ոչ մի բան չի անի, եթե չհայտնի Իր խորհուրդը Իր ծառաներին՝ մարգարեներին»: Ամեն անգամ, երբ պետք է ինչ-որ շատ կարևոր բան կատարվեր Իր ժողովրդի համար, Աստված միշտ ուղարկում էր ճշմարիտ մարգարեի, որը պատգամ ուներ: Դրա համար Նա ուղարկել էր մի Նոյ, մի Աբրահամ, մի Մովսես, մի Եղիա և ուրիշներ: Նոր Կտակարանի սկզբում Նա ուղարկեց Հովհաննես Մկրտչին՝ խոստացված Մեսիայի ճանապարհը հարթելու համար: Նա ընտրեց Պետրոսին որպես առաջին ժամի մարդու և նրան տվեց երկնքի թագավորության բանալիները, նաև նրան օժտեց աստվածային հեղինակությամբ: Նոր Ուխտի Եկեղեցու համար Նա նշանակեց Պողոսին՝ սովորեցնելու հատուկ առաջադրանքով: Մյուս կողմից Հովհաննես առաքյալը Պատմոս կղզում կարողացավ տեսիլքով տեսնել ողջ Հայտնությունը և վերջին ժամանակները, որոնք մեզ համար նկարագրված են այդ գրքի 22 գլուխներում: Աստված միշտ ամեն բան արել է կատարյալ կարգով, իսկ թշնամին ամեն ջանք արել է խախտելու համար աստվածային կարգը:

## ՀՍՏԱԿ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ

Այն ամենը, ինչ Աստված խոստացել է Իր Խոսքում, դրանք «խոստումներ» են, եթե Նա այլ բաների մասին է խոսում, օրինակ՝ պատերազմների, երկրաշարժերի, ամեն տեսակ բնական աղետների, դրանք «կանխատումներ» են: Եղիայի նման ճշմարիտ մարգարեն խոստացվել է, սուտ մարգարեների և սուտ քրիստոսների մասին հաղորդվել է: Մենք հիմա ապրում ենք շնորհքի ժամանակի վերջում, և իրավունք, նույնիսկ պարտականություն ունենք ճաշակելու այն, ինչ Աստված խոստացել է և իմանալու, թե ինչ է Նա անում:

Նայենք Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստների հետ կապված երկու խոստումները. Մաղաք. 3:1-ում գրվածը կատարվեց Հովհաննես Մկրտչի ծառայության մեջ: Տեր Հիսուսն Ինքը շատ պարզ ասում է. «Բայց ի՞նչ տեսնելու համար դուրս ելաք, մի մարգարե՞. այո՛, ասում են ձեզ, մարգարեից էլ ավելին: Որովհետև սա նա է, որի համար գրված է. «Ահա ես իմ հրեշտակին ուղարկում եմ Քո առջևից, որ Քո առաջ Քո ճանապարհը պատրաստի» (Մատթ.11:9,10): Երկրորդ հերթին մենք ունենք այս խոստումը. «Ահա ես կուղարկեմ ձեզ համար Եղիա մարգարեն, Տիրոջ մեծ և ահեղ օրը գալուց առաջ» (Մաղաք.4:5,6): Մաղաք. 4:5 համարում գրված մարգարեությունը հաստատվել է Տեր Հիսուսի կողմից Մարկ.9:12 և Մատթ.7:11 համարներում որպես գալիքում կատարվելիք իրադարձություն. «Իրոք, առաջ Եղիան է գալու և ամեն ինչ վերահաստատելու է» (Մատթ.17:11):

Հովհաննեսը հայտնվեց, երբ փրկության օրը սկսվեց: Վերջին մարգարեն հայտնվում է փրկության օրը վերջանալուց առաջ, երբ դեռ արևը իր լույսը չի կորցրել, և լուսինը արյան չի փոխվել (Հովել 3:4, Գործք2:20) և չի սկսվել Տիրոջ ահեղ օրը (Ես. 13:6-16, Հովել 3-րդ գլուխ, Սոփոն. 1:14-18, Գործք 2:19-21, 1 Թես. 5:2, 2 Պետր.3:10, Հայտն. 6:17,18): Սա զուտ ճշմարտություն է համաձայն «ԱՅՄՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքի:

Ամեն մարդ, որ մի քիչ գաղափար ունի Աստծո փրկության ծրագրի վերաբերյալ, գիտի, որ շնորհքի ժամանակը «փրկության օրն է», ինչպես ազդարարված է Հին Կտակարանում (Ես.42:6, 49:6-8): Դա այն օրն է, որ Տերը ստեղծեց (Սաղմ. 118:24), այն օրը, որ Աբրահամը տեսավ և ուրախացավ (Հովհ.8:5): «Այն օրը դուք կիմանաք, որ ես իմ Հոր մեջ եմ, և դուք՝ իմ մեջ, ես էլ՝ ձեր մեջ» (Հովհ.14:20):

Հովհաննես Մկրտչի վերաբերյալ գրված է. «Աստծո կողմից մի մարդ ուղարկվեց... Սա վկայության համար եկավ, որ այն Լույսի

համար վկայի, որ բոլորը նրա միջոցով հավատան» (Հովհ.1:7): Ոչ թե մի ամբողջ խումբ ավետարանիչների միջոցով պետք է մարդիկ գային ճշմարիտ հավատքին, այլ մեկ մարդու ծառայության և պատգամի միջոցով, որին Աստված ուղարկել է Իր խոստումի համաձայն: Բոլոր ժամանակներում այդպես է եղել: Այդպես է նաև հիմա: Աստված չի փոխում ո՛չ Իր Խոսքը, ո՛չ էլ Իր գործելակերպը:

Հովհ.1:19 համարից սկսված ասվում է, որ մարդիկ ուղարկվեցին Հովհաննես Մկրտչի մոտ՝ նրան անձամբ հարցնելու, թե ով է ինքը: «Նա խոստովանեց և չուրացավ, խոստովանեց, թե՝ «Ես Քրիստոսը չեմ»: Եվ նրան հարցրին. «Հապա ո՞վ, Եղիա՞ն ես»: Նա ասաց. «Ոչ»: «Մարգարե՞ն ես դու»: Նա պատասխանեց. «Ոչ»: Արդ, նրան ասացին. «Հապա ո՞վ ես, որ մեզ ուղարկողներին պատասխանենք. քո մասին ի՞նչ են ասում»: Ասաց. «Ես անապատում կանչողի ձայնն եմ՝ «Տիրոջ ճանապարհն ուղղեցեք», ինչպես որ Եսայիա մարգարեն ասաց»: Ուղարկվածները փարիսեցիներից էին: Նրան հարցրին ու ասացին. «Հապա ինչու՞ ես մկրտում, եթե դու ո՛չ Քրիստոսն ես, ո՛չ Եղիան, ո՛չ էլ մարգարեն» (հհ. 20-25): Այսպես, նա ոչ Եղիան էր, ոչ Քրիստոսը, ոչ էլ մարգարեն ըստ 2 Օրինաց 18:15-19 համարների: Դրանով նա պարզ և հասկանալի կերպով պատասխանեց Եղիայի վերաբերյալ տրված հարցին, ինչպես նաև այն հարցին, թե արդյոք ինքն է Քրիստոսը կամ մարգարեն: Քանի որ նրա ծառայությունը մեծ նշանակություն ուներ փրկության պատմության համար, նա գիտեր աստվածաշնչյան այն հատվածը, որը վերաբերում էր իրեն:

## ՃԻՇՏ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ

Այժմ հարց է առաջանում՝ ինչու՞ Չիսուսը Չովհաննեսին Եղիա անվանեց, երբ Չովհաննեսն ինքը հստակ կերպով ասաց «ոչ» և իր պատասխանը հիմնավորեց սուրբգրային ձևով: Այստեղ նորից ենք տեսնում Չին Կտակարանի մարգարեության բնորոշ հատկությունը. հաճախ որոշ իրադարձություններ, որոնց իրականացման միջև երկու հազար տարվա տարբերություն կա, գրված են նույն համարում: Գրեթե բոլոր խոստումներում Քրիստոսի առաջին և երկրորդ գալուստներին վերաբերող իրադարձությունները գրված են նույն համատեքստում:

Երբ Գաբրիել հրեշտակը հայտնեց Չովհաննես Սկրտչի ծնունդը նրա հայր Զաքարիային, նա վկայակոչեց Եղիայի գալստի առաջին մասը, որի մասին գրված է Մաղաք.4:6 համարում. «Ինքն էլ Եղիայի հոգով ու զորությամբ նրա առաջից կգա, որպեսզի հայրերի սրտերը որդիներին դարձնի, անհնազանդներին արդարների իմաստության, որպեսզի Տիրոջ համար պատրաստ ժողովուրդ կազմի» (Ղուկաս 1:17): Դրա հետ կապված Չիսուսն ասում է Մատթ.11:14 համարում. «Նա Եղիան է, որ գալու էր»: Երկրորդ մասը՝ «...և որդիների սիրտը հայրերին», Գաբրիել հրեշտակը նույնիսկ չի հիշատակում, որովհետև այդ խոստումը հիմա է իրականանում: Աստված շատ կերպերով խոսել էր հայրերի հետ մարգարեների միջոցով, բայց եկել էր ժամանակը դարձնելու Չին Կտակարանի հայրերի սիրտը Նոր Կտակարանի զավակներին: Այսպես Պողոս առաքյալը սովորեցրել է. «Եվ մենք ձեզ ավետարանում ենք այն խոստումը, որ հայրերին տրվել էր: *Աստված այն կատարեց* մեր մեջ, որ նրանց որդիներն ենք...» (Գործք 13:32,33): Նա, ով կարծում է, որ Մաղաք. 4:6 համարը պետք է հասկանալ բառացիորեն (ինչպես այդ անում են խարիզմատիկ շարժման որոշ խմբերում և ընտանեկան քաղաքականություն են վարում՝ հաշտեցնելով հայրերին՝ որդիների և որդիներին հայրերի հետ), չի հասկացել այս մարգարեության բնույթը, որը կապված է փրկության պատմության հետ:

Չետևյալ օրինակները ցույց են տալիս, որ աստվածաշնչյան մարգարեությունները չպետք է կամավոր կերպով մեկնաբանվեն, այլ պետք է դիտվեն փրկության պատմության հետ կապված համատեքստում և դասավորվեն իրենց իրագործման համաձայն:

Ես.35:1-7 համարներում նկարագրված են այն մանրամասները, որոնք տեղի են ունեցել մեր Տիրոջ առաջին գասլտյան ժամանակ, ինչպես նաև այն մանրամասները, որոնք կատարվելու են Նրա երկրորդ գալստյան ժամանակ: 4-րդ համարում ասվում է. «Ասե՛ք

թուլասիրտներին. «Ուժովցեք, մի վախենաք, ահա ձեր Աստվածը գալիս է վրեժ առնելու, Աստծո հատուցումով է գալիս Նա և Նա ձեզ փրկելու է» (Ես.35:4): Տեր Աստված Ինքը եկավ, փրկություն տվեց, և ինչպես հաղորդվել էր 5-6 համարներում, կույրերի աչքերը բացվեցին, խուլերի ականջները լսեցին, անդամալույծները քայլեցին, համբերը խոսեցին: Երկրորդ մասը, որը վերաբերում է Աստծո վրեժխնդրությանն ու հատուցմանը, թեև գրված է նույն համարում, դեռևս չի իրականացել և գալիքում է:

Ես. 61-րդ գլխում միևնույն համարում խոսվում է Աստծո Օծյալի մասին, որը հրատարակելու է Տիրոջ համար ընդունելի տարին և մեր Աստծո վրեժխնդրության օրը: Ըստ Ղուկաս 4:19 համարի մեր Տեր Յիսուսը ժողովարանում կարդաց Եսայի մարգարեի գրքից, բայց կանգ առավ այս խոսքերից հետո՝ «Տիրոջ ընդունելի տարին քարոզելու...», կանգ առավ համարի մեջտեղում և հանձնեց գիրքը: Նա չկարդաց երկրորդ մասը, որը վերաբերում էր վրեժխնդրության օրվան, որը դեռ գալիքում էր, որովհետև այնժամ չէր կարող ասել. «Այս գրքում գրվածն այսօր կատարվեց, որ ձեր ականջներով լսեցիք» (հ. 21):

Հովել 2-րդ գլխում գտնում ենք շնորհքի ժամանակաշրջանում Սուրբ Հոգու հեղման մասին, և նույն նախադասության մեջ խոսվում է նաև Տիրոջ մեծ ու ահեղ օրվա մասին: «Եվ պիտի լինի, որ ամեն ով որ կանչի Տիրոջ անունը, կփրկվի, որովհետև Սիոն սարի վրա և Երուսաղեմում փրկություն կլինի Տիրոջ ասածի պես...» (Հովել 2:32): Պենտեկոստի օրվա իր քարոզում Պետրոսը մեջբերում է այս խոսքերը. «Եվ այնպես կլինի, որ ամեն ոք, ով Տիրոջ անունը կանչվի, կփրկվի» (Գործք 2:21): Նա նույնպես կանգ է առնում համարի մեջտեղում, որովհետև երկրորդ մասը, որը վերաբերում էր Երուսաղեմում և Սիոն սարի վրա փրկությանը, չէր տեղի ունենալու ազգերի համար շնորհքի ժամանակաշրջանում, այլ Իսրայելին վերաբերող ժամանակաշրջանում (Գործք 15:13-15, Հռոմ.11: 25-29 և այլ համարներ):

Հին Կտակարանի մարգարեները խոսել են Սուրբ Հոգու ներշնչմանը՝ հաղորդելով, թե ինչ է կատարվելու Աստծո փրկության ծրագրի համաձայն: Ճշմարիտ բաժանումն ու բաշխումը, ինչպես տեսնում ենք, թողնվել է Նոր Ուխտի Աստծո սպասավորներին, որովհետև նրանց է տրված առաջադրանքը «ճիշտ կերպով բաժանելու» Սուրբ Գրքում գրվածները: Աստվածաշնչյան մարգարեությունը չպետք



է մեկնաբանել, այլ դիտել դրա իրականացման մեջ և դասավորել համապատասխան կերպով:

Նախակարապետի առաջադրանքն էր կամուրջ գցել Հին Կտակարանից դեպի Նոր Կտակարան և իրականացնել Եղիայի խոստման առաջին մասը (Մաղաք. 4:6): Երբ Տեր Հիսուսը Իր աշակերտներից երեքի հետ բարձրացավ այլակերպության լեռը, այնտեղ հայտնվեցին նաև Մովսեսն ու Եղիան (Մատթ. 17:1-12, Մարկ.9:2-13, Ղուկ. 9:28-36): Թեև այս երկու մեծ մարգարեները ներկա էին, աշակերտները հարցրին միայն մեկի՝ Եղիայի մասին (Մատթ. 17:10): Ինչու՞: Որպեսզի անձամբ Տիրոջից ստանանք պատասխանը. «Հիսուսն էլ պատասխան տվեց նրանց ու ասաց. «Իրոք, առաջ Եղիան է գալու և ամեն ինչ վերահաստատելու է» (հ.11): Պարզ է, որ դա վերաբերում է ապագային: Ինչ վերաբերում է Հովհաննես Սկրտչին, Տերը շարունակում է ասելով. «Բայց ես ասում եմ ձեզ, որ Եղիան արդեն եկել է, և Նրան չճանաչեցին, այլ ինչ որ ուզեցին, նրան արեցին» (հ.12):

Այժմ Աստծո գավակների սրտերը պետք է վերադառնան իրենց հայրերի հավատքին, վերադառնան դեպի սկիզբ: Ոչ թե եկեղեցական հայրերին, ոչ էլ ընտանեկան հաշտեցմանը, այլ Քրիստոսի հանդեպ մեր առաքելական հայրերի հավատքին՝ ուսմունքով և գործերով: Այն ժամանակ Տերը նրանց պատասխան տվեց, հիմա մեզ է պատասխանում: Ոչ մի արժեք չունեն փաստարկումները, տրամաբանական առարկությունները, այլ միայն այն, ինչ մեր Տերն է ասել և այն, ինչ գրվել է: Այժմ հարցն այն է, որ ամեն ինչ պետք է վերադարձվի սկզբնական վիճակին փրկության ծրագրի համաձայն: Դա է Եկեղեցուն տրված խոստումը Հիսուս Քրիստոսի վերադարձից առաջ, ինչպես նաև ժամի պատվիրանը: Այդպես է գրված, այդպես էլ կատարվում է:

Այժմ՝ Քրիստոսի երկրորդ գալստից առաջ ամեն բան պետք է նորից կարգավորվի Աստվածաշնչի համաձայն, մարգարեական ծառայության միջոցով: Այժմ Աստված իրականացնում է փրկության պատմությունը, և Եղիային ուղարկելու Նրա խոստումը «այդ» է և «ամեն» և այդ խոստումը նույնպես իրականացել է: Բայց ինչպես նախկինում Հովհաննես Սկրտչի հանդեպ, նրա հանդեպ էլ վարվեցին այնպես, ինչպես ուզեցին: Երանի նրանց, ովքեր իսկապես հավատում են Աստծուն, այսինքն՝ այնպես, «ինչպես Սուրբ Գիրքն է ասում», որովհետև միայն նրանց համար կբացահայտվի այդ: Աստված չի կարող խոսել այն մարդու հետ, որը չի հավատում այն բանին, ինչ

Աստված է ասել և խոստացել: Նա, ում մտքերն ուղղված չեն Աստծուն, խոսում և քարոզում է Աստծուն շրջանցելով: Ըստ Մարկ.12:29,30 համարներում գրված մեր Տիրոջ խոսքերի՝ մենք պետք է Աստծուն սիրենք մեր ողջ մտքով: Նա, ով հավատում է Աստծո ասածին, դրա համապատասխան էլ մտածում է:

Հիսուս Քրիստոսի վերադարձից առաջ Աստված ուզում է իր Եկեղեցուն ամեն բան վերականգնել և Եկեղեցուն վերադարձնել իր սկզբնական վիճակին: Դա է «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՍ ՏԵՐԸ», որովհետև գրված է մեր Տիրոջ մասին. «Որին երկինքը պետք է ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատվելու ժամանակները, որոնց մասին Աստված խոսեց իր սուրբ մարգարեների բերանով սկզբից ի վեր» (Գործք 3:21): 20-րդ համարում մեզ ասվում է. «Որպեսզի Տիրոջ երեսից հանգստյան ժամանակները գան, և նա ուղարկի նախապես ձեզ համար քարոզված Հիսուս Քրիստոսին»: Հիմա լիովին պարզ է, որ նախ լինելու է վերականգնումը և հանգստյան ժամանակները, և այնուհետև վերադառնում է Հիսուսը: Ամեն: Թող այդպես լինի: Սա է Աստծո ողջ ծրագրի քարոզչությունը մեր ժամանակներում (Գործք 20:27): Դա Քրիստոսի և Եկեղեցու մեծագույն խորհրդի բացահայտումն է (Եփես. 3): Շատերն են խոսում վերջին ժամանակների և Քրիստոսի երկրորդ գալստյան մասին, մինչդեռ առանց հավատալու խոստումին, առանց սպասելու և ապրելու վերականգնումը, նրանց մեծագույն հիասթափությունն է սպասում: Դա կարևորագույն խոստումներից մեկն է, որ հիմա իրականանում է Եկեղեցուն: Ես. 28:11 համարում ասվում է. «Իրավ թոթովախոս շրթունքով և օտար լեզվով պիտի խոսի նա այս ժողովրդի հետ»: 12-րդ համարում ասվում է. «Նա որ նրանց ասաց. «Սա է ձեր հոգնածին հանգստացնելու հանգստությունը, և սա է մխիթարությունը, *բայց նրանք չուզեցին լսել*» (Ես.28:12): Այս հատվածի վերաբերյալ Պողոսը հիշատակել է միայն օտար լեզուներով խոսելը (1 Կորնթ. 14:21), այն ինչ կատարվում է Պենտեկոստեից մինչև մեր օրերը: Երկրորդ մասը՝ հոգևոր նորոգման ժամանակները Պետրոսը ներկայացնում է մարգարեական տեսանկյունից, անմիջապես Հիսուս Քրիստոսի գալստից առաջ կատարվող վերականգնման համատեքստում (Գործք 3:20,21): Դա կատարվում է հիմա: Երանի նրանց, ովքեր բաժին ունեն դրա մեջ: Վերջին հոգևոր արթնությունը և նորոգումը պետք է կատարվեն և կկատարվեն Եկեղեցուն կատարյալ վերականգնման հետ միասին: Աստծո Խոսքը միշտ կատարյալ է, միայն պետք է այն ճիշտ դասավորել:

## ԱՍՏՎԱԾ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԻՐ ԾՐԱԳԻՐԸ

Քրիստոսի առաջին գալստի ժամանակ դպիրներն այդ գալստի մասին ունեին իրենց սեփական մեկնություններն ու պատկերացումները: Այն ժամանակ կատարվեցին Հին Կտակարանի 109 կանխասումներ և մարգարեություններ, բայց կրոնական առաջնորդները բնավ չնկատեցին այդ: Նրանք լիովին կլանված էին իրենց սեփական ծրագրերով, որոնք արտաքուստ միանգամայն աստվածաշնչյան էին թվում: Արդյո՞ք մեր ժամանակներում այդ ամենը կրկնվում է:

Պենտեկոստեի օրը կատարվեց Հոր խոստումը (Գործք 1:4)՝ Սուրբ Հոգու հեղումը: Այն ժամանակվանից ի վեր նորկտակարանյան եկեղեցուն տրված բոլոր խոստումներն իրականանում են: Հավատացյալների մեծագույն հույսը երկու հազար տարուց ի վեր Հիսուս Քրիստոսի խոստացված վերադարձն է (Հովհ. 14:1-3). դա մի իրադարձություն է, որին անհամբերությամբ սպասել են Նոր Կտակարանի բոլոր հավատացյալները: Բոլոր ժամանակներում Աստծո խոստումները կատարվելուց առաջ և կատարելու ժամանակ գերբնական բաներ են կատարվում երկրի վրա:

Աստծո Թագավորության հետ կապված Աբրահամը նշանավոր անձնավորություն է: Տեր Աստվածը խոսել էր նրա հետ և հայտնվել նրան տարբեր ձևերով: Մենք կարող ենք այդ տեսնել և այդ մասին կարդալ շատ գլուխներում, սկսած Ծննդ. 12-րդ գլխից: Տերը նրան խոստացել էր, որ իր սերունդը չորս հարյուր տարի օտար երկրում ճնշվելուց հետո դուրս է գալու այդ երկրից: Երբ ժամանակը եկավ, Տեր Աստվածը հայտնվեց Մովսեսին սովորական մորենու մեջ գտնվող գերբնական կրակով (Ելից 3:2) և նրան հանձնարարեց դուրս բերել Իր ժողովրդին: Այսպես, գերբնական բաներ կատարվում են միայն այն ժամանակ, երբ Աստված իրականացնում է փրկության պատմությունը, և դա կատարվում է բնական ուղիով, այստեղ՝ երկրի վրա:

«Եվ Մովսեսը պատասխանեց և ասաց. «Բայց ահա նրանք ինձ չեն հավատա, ոչ էլ իմ ձայնին կլսեն, որովհետև կասեն, թե Եհովան քեզ չի երևացել» (Ելից 4:1): Որպես հաստատում՝ Նա երկու նշան ստացավ. Տիրոջ պատվերով Նա գավազանը նետեց գետնին և այն օձ դարձավ, հետո բռնեց օձի պոչից, և այն նորից գավազան դարձավ իր ձեռքում: Որպես երկրորդ նշան՝ Տերը նրան պատվիրեց ձեռքը դնել ծոցում, հետո հանել, և երբ նա արեց այդ, ձեռքը բորոտությունից սպիտակեց: Երբ նորից ծոցը դրեց, ձեռքը նորից մաքրվեց, ինչպես Տերն ասել էր: Քննադատների համար այդ նշանները առիթ էին կախարհության մեջ

կասկածելու համար: Մինչդեռ Աստված այդպես է փորձում մարդկանց զգացմունքները: Երանի նրան, ով չի գայթակղվում այն բաներից, ինչ Աստված է պատվիրում և անում: Աստված ասաց. «Եվ եթե քեզ չհավատան և առաջին նշանի ձայնին չլսեն, այն ժամանակ մյուս նշանի ձայնին կհավատան» (Ելից 4:8):

Ողջ Սուրբ Գիրքը իրոք Աստծո շունչն է՝ մեզ սովորեցնելու համար, որպեսզի Աստծո մարդը կատարյալ լինի (2 Տիմ. 3:14-17): Աստված միշտ «ԵՍ ԵՄ» է, ոչ թե «ԵՍ ԷԻ»: Նա նաև մեր ժամանակներում է փրկության պատմությունը իրականացնում, դրա համար մենք կարող ենք հայտնել այն, ինչ իրոք կատարվել է: Եթե ես հիշատակում եմ Ուիլյամ Բրանհամին, ապա միայն այնպես, ինչպես Պետրոսին կամ Պողոսին. նրանց ծառայությունները մեծ կարևորություն են ունեցել փրկության պատմության մեջ: Ես նրանցից չեմ, ովքեր մերժում են Ուիլյամ Բրանհամին, ոչ էլ նրանցից եմ, ովքեր փառավորում են նրան: Ես Աստվածաշնչի համաձայն եմ դասավորում այն, ինչ Աստված կատարել է, այդ պատճառով ոչ ոք չի կարող հերքել այդ: Աստված միշտ իրավացի է, և նա, ով հավատում է Նրա ասածին, չի լսում այն փաստարկները, որոնք մեկ նպատակ են հետապնդում՝ մերժել Աստծո գործը և արդարացնել սեփական հայացքները: Աստծո ճշմարիտ զավակներին միայն մեկ բան է հետաքրքրում՝ այն, ինչ Աստված է անում Իր Խոսքի համաձայն, որովհետև նրանք մասնակից են դրան:

Մեր Տիրոջ ժամանակներում կրոնական առաջնորդները Հիսուսի ծառայությունը համարեցին սատանայից, թեև շարունակում էին ջերմեռանդորեն երգել իրենց պաշտամունքների ժամանակ: Նրան մեղադրեցին դիվահար լինելու և Բեեղզեբուղի հետ կապ ունենալու մեջ: Դրա վերաբերյալ ամեն ինչ կրկնվում է մեր ժամանակներում: Քանի որ անձամբ ճաշակել եմ այն, ինչ Աստված է արել, Պետրոսի և Հովհաննեսի նման կարող եմ վկայել այդ մասին:

Բոլորին հայտնի է, որ Նոր Ուխտը սկսվելիս երկնային պատգամաբերներ հայտնվեցին երկրի վրա: Մի հրեշտակ եկավ Չաքարիայի մոտ (Ղուկաս 1:8-20), Մարիամի մոտ (Ղուկաս 1:26-38): Աստծո Որդու ծննդյան ժամանակ երկնային երգչախումբը երգում էր Բեթլեհեմի դաշտերում, և մի հրեշտակ հայտնեց Նրա ծննդյան լուրը (Ղուկ. 2:8-15): Հրեշտակները ծառայեցին Հիսուսին (Մատթ. 4:11), հրեշտակները հայտնեցին Նրա հարության մասին (Մատթ. 28:1-10, Մարկ. 16:1-8, Ղուկաս 24:1-12, Հովհ. 20:1-18): Հրեշտակներ հայտնվեցին Նրա երկինք համբարձվելու ժամանակ և հայտնեցին Նրա վերադարձի մասին (Գործք 1:10): Ողջ Հին և Նոր

Կտակարաններում շատ են պատմությունները հրեշտակների մասին, որոնք սպասավորող հոգիներ են, որոնք ուղարկված են ծառայելու միայն նրանց, ովքեր պետք է փրկություն ժառանգեն (Եբր. 1:14): Նրանցից բացի բոլոր մյուսները չեն հավատում, և Աստված կարիք չունի հրեշտակ ուղարկել նրանց մոտ, որովհետև նրանք դա ծաղրի առարկա կդարձնեին: Նույն կերպ, ովքեր մեր ժամանակներում սահմանված են փրկությունը ժառանգելու, հավատք կրնձայեն հետևյալ տեղեկությամբ:

1946 թվականի մայիսի յոթին ուշ երեկոյան ԱՄՆ-ում գտնվող Գրինս Սիլ փոքրիկ վայրում մի երկնային պատգամաբեր եկավ քարոզիչ Ուիլյամ Բրանհամի մոտ և Աստծո կողմից կոչում և առաջադրանք տվեց նրան: Ուիլյամ Բրանհամը նստած էր թույլ լուսավորված սենյակում և կարդում էր Աստվածաշունչը, երբ մի գերբնական Լույս լցրեց սենյակը, այդ Լույսի միջից նրան մոտեցավ երկնային պատգամաբերը: Սաստիկ վախեցած՝ նա վեր կացավ: «Մի՛ վախեցիր»,--- եղան երկնային պատգամաբերի առաջին խոսքերը,--- ես ուղարկվել եմ Ամենակարող Աստծո կողմից՝ ասելու համար, որ քո չհասկացված ճանապարհը ցույց են տալիս, որ Աստված քեզ ուղարկում է երկրի ժողովուրդների մոտ աստվածային բժշկության պարզևով: Եթե դու անկեղծ լինես և կարողանաս անել այնպես, որ մարդիկ քեզ հավատան, ոչ մի հիվանդություն չի դիմադրի քո աղոթքին, նույնիսկ քաղցկեղը»: Հրեշտակը նաև ասաց. «Ինչպես որ երկու նշան տրվեց Մովսեսին... այնպես էլ քեզ կտրվի երկու նշան»:

Առաջին նշանն այն էր, որ նա իր ձախ ձեռքի մեջ պետք է վերցնեք աղոթք խնդրող հիվանդի աջ ձեռքը: Այնժամ հիվանդությունը (ուռուցք, քաղցկեղ և այլն) հայտնվում էր նրա ձեռքի հակառակ կողմում և տեսանելի էր դառնում հիվանդի համար: Բժշկության պահին հիվանդությունը անմիջապես անհետանում էր Ուիլյամ Բրանհամի ձեռքից: Հրեշտակն ասել էր. «Ոչ մի հիվանդություն չի դիմադրի քո աղոթքին, նույնիսկ քաղցկեղը»: Եվ իրոք այդպես էր: Բժշկված հիվանդների մեծ մասը քաղցկեղով էին հիվանդ եղել: Այնուհետև երկնային պատգամաբերն ասաց, որ եթե մարդիկ չհավատան առաջին նշանին, կհավատան երկրորդին: Երկրորդ նշանն այն էր, որ զանազանության պարզևի և հայտնության միջոցով տվյալ անձի կյանքի մանրամասները տեսիլքով ցույց էին տրվում: Դրանով հիվանդների հավատքը անմիջապես զորանում էր, և նրանք վստահություն էին ունենում, որ Տերն իրոք ներկա էր, և այդպիսով բժշկություն էին ստանում. դրանց մեջ անթիվ էին մահացու հիվանդները, որոնց բժիշկները անբուժելի էին համարում:

Այդ գորավոր արթնությունը սկսվեց այն բանից, որ կույրերը տեսնում էին, անդամալույծները՝ քայլում, խուլերը լսում էին, համրերը՝ խոսում, այնպես, ինչպես դա կատարվել է Հիսուս Քրիստոսի ծառայության մեջ: Հրեշտակը նրան բացատրեց Հովհ. 1 և 4 գլուխները՝ ցույց տալով, որ այդ մարգարեական պարզևը նույն «Մեսիայի նշանն» էր, որ եղել է մեր Տիրոջ օրերում: Նա խոսեց Փիլիպոսի և Նաթանայելի, Անդրեասի և Պետրոսի մասին, Հակոբի ջրհորի մոտ գտնվող սամարուհու մասին, որոնց Հիսուսը առաջին հանդիպման ժամանակ այնպիսի մանրամասներ ասաց նրանց կյանքից, որոնք չէր կարող իմացած լինել՝ անունը, իրավիճակը, կյանքի պարագաները: Նոր վերջացած դարի երկրորդ կեսում ապրած մի քանի միլիոն մարդիկ վկա են եղել այն, ինչ կատարվել է այդ անբասիր ծառայության միջոցով, որով Աստված մեր ժամանակներում նոր սկիզբ է դրել: Այսօր դեռևս տրամադրության տակ կան հարյուրավոր բնօրինակ քարոզներ, որոնք ձայնագրվել են հավաքությունների ժամանակ, այնպես, որ ամեն մարդ կարող է համոզվել այս խոսքերի ճշմարտացիության և այս բացառիկ ծառայության ճշմարտության մեջ: Այսպես Աստված Ինքն է գերբնական ձևով բերում վերջին արթնությունը, և դրանով մենք վերադառնում ենք աստվածաշնչյան ժամանակներ:

Ամեն բան կատարվեց այնպես, ինչպես Հիսուսի ծառայության մեջ: Ի դեպ, խոսքն, առաջին հերթին, ոչ թե մարմնի բժշկության, այլ գլխավորի՝ հոգու փրկության մասին է: Մարմնի բժշկությունը լավ բան է, մեռելների հարությունը՝ ավելի լավ, բայց բժշկվածներն ու հարություն առածները մի օր նորից կհիվանդանան և ի վերջո կմեռնեն: Բայց այն, ինչ Աստված կատարում է մարդու ներսում, կատարվում է հավիտենության համար: Արտաքին հաստատման նպատակն է արթնացնել սրտերը, որ բացվեն Աստծո խոսքի և աստվածային գործողության համար:

Հիսուսը սկսեց քարոզել՝ ասելով. «Հասել է ժամանակը, և մոտեցել է Աստծո թագավորությունը» (Մարկ. 1:15): Ոչ միայն Նա գործեց, այլև սովորեցրեց (Գործք 1:1): Այսպես, երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսված բժշկության արթնությունը պետք է դիտվի որպես լիակատար փրկության արթնություն և փրկության պատմության մեջ նշանակալի ծառայություն: Ժամանակը նորից հասել էր, և գերբնական բաներ կատարվեցին այնպիսի առատությամբ, ինչպիսին նախկինում երբեք չէր եղել, աստվածաշնչյան օրինակի համաձայն: Մինչդեռ դրա մեջ խոսքը գլխավորապես ճանապարհի կատարյալ շտկման մասին է: Պետք է դուրս գալ բոլոր ոչ սուրբգրային վարդապետություններից՝ վերջնականորեն աստվածային

բնօրինակին վերադառնալու համար: Աստված Ինքը Իր շնորհքով այցելեց Եկեղեցուն այն բանով, որ մի մարդու հանձնարարեց Աստծո ժողովրդին բերել այս ժամի պատգամը: Բացահայտված կենդանի Խոսքը նորից դարձավ սկզբնական սերմը: Գերբնական հաստատումը Աստծո գործն էր, ինչպես, որ եղել է Մարդու Որդու ծառայության ժամանակ:

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԿԱՆԵՐ

Որպես այս գորույկի հեղինակ, ես ճանաչում եմ շատ ժամանակակից վկաների, որոնք սկզբից ի վեր ականատես են եղել այս եզակի ծառայությանը: Ոչ թե մեկ անգամ, այլ բազում տարիների ընթացքում նրանք վկա են եղել այն բաներին, ինչ Աստված կատարել է մեր սերնդի մեջ: Նրանցից են շատ հայտնի մարդիկ, ինչպիսիք են Գորդոն Լինդսեյը, Դեմոս Շաքարյանը, Դեյվիդ Դյուպլեսսին և մի շարք ամերիկացի ավետարանիչներ, որոնցից շատերին ես թարգմանել եմ: Անկասկած, նրանցից շատերը, որոնք դեռ ողջ են, կարող էին իրենց խոսքն ասել այդ մասին: Ես որոշեցի որպես վկա ներկայացնել հայտնի ավետարանիչ Թ. Լ. Օսթորնին՝ ներկայացնելով այն խոսքերը, որոնք նա ասաց 1966 թվականի հունվարի 26-ին, Ուիլյամ Բրանհամի տուն կանգվելուց հետո տեղի ունեցած հիշատակի ծառայության ժամանակ:

«Դա վերջին սերունդն էր: Ինչ-որ բան պետք է կատարվեր: Այդ սերունդը չէր կարող անցնել նախորդ սերունդների պես: Այդպես է: Ահա թե ինչու Աստված Իր աստվածային ողորմությամբ արեց մի բան, որը անցնում էր սովորականի սահմաններից: Այդ ժամուն ևա որոշել էր նորից մարգարե ուղարկել:

Շատերը կմտածեն, որ սա հայիոություն է, կամ վարդապետական առումով՝ սխալ: Ոչինչ: Մինչդեռ Աստված նորից եկավ մարդկային մարմնի մեջ և ակնհայտ կերպով ասաց. «Ես այդ նորից պետք է ցույց տամ նրանց: Ես պետք է նրանց ևս մեկ անգամ հիշեցնեմ, նրանք ևս մեկ անգամ պետք է տեսնեն այդ: Մեկ անգամ էլ նրանք պետք է տեսնեն, թե Աստված ինչպիսին է իրականում»: ևա իջավ և ուղարկեց մի հասարակ մարդու՝ մի մարգարեի: Մինչդեռ այս անգամ ավելին էր, քան մարգարե: Այս անգամ դա «Հիսուս-մարդ» էր:

Դա Եղիան չէր: Դա ավելին էր, քան մենք տեսել էինք: Մովսեսը չէր: Քանի որ նա ուրիշ ժամանակաշրջանում էր ապրում, այն ժամանակ չէր կարող կատարվել այն, ինչ մենք տեսանք: ևա ավելին էր: «Հիսուս- մարդ», Աստծով լցված մի մարդ, որ ուղարկվեց որպես առանձնահատուկ նշան մի սերնդին, այս սերնդին: Գերբնական նշան արտասովոր չափով:

Ինչու՞: Դա մի անգամ արդեն պատահել էր, ինչու՞ պետք է նորից պատահեր: Որպեսզի այս սերունդը ուշադիր դառնար: Մեկ անգամ էլ լինել նախակարապետ: Մեկ անգամ էլ, որպեսզի վկայությունը պարզ լինի: Վստահ լինելու համար, որ չկան պատճառաբանություններ,



վստահ լինելու այն բանի մեջ, որ Աստված նորից ապացուցեց: Վստահ լինելու համար, որ դրա մեջ սխալ չկա: Վստահ լինելու համար, որ մեկ անգամ էլ մեզ հիշեցվեց, թե ինչպիսին է Աստված իրականում, ինչպիսին է Հիսուսը և ինչ է անում Աստված մարմնի մեջ: Վստահ լինելու համար, որ այս սերունդը, որում վերադառնալու է Թագավորը, առանց որևէ կասկածի գիտի, թե ինչպես պետք է լինի, ինչ գործ պետք է արվի, ինչպիսին պետք է սպասավորը լինի: Որպեսզի իմանայինք, թե որն է այն առաջադրանքը, որ պետք է կատարենք, թե որն է մեր վկայությունը: Ինչպես պետք է կատարենք այն և իրականացնենք, ինչ պետք է անենք և ինչպես վարվենք: Մեկ անգամ ևս պետք է մնայինք առանց պատճառաբանության: Նրա երկրորդ գալստյան նախակարապետն էր նա:

Առաջին երեկոյան, երբ լսեցի Բրանհամ եղբորը և տեսա նրա ծառայությունը, ոչ մի ձայն չլսեցի: Ես չգիտեի, թե նրա մասին ինչ են ասում, չգիտեի նաև, որ երկնային Չայնը նրան խոսքեր էր ասել: Ես ոչինչ չգիտեի այդ մասին: Ես նրան հավատացող քարոզիչների հետ չէի: Այն քարոզիչների մեծ մասը, ում հետ եղել եմ, նրան չէին հավատում: Այնուամենայնիվ Չայնի պես, թեև դա ձայն չէր, ես լսեցի այդ: Ես գիտեի այդ: Դա հասավ ինձ: «Ինչպես Հովհաննես Մկրտիչը ուղարկվեց որպես նախակարապետ Նրա առաջին գալստյան համար, այնպես Ուիլյամ Բրանհամն ուղարկվել է որպես Նրա երկրորդ գալստյան նախակարապետ»: Ես ընդունեցի այդ:

Ես անփորձ երիտասարդ քարոզիչ էի, աստվածաբան չէի: Սուրբ Գիրքը չգիտեի: Ես չգիտեմ, թե ինչու նրան ընդունեցի, բայց վստահ էի: Ես ասացի. «Գոհություն Աստծուն, Նա հանդիպեց ինձ ճանապարհին: Գոհություն Աստծուն, ես հասկացա: Գոհություն Աստծուն, ես ըմբռնեցի այդ»: Ես կարիք չունեցա տասը երեկոների, մեկը բավական էր:

Այս սերունդը նշան է փնտրում, ևս մեկ նշան, մեկ ուրիշ նշան, նորից ուրիշ նշան: Մեկը հերիք է, մեկը բավական է:

Քանի որ Աստված ուզում էր, որ մենք վստահ լինենք, որ ճանաչենք Նրա Ուիլսոնի անսասանությունը, Նա ևս մեկ անգամ այդ արեց 20-րդ դարում, մի սերնդի առջև, որը սահմանված էր ապրելու Իր վերադարձը: Այս սերունդը պետք է իմանար այդ, այս սերունդը պետք է առանց պատճառաբանության մնար, որովհետև ստացել էր այդ առաջադրանքը: Ահա թե ինչու Աստված ուղարկեց մի առանձնահատուկ, մարդկային անոթ, որին ուղեկցում էին գերբնական նշանները, ուշադրություն գրավելու համար, որպեսզի այս ըմբոստ

ազգին մղի վեր նայելու, մտածելու, քննելու, խորհելու այդ բաների մասին:

Այսպես հայտնվեց գերբնական Լույսը նրա ծննդյան ժամանակ: Աստղը, հրեշտակը, զանազանության պարզևը, մյուս պարզևները, այս ամենը որոշակի նպատակ ունեին: Ո՞րն էր այդ նպատակը: Նորից Աստծուն ցույց տալ մեզ, կրկնել այն, ինչ Նա մեզ ցույց տվեց Հիսուս Քրիստոսի մեջ, երբ եկավ մարդկային կերպարանքով: Եվ ի վերջո, հիշեցնել մեզ վերջին անգամ: Հիսուսի պես Բրանհամ եղբայրը նորից մարդկանց ցույց տվեց այն, ինչ Ատսված տվել էր այդ ժամանակում հավատալու համար. որ ճշմարիտ Մեսիան եկել էր:

Նա տեսանող էր, տեսնում էր: Նա միաժամանակ ապրում էր երկու աշխարհներում՝ տեսանելի և անտեսանելի: Նա գործնականում երկու ոլորտում էր ապրում: Հիսուսն ասում էր. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այդ բանը Նրա նման է անում» (Հովհ.5:19):

Այստեղ, ներկայում, այս 20-րդ դարում ասպարեզ է գալիս Բրանհամ եղբայրը և անում է նույն բանը: Աստված նորից մարմնի միջոցով հանդիպեց մեզ մեր ճանապարհին, և շատերը չճանաչեցին: Նրանք չէին ընդունի նաև, եթե ներկա լինեին այն ժամանակ, երբ Աստված հայտնվեց մեր ճանապարհին այն Մարմնում, որին Հիսուս Քրիստոս էին կոչում: Մարդիկ չեն փոխվել: Նրանք, ովքեր կասկածել են այն ժամանակ, հիմա էլ կկասկածեին: Նրանք, ովքեր այն ժամանակ չհավատացին, հիմա էլ չեն հավատա: «Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այդ բանը Նրա նման է անում: Որովհետև Հայրը Որդուն սիրում է և նրան ցույց է տալիս այն ամենը, ինչ Ինքն անում է...» (Հովհ.5:19,20):

Նա տեսնում էր հրաշքները, երբ դեռ չէին կատարվել: Հիսուսը տեսել էր այն մարդուն, որ երեսուներեք տարի շարունակ տառապում էր իր հիվանդությամբ և պառկած էր ավազանի մոտ, բայց չէր կարող ինքուրույն իջնել ջուրը: Հիսուսը ամեն բան տեսել էր մինչև այնտեղ հասնելը, Նա մոտեցավ նրան և ասաց, որ բժշկված է:

Նա Ղազարոսին տեսավ արդեն հարություն առած, երբ դեռ դա տեղի չէր ունեցել: Նա այդ արդեն որոշել էր Հոր հետ: Դա միայն կրկնություն էր: Նա տեսավ Նաթանայելին, երբ դեռ Փիլիպոսը նրան չէր կանչել և նա նստած էր թզենու տակ, երբ նա դեռ դարձի չէր եկել:

Նա նախօրոք ճշգրիտ կերպով ասաց, թե ինչպես էր աշակերտները կզնան մի վայր, կհանդիպեն փողոցում ջրի կուժ տանող մի մարդու և կզնան նրա հետևից:

Նա նրանց ասաց, որ մի վայրում կգտնեն մի ավանակ և պետք է այն բերեն իր մոտ: Նա ամեն բան տեսավ մինչև կատարվելը:

Այդպիսին էր Ուիլյամ Բրանհամի կյանքը, ճիշտ այնպիսին, ինչպիսին կարողում ենք Սուրբ Գրքում: Մարդիկ, որոնք լսում են, թե ինչպես է Բրանհամ եղբայրը շեշտում այդ, ասում են. «Այսօր արդեն դա ընդունելի չի»: Բայց դա ճիշտ չի: Ինչպես, որ այսօր չեն հավատում, այն ժամանակ էլ չէին հավատալու: Մինչդեռ Աստված շատ անգամներ իջավ, հանդիպեց մեզ ճանապարհին, նորից ցույց տվեց, թե ինչպիսին է Աստված-մարդը, թե ինչպիսին է Աստված, թե ինչպիսին է Նա մարմնի մեջ, ինչպիսին է նոր ստեղծագործությունը:

Տեսնու՞մ եք, թե դա ինչ է: Նոր ստեղծագործությունն է գործի մեջ: Նա զանազանության պարզ ունեք, ինչպես Հիսուսն է ունեցել այդ պարզ և ջրհորի մոտ կանգնած կնոջը պատմել նրա ողջ կյանքը: Քանի անգամ դուք այնտեղ նստած եք եղել և զարմացել եք: Եթե մենք հավատում ենք Սուրբ Գրքում պատմված այն քիչ գործերին, որոնք Հիսուսն արել է, ինչպես կարող ենք պատճառաբանություններ գտնել, երբ երեկո առ երեկո տեսնում էինք, թե ինչպես են այդ գործերը կրկնվում, ոչ թե մեկ անգամ, այլ տասնյակ, այնքան կատարյալ կերպով, որքան Հիսուսն է արել: Ճիշտ նույն կերպով: Ինչպե՞ս է հնարավոր, որ այդ բաները տեսնող մարդը դեռևս չհավատա: Ինձ համար դա անհասկանալի է:

Բրանհամ եղբայրը գիտեր հիվանդությունները: Ամենուրեք դրանք նրան հայտնի էին դառնում, երբ դեռ ոչ ոք նրան չէր ասել: Նույն Աստվածը գիտի ամեն բան: Աստված է մարդու մեջ ցույց տալիս Իր գիտությունը, այն, թե ինչպիսին է Ինքը, ինչպես է անցնում բնականի սահմաններից: Նրա համար ոչինչ անհնար չէ:

Նա նկատում էր, երբ զորություն էր դուրս գալիս իր միջից: Քանի՞օր եք նստած եղել այնտեղ և տեսել, թե ինչպես է Բրանհամ եղբայրը շրջվում և ասում. «Այն կինը այնտեղ է: Այն տղամարդն այնտեղ է»: Սուրբ Գրքում միայն մեկ կին է այդ ապրել: Բնականաբար, հետագայում շատերը լսեցին այդ մասին և նույնը ապրեցին, բայց մանրամասն կերպով միայն այդ դեպքի մասին է պատմվում: Մինչդեռ իմ աչքերը այդ բանը տեսան տասնյակ անգամներ: Ձեզանից շատերը հարյուրավոր անգամներ տեսան: Ինչպես կարող էի ես չհավատալ: Ինձ համար դա վարդապետական արգելք չէ: Դա

պարզապես մի բան է ասում ինձ. այն, ինչ կատարվել է նախկինում, կատարվում է նաև հիմա: Իմ Աստվածը չի փոխվել:

Այդ նշանների հիման վրա հեթանոսները խոսքով և գործով, մեծ նշաններով ու հրաշքներով, Սուրբ Հոգու զորությամբ պետք է բերվեին հնազանդության: Մի՞թե չենք տեսել բազմություններ, որոնք եկան Քրիստոսի մոտ, երբ տեսան հրաշքները, զոջացին իրենց մեղքերի համար, փրկություն խնդրեցին և հավիտենական կյանք ստացան: Ոչ միայն այստեղ, այլև արտասահմանում, երբ մեկ օրվա մեջ 30.000 հոգի վեր կացան ընդունելու համար Հիսուս Քրիստոսի կյանքը, որովհետև Աստված մարդկային մարմնի միջոցով հանդիպել էր նրանց ճանապարհին և բացահայտվել էր նրանց առջև:

Արդյո՞ք դա գաղտնիք է: Դա գաղտնիք չէ: Աստծո հրաշքն է: Մի՞թե դա վարդապետական վեճի առարկա է: Դա առիթ է փառք տալու մեր Աստծուն, ով ևս մեկ անգամ մեր սերնդի մեջ եկավ մարդկային մարմնի միջոցով: Նա բնակվել է մեր բոլորի մեջ, բայց առանձնահատուկ կերպով այդ մարդու մեջ, որը Իր մարգարեն էր այս ժամանակի համար: Նա նրան ուղեկցում էր գերբնական նշաններով, որպեսզի աշխարհը մեկ անգամ էլ արթնացնի նշանի միջոցով»:

Այստեղ վերջանում են Թ. Լ. Օսբորնի խոսքերը, որը համարվում է ամերիկացի ավետարանիչներից ամենահայտնին:

Մենք շնորհակալ ենք այս նշանավոր վկայության համար: Թ. Լ. Օսբորնը առաջիններից մեկն էր, որոնք տեսան Աստծո գերբնական գործողության հետևանքները: Ինձ նույնպես շնորհվել է այս եզակի ծառայության վկա և ականատես լինել: 1955 թվականից, երբ Բրանհամ եղբայրը խոսեց Կարլսրուե և Ցյուրիխ քաղաքներում, մինչև 1965 թվականը, ես առանձնաշնորհում եմ ունեցել մասնակցելու այդ առանձնահատուկ ծառայությանը, թե՛ ազգային, թե՛ միջազգային հանդիպումների ժամանակ, և ծանոթացել եմ այն բանի հետ, ինչ արել է Աստված: Հավաքույթների ժամանակ խոսքը քարոզելուց հետո Բրանհամ եղբայրը նախ աղոթում էր նրանց համար, ովքեր ընդունել էին Աստծո փրկությունը՝ Հիսուս Քրիստոսին հավատալով, հետո աղոթում էր հիվանդների համար: Կատարվում էր այնպես, ինչպես Թ. Լ. Օսբորնը վկայեց: Աստծո մարդը ոչ մի մարդու չէր հարցնում, թե ինչ ցավով է նա տառապում: Գերբնական լույսը իջնում էր այն մարդու վրա, որի համար աղոթում էր, և նրան տեսիլքով ցույց էին տրվում բաներ, ինչպես նախկինում եղել է մեր Տիրոջ հետ, Նրա մարգարեական ծառայության ժամանակ, երբ Նա գործում էր որպես Մարդու Որդի (Հովհ. 5:189,20): Նա ասում էր հիվանդներին, թե ինչից

են տառապում, թե ինչպիսին են նրանց կյանքի պարագաները: Հաճախ տեսիլքում տեսնում էր անձնավորության անունը, նրա բնակված քաղաքը, փողոցը, տան համարը, ինչպես որ Աստված նրան ցույց էր տալիս: Նա ճշմարտապես կարող էր ասել. «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ»: Եվ բազում անգամներ անսխալ կերպով «ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ», որը Միակն է, որ գիտի յուրաքանչյուր մարդու: Ուիլյամ Բրանհամը տեսանող էր Աստվածաշնչի նկարագրածի պես:

Այս ծառայությունը չկատարվեց երկրի մի անկյունում, այլ հրապարակավ և տարբեր երկրներում: Նաև այն երկրներում, որտեղ նա լեզուն չգիտեր և քարոզում էր թարգմանչի միջոցով, այն ամենը, ինչ ասում էր մարդկանց, ճշգրիտ էր: Ողջ աշխարհում միլիոնավոր մարդիկ դրա վկաներն են եղել: Հիսուս Քրիստոսն էր մարդու միջոցով հայտնում, որ Ինքը նույնն է մեր ժամանակներում, ինչ որ եղել է նախկինում, Մեսիայի նույն նշանով: Ինչպես Հովհաննես Մկրտչի դեպքում, հիմա էլ, վերջ ի վերջո, գործ ունենք ոչ թե մարդու հետ, այլ Աստծո կողմից խոստացված և հենց Տիրոջ կողմից իրագործված ծառայության հետ: Այդ պատճառով հարցը սա չի. «Ի՞նչ դիրքորոշում ունենք Բրանհամ եղբոր հանդեպ», այլ՝ «Ի՞նչ դիրքորոշում ունենք Աստծո հանդեպ», Նրա հանդեպ, ով գերբնական կերպով գործեց բնական անոթի միջոցով: Նոր Կտակարանի սկիզբը կատարվեց խոստացված ծառայության միջոցով՝ պատրաստելու համար Տիրոջ ճանապարհը, նույն կերպ, վերջն էլ կկատարվի խոստացված ծառայության միջոցով՝ ամեն բան վերականգնելու համար:

## ԳԵՐԲՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՈՇՈՒՄ Է ՊԱՀԱՆՁՈՒՄ

Եթե դա համապատասխանում է և ճշմարիտ է, որ Ուիլյամ Բրանհամը ծննդից ի վեր սահմանված է եղել լինելու Եկեղեցու վերջին շրջանի մարգարեն և պատգամաբերը, ուրեմն դա եղել է Աստծո գերիշխան որոշումը, ինչպես, որ եղել է անցած ժամանակների Իր բոլոր ծառաների համար:

Եթե ճիշտ է (իսկ դա ճիշտ է), որ գերբնական լուսավոր ամպը 1909 թվականի ապրիլի վեցին նրա ծննդից քիչ հետո առավոտյան ժամը հինգի կողմերը եկավ և լուսամուտախորշով մտավ սենյակ, տեսանելի եղավ ծնողների և տատիկի համար, որը միաժամանակ մանկաբարձուհին էր, և այդ ամպը ճախրեց երեխայի վերևում, կարո՞ղ ենք արդյոք ուշադրություն չդարձնել դրան:

Եթե ճիշտ է, որ փոքրիկ Բիլլին յոթ տարեկանում վերկից, մեծ բարդու կատարից զորավոր Ձայն լսեց, որն ասում էր. «Մի խմիր, մի ծխիր և ոչ մի կերպ մարմինդ մի ապականիր, որովհետև երբ մեծանաս, գործ ունես կատարելու», կարո՞ղ ենք անտարբեր անցնել դրա կողքով:

Եթե ճիշտ է, որ մանկությունից ի վեր Աստված նրան շատ բաներ է ցույց տվել տեսիլքով, որոնք ամեն անգամ հարյուր տոկոսով ճիշտ են եղել, դա նշանակում է, որ մարդը չի արել այդ, այլ Աստված՝ մարդու մեջ, ինչպես սասց Թ. Լ. Օսթորնը:

Եթե ճիշտ է, որ նա ուղարկվել է խոստացված և բացահայտված Խոսքի պատգամով, որը նախորդում է Քրիստոսի երկրորդ գալստին, ուրեմն նրանք, ովքեր լսելու ականջ ունեն, թող լսեն, թե Հոգին ինչ է ասում Եկեղեցիներին:

Այն, ինչ Գորդոն Լինդսեյը պատմում է իր գրքում, ճշմարիտ է. 1950 թվականի հունվարի 24-ին մեծ հավաքույթի ժամանակ, ուր ներկա էր ութ հազար մարդ, Տեխաս նահանգի «Հյուսթոն Կոլիգեումի» դահլիճում Տերը իջավ լուսավոր գերբնական Ամպով: Ներկա եղողներից մի քանիսը վկայեցին, որ տեսել են Ուիլյամ Բրանհամի գլխավերևում գտնվող Լույսը: Այսպես Աստված Ինքը վկայեց Իր ծառայի և մարգարեի համար: Մինչ այդ բեմի վրա հրապարակային, մոլեգին բանավեճ էր եղել մեր ժամանակներում աստվածային բժշկությունը մերժող Վ. Ե. Բեստի և Ֆ. Ֆ. Բոսվորտի միջև, որը Ուիլյամ Բրանհամի համագործակիցն էր և համամիտ էր, որ փրկությունն ու բժշկությունը փրկագնման մաս են կազմում: Երկու լուսանկարիչներ, որոնք նույնպես քննադատներ էին, պետք է Բեստի

հրամանով լուսանկարեին Բրանհամ եղբորը: Ժապավենը երևակելուց հետո պարզվեց, որ լուսանկարներից ոչ մեկը չէր լուսակայվել, բացի Ուիլյամ Բրանհամի վայրկենական մի լուսանկարից, որը Ջ. Այերսն էր լուսանկարել, երբ Բրանհամ եղբայրը բեմ էր բարձրացել: Լուսանկարի վրա պարզ տեսանելի էր Աստծո մարդու գլխավերևում գտնվող կրակի Սյունը: Ուիլյամ Բրանհամն ասաց. «Ես չեմ եկել, որ ինքս ինձ պաշտպանեմ: Տեր Հիսուսը, որ ինձ կանչել է և ուղարկել, Նա էլ ինձ կպաշտպանի»: Հենց այդ պահին էր Ջեյմս Այերսը լուսանկարել: Սևանկարը հայտնվեց «Դուգլաս Ստուդիայում» Ջ. Այերսի կողմից և հանձնվել կասկածելի փաստաթղթերի պաշտոնական հետազոտող դոկտոր Ջորջ Ջ. Լեյսիին, որը հետազոտեց այն: Նա հաստատեց, որ սևանկարը կրկնակի լուսակայված չէ, ոչ էլ ռետուշված է: Մի՞թե ի վերջո այստեղ Աստծո հետ գործ չունենք: Ես ինքս՝ այս գրքույկի հեղինակը, տեսել եմ Լույսի սյունը պատկերող այդ լուսանկարը 1969 թվականի դեկտեմբերին «Hall of Art»-ի ցուցահանդեսում, Վաշինգտոնում (Կոլումբիայի շրջան), և գիտեմ, որ այն մատչելի է հասարակության համար: Լուսանկարը ցույց տվող ծառայողը չգիտեր դրա նշանակության մասին, որովհետև լուսանկարի հետ ոչ մի բացատրություն չկար: Դա ինձ տխրեցրեց, և ես մտածեցի. «Ո՞վ ընդհանրապես ուշադրություն կդարձնի Աստծո գերբնական գործողությանը և դրա հետ կապված նպատակին»: Մի՞թե Տերը չապացուցեց, որ Ինքը Նույնն է, որ ուղեկցեց Իսրայելին 40 տարի շարունակ Կրակի և Ամպի Սյունով (Ելից 13:21,22, Նեեմ. 9:12-20): Մի՞թե Նա չէր, որ հանդիպեց Սավուղին Դամասկոսի ճանապարհին գերբնական Լույսով և նրա առաջադրանքի վերաբերյալ մեզ հայտնի խոսքեր ասաց (Գործք 22:6-21):

Եթե ճիշտ է (իսկ դա ճիշտ է), որ 1963 թվականի փետրվարի 28-ին գերբնական Ամպ իջավ Արիզոնայի Սանսեթ լեռան վրա, որում ծածկված էին յոթ հրեշտակ-քերովբեներ, ինչպես Ուիլյամ Բրանհամը տեսլիքով տեսել էր 1962 թվականի դեկտեմբերի 22-ին, ապա դա կատարվել է, որ ողջ աշխարհը ուշադրություն դարձնի և իմանա, թե ինչ է արել Աստված: Լուսավոր ամպը, որ հայտնվեց կապույտ երկնքում, այնքան անսովոր էր մեծությամբ, բարձրությամբ, ձևով և գույնով, որ լուսանկարվեց շատ դիտորդների կողմից: Օդերևութաբան դոկտոր Ջեյմս Ե. Մակդոնալդը, որը Թոլոսոնի «Institute of Atmospheric Physics»-ից էր, հետազոտեց այդ արտասովոր երևույթի լուսանկարները և ոչ մի տրամաբանական, գիտական բացատրություն չգտավ դրա համար: Մայրամուտից 28 րոպե հետո դեռ Ամպը տեսանելի էր,

փայլուն և պայծառ՝ երեկոյան երկնքում, հենց այն վայրի վերևում, որտեղ գտնվում էր Ուիլյամ Բրանհամը:

Պրոֆեսիոնալ «Սայընս» ամսագիրը իր 1963 թվականի ապրիլի 19-ի համարում և «Լայֆ» շաբաթաթերթը իր 1963 թվականի մայիսի 17-ի համարում, որոնք երկուսն էլ հիմա իմ առջև են, մեզ տեղեկացնում են այդմասին: Վերնագրերից մեկն այսպիսին է. «...And a High Cloud Ring of Mystery», այսինքն «... Եվ մի բարձր խորհրդավոր օղականման ամպ»: Անհավատների համար դա երկնքում խորհրդավոր հայտնություն էր, ճշմարիտ հավատացյալների համար դա աստվածաշնչյան նշան էր, ինչպիսին նախկինում եղել է Բեթլեհեմում, երբ գերբնական Լույսը լուսավորեց ողջ շրջանը, երկնային երգչախումբը երգեց, և մի հրեշտակ հայտնեց փրկության իրադարձությունը (Ղուկ. 2-րդ գլուխ): Երբ հարուցյալ Տերը համբարձվեց երկինք, մի գերբնական Ամպ վերցրեց Նրան (Գործք 1:9): Երբ Նա վերադառնա՝ մտնելու Իր Թագավորության մեջ, նորից գերբնական Ամպի վրա է վերադառնալու (Մատթ. 24:30, Ղուկ. 21:27): Այնժամ ամեն աչք Նրան կտեսնի (Հայտն. 1:7-8): Մենք դեռևս ապրում ենք աստվածաշնչյան ժամանակներում: Դրա համար մենք չպետք է զարմանայինք, երբ Աստված գործում է գերբնական ձևով: Ի՞նչ իմաստ ունի քարոզել այն մասին, թե ինչ է Նա արել անցած ժամանակներում, երբ անտեսում ենք այն, ինչ Նա արել է մեր ժամանակում և շարունակում է անել:

Եթե դա ճիշտ է (իսկ դա ճիշտ է), որ Բրանհամ եղբայրը, լեռան վրա գտնվելու ժամանակ, երբ իջավ իր վերևում կախված լուսավոր, բուրգի տեսքով Ամպը, յոթերորդ հրեշտակից պատվեր ստացավ. «Վերադարձիր Ջեֆերսոնվիլ, որովհետև Հայտնության յոթ կնիքները բացելու ժամանակը եկել է», ապա դա ինչ-որ բան նշանակում է: 1963 թվականի մարտի 17-ից 24-ը Ուիլյամ Բրանհամը խոսել է Հայտնության յոթ կնիքների վերաբերյալ: Արթնության առաջին ալիքի ամերիկացի ավետարանիչները, ինչպես և Թ. Լ. Օսբորնը, գիտեին այդ, բայց այդ մասին ոչինչ չասացին աշխարհին: Ակնհայտ է, որ այն, ինչ Աստված ուներ ասելու և անելու, չէր համապատասխանում իրենց ծրագրին, թեև վկայում են Աստծո մարդու առանձնահատուկ հանձնարարության և արտասովոր ծառայության մասին: Գուցե գերբնական Լույսը կուրացրե՞ց նրանց, որովհետև նրանք սկսեցին դեմ դուրս գալ դրա դեմ: Մենք պետք է քայլենք Լույսի հետ, որովհետև միայն այդ դեպքում Աստծո խոսքը Լույս կլինի մեր ոտքերի համար:

Մենք այժմ ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, որում ամեն բան իրականանում է այնպես, ինչպես գրված է Աստվածաշնչում,



հատկապես Հայտնության գրքում: Հուդայի ցեղից եղող Առյուծը հաղթեց, Գառնուկը վերցրեց խորհրդավոր Գիրքը և բացեց կնիքները: Գիրքը չպետք է կնքված մնար մինչև վերջ, այլ միայն մինչև վերջին ժամանակները (Դանիել 12:4,9), իսկ մենք հիմա այդ ժամանակներում ենք գտնվում: Երբ ժամանակը լրանում է, Աստված բացահայտում է այն, ինչ ծածկված էր: Հարս-Եկեղեցու համար դա կենդանի իրականություն է: Աստված գործել է գերբնական կերպով, և Աստծո ժողովուրդը պետք է իմանա այդ:

1946 թվականին աշխարհը դեռ չէր լսել այն ավետարանիչների մասին, որոնք հետագայում հայտնի դարձան: Մինչդեռ հաջորդ տարիների ընթացքում հարյուրավոր քարոզիչներ ներշնչվեցին Բրանհամի հավաքույթների ժամանակ, երբ սեփական աչքերով տեսան Աստծո գերբնական գործողությունը: Նրանցից են Օրալ Ռոբերտսը, Թ. Լ. Օսբորնը, Թոմմի Հիքսը, Մորիս Սերուլլոն և շատ ուրիշներ: 1950 թվականին Գորդոն Լինդսեյը հրատարակեց մի գիրք՝ «William Branham--- a man sent from God», այսինքն՝ «Ուիլյամ Բրանհամ՝ Աստծո կողմից ուղարկված մարդ»: Այս գրքում պատմվում է 1946 թվականից մինչև 1950 թվականի սկիզբը տեղի ունեցած արտասովոր հավաքույթների մասին, որոնք եղել են երկրի տարբեր վայրերում: Տարիներ շարունակ նույն հեղինակը «The Voice of Healing»՝ «Բժշկության ձայն» (հետագայում՝ «Christ for the nations») պարբերականում իր ընթերցողներին անընդհատ տեղեկացնում էր այս արտասովոր ծառայության մեջ կատարված բաների մասին: Մինչդեռ մինչև այսօր նրանցից ոչ մեկը չի հարցրել, թե որն էր այդ ծառայության հետ կապված նպատակը: Բայց կարևորը հենց դա է: Մեծ ավետարանիչներն էլ մնացին ավանդական քրիստոնեության մեջ և վերցրին միայն բժշկության քարոզչությունը, ոչ թե խոսքի: Չնայած այն զորավոր բաներին, որոնք կատարվեցին իրենց աչքերի առջև, նրանք չընդունեցին այն, ինչ Աստված անում էր ներկայում Իր ժողովրդի մեջ և Իր խոսքի համաձայն:

Բոլոր ավետարանիչները, և հատկապես առաջին փուլի՝ 1946-1965 թվականի ավետարանիչները, որոնք Աստծուց ներշնչում ստացան, երբ տեսան Նրա գերբնական գործողությունը, մեծ պատասխանատվություն են կրում, որովհետև չասացին Աստծո ժողովրդին այն, ինչ Նա արել է մեր ժամանակներում: Մենք պետք է գիտակցենք, որ խոսքը մարդու մասին չէ, այլ Աստծո, ով Իր գերիշխանությամբ կանչեց և ուղարկեց Իր պատգամաբերին: Աստված է կատարում գերբնականը, ոչ թե մարդը, և այդ անում է ժողովրդի ուշադրությունը Իր ասածների վրա հրավիրելու համար: Բոլոր

դեպքերում կատարվում է այն, ինչ Տեր Ջիսուսն է ասել Ջովի.14:12 համարում. «Ճշմարիտ, ճշմարիտ են ասում ձեզ. ինձ հավատացողն այն գործերն էլ կանի, որ ես են անում, և դրանցից էլ ավելի մեծ բաներ կկատարի...»:

## ՆՇԱՆՆԵՐԸ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ ՆՊԱՏԱԿԸ

Այժմ խոսքը Աստծո մաքուր պատգամի և հավիտենապես ճշմարիտ Ավետարանի մասին է: Մովսեսը ոչ միայն նշաններ ուներ, այլև ուներ Աստծո պատգամը Իսրայելի ժողովրդի համար: «Արծակիր իմ ժողովրդին, որ ինձ պաշտեն», և նրանք դուրս եկան: Որպես Փեսայի բարեկամ՝ Յովհաննես Մկրտիչն էլ պատգամ ուներ, որով կանչում էր Հարսին (Հովհ. 3:28-36): Պետրոսը պատգամ ուներ: Պողոսն ինքն իրեն ներկայացնում է որպես Քրիստոսի դեսպան, այսինքն պատգամաբեր: Նույն կերպ Բրանհամ եղբայրը ուղղակի պատգամաբեր էր, Աստուծո ուղարկված մարդ: Թ. Լ. Օսթրոնը իր սեփական վկայությամբ այս ծառայությունն ավելի բարձր դասեց, քան Մովսեսինն ու Եղիայինը: Համաշխարհային ճանաչում ունեցող մյուս ավետարանիչներն էլ սկզբում նույնը արեցին: Բայց քանի որ վարդապետական ուսուցման առումով չէին կարող համաձայնել Աստվածաշնչի վրա հիմնված նրա քարոզչության հետ, կամաց-կամաց հեռացան նրանից: Նրանք մարդկանց մղեցին արհամարհելու նրան, և երբ նա Տուն կանչվեց, զրպարտեցին նրան: Չնայած եզակի և գերբնական հաստատմանը, չնայած որ այսօր էլ նրանք համոզված են, որ միայն Աստված կարող էր կատարել այդ, նրանք վարդապետական առումով մնացին ավանդական և կեղծված քրիստոնեության մեջ:

Ո՞րն է ուրեմն Պատգամը, «վերջին ժամանակների Պատգամը», որը ճանապարհ է ցույց տալիս: Կա՞ արդյոք մեր սերնդում մեկ ուրիշը, որը Աստծուց կանչված լինելով և Աստծուց լիազորություն ստացած լինելով, կարող է վկայել և խոսել Քրիստոսի կողմից: Ո՛չ, չկա, այլապես այդ մասին արդեն կիմանայինք: Միայն Աստծո կողմից ուղարկվածի բերանից է դուրս գալիս Աստծո ճշմարիտ խոսքը այնպես, ինչպես դուրս է եկել Աստծո բերանից:

Երբ 1965 թվականի դեկտեմբերին Բրանհամ եղբայրը Տուն կանչվեց, նա մեզ թողեց Աստծո Պատգամը, բացահայտված խոսքը՝ Մովսեսի գրքերից մինչև Հայտնություն: Համաշխարհային ճանաչում ունեցող ավետարանիչները խանդավառվեցին բժշկության ծառայությամբ, բայց չհասկացան, որ հայտնվել էր խոսքի պատգամը, որը ամեն բան պետք է կարգի բերեր, և որին պետք է հաջորդեր վերականգնումը: Այժմ խոսում են «արթնության երրորդ ալիքի» մասին, մինչդեռ չեն ճանաչում աստվածային նպատակը: Ավետարանիչներն ու խարիզմատիկները, որոնք ներկայացնում են իրենց սեփական վարդապետություններն ու հավատքի ուղղությունները, մի՞թե չեն օգտվում այս ժամի ընձեռած առիթից: Մի՞թե Աստծո թագավորության մեջ իրենց սեփական

թագավորությունը չեն կառուցում միլիոնավոր ու միլիարդավոր դոլարներով, իրենց սեփական աստվածաշնչյան դպրոցներով, քարոզիչների ճեմարանով և նույնիսկ համալսարանով: Մի՞թե չեն կառուցել իրենց «ցանցը», և մի՞թե անկախները չեն ընկել իրենց կրոնական միջոցառումների ցանցը: Մարդկանց խանդավառելու համար ներկայացնում են նորանոր ներկայացումներ: Դրա համար առանձնահատուկ ուշադրություն են դարձնում բժշկություններին և հրաշքներին: Դրանով կարողանում են հեշտությամբ գրավել տառապող բնակչությանը: Եվ բոլորը համոզված են, որ մեծ ծառայություն են մատուցում Աստծուն, թեև իրենք բոլորովին Աստծո կամքի մեջ չեն: Հնարավոր է Աստծուն ծառայություն մատուցել առանց Նրա կամքի մեջ լինելու:

Ամենուրեք, բայց հատկապես կաթոլիկ աշխարհում այսօր հավատում են հրաշագործ բժշկություններին: Դա է վկայում ամեն տարի ուխտագնացության վայրեր այցելող միլիոնավոր մարդկանց վերաբերյալ արված վիճակագրությունը: Նույնիսկ Հովհաննես Պողոս II պապը կանոնավոր կերպով հաճախում է Ֆաթիմայի ուխտագնացության վայրը՝ շնորհակալություն հայտնելու Մարիամին, որը «այնքան հրաշագործ ձևով իրենից հեռացրեց հրազենի գնդակը, երբ մահափորձ էր արվում իր դեմ»: Մինչդեռ ո՞վ է քարոզում ճշմարիտ խոսքը, Աստծո ողջ կամքը: Ո՞վ է մեծ ավետարանչական հավաքությունների ժամանակ քարոզում այն նույն Ավետարանը, որ քարոզել են Պետրոսն ու Պողոսը: Ո՞վ է սովորեցնում այն, ինչ իրենք են սովորեցրել: Ո՞վ է մկրտում այնպես, ինչպես իրենք են մկրտել:

Հավատքի առաջին քայլերը ցույց տրվեցին փրկություն փնտրողներին հենց առաջին քարոզի ժամանակ, Պենտեկոստեի օրը: Ամբոխը համակվեց Աստծո Հոգով և ցնցվեց առաքյալի քարոզից, ունկնդիրների մեջ միայն մեկ հարց առաջացավ և այդ հարցին միայն մեկ՝ լիովին հստակ պատասխան տրվեց: «Եվ երբ այս լսեցին, իրենց սրտում զղջացին և Պետրոսին ու մյուս առաքյալներին ասացին. «Ի՞նչ անենք, եղբայր մարդիկ»: Պետրոսն էլ նրանց ասաց. «Ապաշխարեցե՛ք և ձեզանից ամեն մեկը թող Հիսուս Քրիստոսի Անունով մկրտվի՝ մեղքերի թողության համար» (Գործք 2:37,38): Նրանք պատմություններ չլսեցին, այլ Աստվածաշնչի վրա հիմնված ազդեցիկ քարոզ և ստացան հստակ ցուցում փրկության ճանապարհի համար, որում անմիջապես սկսեցին քայլել՝ կատարելով հավատքի առաջին քայլը. «Եվ նրանք, ովքեր նրա խոսքը հոժարությամբ ընդունեցին, մկրտվեցին, և այդ օրը երեք հազարի չափ մարդ ավելացավ» (Գործք 2:41):

Քարոզչությունը թափանցեց ունկնդիրների սիրտը: Աստծո Չոգին ճշմարիտ ապաշխարություն և զղջում բերեց: Այսօր նույնպես իսկական դարձը այդպես է լինում: Հավատքի եկածները մկրտվում են ջրով և ստանում են Հոգու մկրտությունը: Դա աստվածաշնչյան օրինակն է, որ միշտ ուժի մեջ է: Մնացած բոլոր բաները փոխարինող փորձառություններ են, որոնք ներմուծվել են մարդկանց կողմից, որոնք հուզում են զգացմունքները, բայց հոգին թողնում են առանց փրկության: Շատ բաներ կատարվում են լավ մտադրություններով, բայց եթե խորթ է Աստվածաշնչին, մոլորության է տանում: Շատ մարդիկ կան, որոնք օծված են առանց վերստին ծնունդ ստանալու: Այժմ նեղ դուռն ու նեղ ճանապարհը ցույց են տրվում ինչպես, որ սկզբում: Այն ամենը, ինչ ուղիղ չէ, հարթեցվում է, այն ամենը, ինչ կեղծ է, հեռացվում է: Ժամանակը լրացել է, և վերջին կանչը լսվում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի հավիտենապես ճշմարիտ Ավետարանի քարոզչությամբ (Մատթ. 24:14, Հայտն. 14:6):

Բայց պետք է, որ Սուրբ Գրքում գրվածը իրականանա նաև այն բանում, որ հրաշագործները, ինչպես մի ժամանակ Հանեսն ու Համբեսը, հակառակ կանգնեն Խոսքի ճշմարտություններին, որոնք մեր ժամանակներում նորից քարոզվել են Աստծո կողմից ուղարկված մարդու միջոցով: Հենց դա Պողոսը Հոգով տեսավ վերջին ժամանակների համար և նախօրոք հայտնեց, և հենց այդպես էլ կատարվեց: Աստվածության, մկրտության, Տերունական ընթրիքի, մարդու անկման և այլ ճշմարիտ վարդապետությունները այնպես, ինչպես գրված են Աստվածաշնչում և մեր ժամանակներում նորից դրվել են աշատանակի վրա, ընդհանրապես ներկայացվում են որպես կեղծ, իսկ իրենց եկեղեցու կամ համայնքի ուսմունքները ներկայացվում են որպես ճշմարիտ: Այն, ինչ Աստվածության վերաբերյալ գրված է «Հավատո հանգանակում», ընդունվել է տիեզերաժողովների ժամանակ, և ո՛չ աստվածաշնչյան է, ո՛չ էլ առաքելական: Եկեղեցիների անդամները մնում են կրոնական կեղծումների մեջ, և այսպես հին ողբերգությունը շարունակվում է ավանդույթի համաձայն:

Այն, ինչ Աստված ունի եկեղեցուն ասելու, արդեն գրված է Նոր Կտակարանում, որը վերջացված, ավարտված է, և որին ոչինչ չի կարող ավելացվել, որից ոչինչ չի կարող պակասեցվել (Գաղատ. 3:15): Ճշմարտության ժամը եկել է, և մենք հարցնում ենք, ինչպես գրված է Եսայի 21:11,12 համարներում. «Ով պահապան, գիշերվա համար ի՞նչ լուր կա»: Պատասխանը սա է. «Առավոտը կգա ու նաև գիշերը»: Այլևս փրկության օրվա երեկոյան ժամանակում չենք ապրում, այլ կեսգիշերային ժամն է: Կանչը հնչում է էլ ավելի ուժգին. «Ահա Փեսան.

Նրան դիմավորելու ելեք» (Մատթ.25:6): Որքան ավելի մենք կարիք ունենք Աստծո հետ կապի, Սուրբ Հոգու հորդունի և վառ ճրագների: Այժմ եկեղեցին պետք է դուրս կանչվի մարդկային ձեռքով արված, հակասուրբզրային համակարգերից և բոլոր կեղծումներից, որպեսզի դառնա Հարս-Խոսքը, ինչպես Փեսան էր մարմին դարձած Խոսքը:

Աստծո զավակների հավատքը հիմա վերականգնվում է և դառնում այնպիսին, ինչպիսին եղել է մեր հայրերի հավատքը առաքյալների ժամանակ, որպեսզի մենք գտնվենք Աստծո կամքի մեջ և ապրենք փրկության պատմության վերջին մասը մինչև ավարտը Հիսուս Քրիստոսի գալու ժամանակ: Հավատան, թե չհավատան, ընդունեն, թե մերժեն, Աստված մեր ժամանակներում գործել է գերբնական ձևով: Աստծո ճշմարիտ զավակների ուշադրությունն այժմ ուղղված է այն բանին, ինչ Նա անում է Իր Խոսքի համաձայն: Կար մի խոնարհ մարդ, ցածր դպրոցական կրթությամբ, բայց եղիայի նման: Անդադար նա մեջբերել է Հովհ. 5:19,20 համարները և խնդրել է Աստծուն օգնել իրեն: Նրա օրինակը Մարդու Որդին էր Իր մարգարեական ծառայությամբ, ով ասում էր. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. Որդին իրենից չի կարող ոչինչ անել, եթե չտեսնի Հորն անելիս, որովհետև ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այդ բանը Նրա նման է անում» (Հովհ.5:19):

Դա ճշմարիտ կախվածությունն է Աստծուց և իսկական մարգարեական ծառայություն: Շատ բան կա ասելու, գրելու և շատ գրքեր կգրվեն: Նրանք, ովքեր հիմա լսելու ականջ ունեն, թող լսեն հիմա, թե Հոգին ինչ է ասում եկեղեցիներին: Այն, ինչ գերբնական լուսավոր ամպի միջից ասվեց Ուիլյամ Բրանհամին շատ վկաների ներկայությամբ, ԱՄՆ-ի Ինդիանա նահանգի Ջեֆերսոնվիլում տեղի ունեցած իր առաջին մկրտության ծառայության ժամանակ, որը եղավ ավետարանչական ծառայությունից հետո, կհաստատվի որպես ճշմարիտ նաև Քրիստոսի ատյանի առջև: «Ինչպես Հովհաննես Մկրտիչն ուղարկվեց որպես սուրհանդակ Քրիստոսի առաջին գալստից առաջ, այնպես էլ քեզ վստահված պատգամը սուրհանդակ կլինի Քրիստոսի երկրորդ գալստից առաջ»: Թ. Լ. Օսբորնը այդ գիտեր, ինչպես երևում է իր վկայությունից, բոլոր մյուսները նույնպես գիտեին:

## ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԳԱՐԵԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով, որ կան բազում սուտ մարգարեներ և սուտ քրիստոսներ, որոնց մասին Հիսուսը հայտնել էր, կարևոր է ճանաչել բոլոր ճշմարիտ մարգարեների հատկությունները աստվածաշնչյան տեսանկյունից: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը.

Նրանք ուղղակիորեն Աստծո կողմից են կանչված:

Նրանք իրենց հանձնարարությունը անմիջապես Աստծուց են ստացել:

Նրանք ուղղակիորեն են ուղարկվել:

Նրանք խոսքը ուղղակիորեն են ստացել:

Նրանք ներկայացել են միայն Աստծո պատվերով:

Նրանք «տեսանողներ» էին, տեսիլքներ էին տեսնում:

Նրանք ասում էին միայն այն, ինչ Աստված է ասել:

Նրանք անում էին միայն այն, ինչ Աստված է պատվիրել:

Նրանք միշտ մերժվել են, հալածվել և այլն:

Նրանք ճանաչում էին միայն միակ Աստծուն, ում ծառայության տակ գտնվում էին:

Բոլոր այս հատկությունները չկան սուտ մարգարեների մոտ: Նրանք ուղղակի կոչում և աստվածային լիազորություն չեն ստացել: Նրանք Աստծո կողմից չեն ուղարկվել և չեն քարոզում բնօրինակ խոսքը, այլ իրենց մեկնությունները, հետևում են իրենց սեփական ծրագրերին, առանց ընդգրկվելու Աստծո ծրագրի մեջ: Միայն հրաշքներն ու նշանները չեն վավերականացվում Աստծո կողմից: Հետևյալ սուրբգրային հատվածները հստակ ցույց են տալիս դա:

«Եթե միջիցդ մեկ մարգարե կամ երազատես դուրս գա և քեզ նշան կամ հրաշք տա, և կատարվի քեզ ասած նշանը կամ հրաշքը, և քեզ ասի թե գնանք օտար աստվածներ պաշտենք, որոնք դու չես ճանաչում, այն մարգարեի կամ երազատեսի խոսքին մի լսիր, որովհետև Եհովա Աստվածը ձեզ փորձում է, որ հասկանաք թե արդյոք դուք ձեր Եհովա Աստծուն ձեր բոլոր սրտով և բոլոր հոգով սիրում եք: Ձեր Եհովա Աստծուն հետևեք և Նրանից վախենաք, Նրա պատվիրանները պահեք և Նրա ձայնին լսեք, Նրան պաշտեք և Նրան հարեք: Եվ այն մարգարեն կամ երազատեսը պիտի մեռնի, որովհետև ապստամբություն խոսեց ձեր Եհովա Աստծո դեմ, որ ձեզ Եգիպտոսի երկրից հանեց

և ձեզ ծառայության տանից ազատեց, որ ձեզ խոտորեցնի այն ճանապարհից, որ ձեր Եհովա Աստվածը ձեզ պատվիրեց, որ նրա մեջ գնաք և չարությունը ձեր միջից վերացնեք» (2 Օրին.13:1-5):

Միքիա մարգարեի օրերում Սեդեկիա «մարգարեն» իրեն երկաթե եղջյուրներ պատրաստեց և աղաղակեց. «Այսպես է ասում Տերը. սրանցով կիրես ասորիներին մինչև որ նրանց բնաջինջ անես: Եվ բոլոր մարգարեները այնպես էին մարգարեանում ասելով. «Գնա Ռամովթ-Գաղաադ և կհաջողես, և Տերը կտա թագավորի ձեռքը» (2 Մնաց. 18:10,11): Մինչդեռ դա էր «Այսպես է ասում Սեդեկիան», ոչ թե՝ «ԱՅՄՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ»: Սեդեկիան չորս հարյուր մարգարեների հետ խաբվել էր սուտ ոգուց և ընկել էր մոլորության մեջ: Ողջ Հին Կտակարանում միշտ եղել է միայն մեկ ճշմարիտ մարգարե և բազում սուտ մարգարեներ, որոնք եղել են սխալ ներշնչման տակ: Այդ մասին հատկապես կարելի է կարդալ Երեմիա մարգարեի գրքի 23-րդ գլխում և Եզեկիելի 13-րդ գլխում:

Ճշմարիտ մարգարեի՝ Երեմիայի միջոցով Տերը դիմում էր սուտ մարգարեներին և հանդիմանում նրանց. «... Բահաղով մարգարեացան և մոլորեցրին իմ Իսրայել ժողովրդին...»:

«Այսպես է ասում գորաց Տերը. մի՛ լսեք ձեզ համար մարգարեացող մարգարեների խոսքերին, նրանք ձեզ խաբում են, նրանք իրենց սրտի տեսիլքն են խոսում, և ոչ թե Տիրոջ բերանից... Ես այդ մարգարեներին չեմ ուղարկել, բայց իրենք վազ են տալիս, և ես նրանց հետ չեմ խոսել, բայց իրենք մարգարեանում են: Եվ եթե կանգնած լինեին իմ խորհրդում, այն ժամանակ լսել կտային իմ խոսքերը իմ ժողովրդին, և նրանց հետ կդարձնեին իրենց չար ճանապարհներից և իրենց չար գործերից՝»:

«Մինչև ե՞րբ է լինելու այս սուտ մարգարեացող մարգարեների սրտում, որ մարգարեանում են իրենց սրտի խաբեությունը, որոնք մտածում են, որ Իմ ժողովրդին մոռացնել տան Իմ անունը այն երազներով, որ իրար պատմում են, ինչպես որ իրենց հայրերը մոռացան իմ անունը Բահաղի պատճառով» (Երեմ.23:13-32):

«Եվ Տիրոջ Խոսքը եղավ ինձ՝ ասելով. «Մարդու որդի, մարգարեացիր Իսրայելի մարգարեացող մարգարեների դեմ և ասա իրենց սրտից մարգարեացողներին. լսեցեք Տիրոջ Խոսքը. այսպես է ասում Տեր Եհովան. վա՛յ հիմար մարգարեներին, որ իրենց հոգու հետևից են գնում և ոչինչ չեն տեսել՝»:

«Նրանք դատարկ տեսիլք ու սուտ գուշակություն են տեսնում, որ ասում են. «Տերն է ասում», թեև Տերը նրանց չի ուղարկել և հույս



են տալիս, թե խոսքը պիտի կատարվի: Չէ՞ որ դատարկ տեսիլքներ տեսաք, և սուտ գուշակություն խոսեցիք և ասացիք՝ Տերն է ասել, թեև ես չէի խոսել»:

«Սրա համար ես ձեզ դեմ եմ, ասում է Տեր Եհովան: Եվ իմ ձեռքը պիտի լինի այն մարգարեների դեմ, որոնք դատարկ տեսիլք են տեսնում և սուտ գուշակում: *Նրանք պիտի չլինեն իմ ժողովրդի խորհրդում՝ նրա համար և հենց նրա համար, որ մոլորեցնում են իմ ժողովուրդը ասելով, թե՝ խաղաղություն է, քանի որ խաղաղություն չկա...*» (Եզեկ.13:1-10):

Նա, ով ուշադիր է նայում այստեղ ներկայացված «ԱՅՄԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքին սուտ մարգարեների վիճակի և նրանց ծառայության վերաբերյալ, կտեսնի, որ նույն մոլորությունները, նույն խաբեությունները այսօր էլ կան: Գուշակություններով խառնված սուտ բաներ են մարգարեանում լավ մտադրություններով, սուտ տեսիլքներ են տեսնում: Ժողովրդի առջև փրկության մասին են խոսում, երբ իրականում չունեն Քրիստոսով աստվածային փրկությունը: Շատերը ենթարկվում են իրենց սեփական հոգուն, ուզում են Աստծուն օգնել և մարգարեանում են իրենց սրտի խորհուրդները, այնպես, որ մարդիկ մոլորության մեջ են ընկնում իրենց «ԱՅՄԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ» խոսքով և հաստատվում են իրենց կեղծ քրիստոնեության մեջ:

Այնուհետև Աստված հակառակ է կանգնում նաև եկեղեցիների և համայնքների մարգարեուհիներին, որոնք նույնպես մարգարեանում են իրենց երևակայության համաձայն: Բարի մտադրություններով ասում են. «Տերը ինձ մի խոսք է տվել քեզ համար», «Նա ինձ մի բան է ցույց տվել»: Բայց Աստված նրանց հանդիմանում է՝ ասելով. «Վայ այն կանանց...», որովհետև նրանք բարձիկներ են կարում և ամեն դեպքի համար համապատասխան չափ են գտնում՝ հոգիներ որսալու նպատակով: Հետո Տերը դատում է եկեղեցիների և համայնքների մարգարեուհիներին, որոնց «կին» է անվանում, ինչպես «Հեզաբել կնոջը», որն իրեն մարգարեուհու տեղ էր դրել, և ասում է. «Ուրեմն դատարկ տեսիլք մի տեսնեք և այլևս գուշակություն մի գուշակեք, և ես պիտի ազատեմ իմ ժողովրդին ձեր ձեռքից և կգիտե՞նաք, որ ես եմ Տերը» (հ. 23):

Ոչ մի ուրիշ պարզև միջոցով իրենց չեն ենթարկում քարոզիչներին և եկեղեցիներին, ոչ մի ուրիշ պարզև միջոցով չեն կարող բարձրացնել, ցած նետել, նենգափոխել այնպես, ինչպես մարգարեության սուտ պարզև միջոցով: Հոգու ճշմարիտ ծառայությունները և պարզևները միշտ ծառայում են եկեղեցու շինությանը, և երբեք եկեղեցուն չեն տանում մոլորության՝ այն քանդելու համար: Բոլորը չեն ուզում

ուղղվել, բայց Տերը կկանչի Իր ժողովրդին, կգատի նրան, կմաքրի և կարբի այնպես, որ ոչ մի սուտ մարգարե, ոչ մի սուտ մարգարեուհի իշխանություն չեն ունենա նրանց վրա: Նա, ով լսում է սուտ մարգարեությունները, չի կարող լսել մարգարեական ճշմարիտ խոսքը: Նույն կերպ, բոլոր նրանք, ովքեր ընդունում և հավատում են ճշմարիտ խոսքին և Սուրբ Գրքի ողջ մարգարեությանը, չեն ընկնի սուտ մարգարեությունների բերած բարեպաշտական մոլորությունների մեջ:

Ուզում ենք ևս մեկ անգամ ընդգծել ճշմարիտ մարգարեի հատկանիշները: Ամեն ճշմարիտ մարգարե և Աստծո ծառայի սեփական ականջներով ուղղակի կոչում է ստացել Աստծուց: Ամեն ճշմարիտ մարգարե խոսքը ստացել է ուղղակիորեն Աստծուց և այդպիսով Աստծո ձայնն է դառնում ժողովրդի համար: Աստծո խոսքը գալիս է նրանց մոտ, ում Տերն է լիազորել: Տիրոջ ճշմարիտ մարգարեներն ու առաքյալները սպասավորներ են համարվում, որովհետև Նրա անմիջական ծառայության տակ են, նրանք ուղարկված են Նրա կողմից և անձամբ ճանաչում են Տեր Աստծուն:

Միքիան ճշմարիտ մարգարեն ասում էր. «Կենդանի է Տերը, որ իմ Աստվածն ինձ ինչ որ ասի, այն են խոսելու՜ և նա ասաց. *«Ուրեմն լսեցեք Տիրոջ խոսքը. ես տեսա Տիրոջը նստած իր աթոռի վրա, և երկնքի բոլոր զորքերը կանգնած նրա աջ և նրա ձախ կողմին՜ և արդ Տերը սուտ ոգի է դրել քո այդ մարգարեների բերանում, բայց Տերը քեզ համար չարիք է խոսել»* (2 Մնաց. 18:13, 18, 22): Միքիան Աստծո մարգարեն էր, չորս հարյուր հոգին իրենք իրենց մարգարե էին հռչակել և խաբվեցին սուտ ոգու կողմից: Ուշադրություն դարձնենք տարբերությանը:

Հովսափատն ասաց. «Ինձ լսեցեք, Հուդա և Երուսաղեմի բնակիչներ. հավատացեք ձեր Տեր Աստծուն և հաստատ կմնաք, հավատացեք Նրա մարգարեներին, և հաջողություն կունենաք»: (2 Մնաց.20:20): «Հավատացեք Նրա մարգարեներին», որովհետև մարգարեներն ունեն Նրա բացահայտված խոսքը և բացահայտված կամքը:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ

Առաքյալները առանձնաշնորհուն ունեցան իրենց Տիրոջից և Ուսուցչից սովորելու տարիների ընթացքում և նույնիսկ Նրա հարությունից հետո քառասուն օրերի ընթացքում: Պողոսը Նրան տեսավ Նրա համբարձումից հետո գերբնական Լույսի տեսքով և լսեց Նրա ձայնը իր մայրենի՝ եբրայերեն լեզվով: «Որովհետև քեզ նրա համար երևացի, որ պաշտոնյա դարձնեմ քեզ՝ այն բաներին վկա լինելու համար, ինչ դու տեսար, նաև այն բաներին, որոնցով պիտի երևամ քեզ: Որպեսզի քեզ ազատեմ այդ ժողովրդից ու հեթանոսներից, որոնց մեջ ուղարկում եմ քեզ՝ նրանց աչքերը բացելու, խավարից դեպի լույսը և աստանայի իշխանությունից դեպի Աստված դարձնելու համար...» (Գործք 26:16-18): Հենց այդպիսին է աստվածային կանչը և հանձնարարությունը, որը կարևոր նշանակություն ունի փրկության պատմության համար: Պողոսը դիմում է ոչ միայն համայնքին, այլև մարգարեներին և նրանց, ովքեր հոգևոր են համարվում և ասում է, որ իր սեփական կարծիքը չի հայտնում, այլ Տիրոջ պատվերը: «Սակայն եթե մեկը կարծի, թե ինքը մարգարե է կամ հոգևոր, թող իմանա, ինչ որ գրեցի ձեզ, որովհետև այս Տիրոջ պատվիրաններն են: Իսկ եթե մեկը տգետ է, թող տգետ լինի» (1 Կորնթ.14:37,38):

Ողջ Աստվածաշունչը՝ Հին և Նոր Կտակարանը Աստծո խոսքն է: Մարգարեների և առաքյալների միջոցով Աստված Ինքն է խոսել. նրանք գործել են անմիջականորեն իրենից ստացած լիազորությամբ: Պողոսը կարող էր գրել. «Որովհետև Տիրոջ խոսքով ենք ասում ձեզ...» (1 Թես.4:15): Նա, ով փոխանցում է միայն այն, ինչ Աստծո մարդիկ են Աստծո հանձնարարությամբ ասել, իրականում ասում է այն, ինչ Աստված է ասել: Միայն այդ դեպքում ունկնդիրները կարող են վկայել. «Ահա հիմա գիտեմ, որ դու Աստծո մարդ ես, և բերանիդ միջի Աստծո խոսքը ճշմարիտ է» (3 Թագ.17:24): Բոլոր հարանվանություններից ու՞մ մասին կարող են ասել, որ Աստծո խոսքը զուտ ճշմարտություն է այն քարոզողների բերանում: Միայն նա, ով սովորեցնում և մկրտում է առաքյալների նման, սովորեցնում և մկրտում է ճշմարտապես: Եկեղեցու համար աստվածային կարգ ու կանոնը հաստատվել է սկզբում և Երուսաղեմից է դուրս եկել Աստծո խոսքը՝ ողջ աշխարհում տարածվելու համար: Այժմ ճշմարիտ Եկեղեցու վարդապետությունն ու գործերը պետք է լինեն այնպիսին, ինչպիսին եղել են այն ժամանակ:

Աստծո մարդ Պողոսը իր դարձի գալուց երեք տարի անց իր առաջին ճամփորդությունը կատարեց դեպի Երուսաղեմ՝ Պետրոսի հետ զրուցելու համար: Տասնհինգ օր այնտեղ մնալուց հետո նա

իմացավ այն ամենը, ինչ եղել է սկզբում: Նա նաև հանդիպեց Տիրոջ եղբայր Յակոբոսին: Տասնչորս տարի հետո նույն Աստծո պատվերով նույն Պողոսը Բառնաբասի և Տիտոսի հետ մեկ ուրիշ ճամփորդություն կատարեց Երուսաղեմում: Այս անգամ տեղեկանալու համար չէր, այլ համեմատելու իր ուսմունքը առաքյալների ուսմունքի հետ, որպեսզի զուր տեղը վազած չլինի (Գաղատ. 1:18, 2:2):

Այստեղ կոչ ենք անում բոլոր քարոզիչներին, ավետարանիչներին, վարդապետներին, մարգարեներին, Աստծո թագավորության բոլոր մշակներին հոգով նույն ճամփորդությունը կատարել Երուսաղեմում և համեմատելով տեսնել, թե արդյոք իրենց քարոզչությունը և կիրառությունը համապատասխանում են գրված խոսքին: Համեմատությունը միշտ պետք է լինի բնօրինակի հետ: Այն, ինչ եղել է սկզբում և ինչպիսին եղել է, պետք է լինի նաև վերջում. Հիսուս Քրիստոսի վերադարձից առաջ Հարս-Եկեղեցին կատարյալ ներդաշնակության մեջ պետք է լինի Աստծո և Իր խոսքի հետ: Ժամի պատվիրանն ու պատգամն է լիովին վերադառնալ աստվածաշնչյան ուսմունքներին և առաքյալների գործերին:

Կեղծիքներն ու աղավաղումները, որոնք արդեն վաղուց էին սկսվել, իրենց արտացոլումը գտան մեծ ուրացության մեջ և զագաթնակետին հասան Նիկիայի տիեզերաժողովի կազմակերպության մեջ Բ. Հ. 325 թվականին: Դրան հաջորդեցին ուրիշ տիեզերաժողովներ և եկավ միջնադարը՝ խավարի ժամանակաշրջանը, որում խոսքի լույսը գրեթե անհետացավ: Ի վերջո նոր սկիզբ դրվեց Ռեֆորմացիայի միջոցով, որին հաջորդեցին հաջորդ դարերում ծագած արթնություններ, որոնց ընթացքում Տերը ավելի ու ավելի շատ աստվածաշնչյան ճշմարտություններ դրեց աշտանակի վրա: Դժբախտաբար, հին ավանդույթները շարունակվեցին նաև այն արթնություններում, որոնք 20-րդ դարի սկզբում տեղի ունեցան Հոգու զորավոր գործողությամբ: Այսպես թշնամուն հաջողվեց ճշմարտությունը ներկայացնել որպես սուտ, իսկ սուտը՝ որպես ճշմարտություն նույնիսկ այնտեղ, ուր Աստծո Հոգին էր գործում: Հին թխմորը նորից ու նորից փչացնում էր ամեն նոր բան: Հայտնվեցին հավատացյալների նոր կազմակերպված համայնքներ և շարունակում են հին ավանդույթը:

Այն, ինչ մեր Տերը այն ժամանակ ասաց հրեաներին Մարկ. 7-րդ գլխում, վերաբերում է նաև անկում ապրած քրիստոնեությանը. «Այս ժողովուրդն Ինձ շրթունքներով է պատվում, իսկ նրա սիրտն Ինձանից հեռացած, բաժանված է: Սակայն զուր տեղն են պաշտում ինձ՝ այնպիսի վարդապետություններ սովորեցնելով, որոնք մարդկանց

պատվիրաններ են: Որովհետև Աստծո պատվիրանները թողած մարդկանց ավանդույթն էք պահում... նրանց ասաց. «Լա՞վ է, որ Աստծո պատվիրանները անարգում էք, որ ձեր ավանդույթը պինդ պահեք» (Մարկ. 7:6-9):

Հնարավո՞ր է, որ խարիզմատիկ հավաքույթներում ողջ երկրպագությունը և փառաբանությունը իզուր լինի, որովհետև մարդու ուսմունքին և պատվիրաններին են հավատում Աստծո խոսքի փոխարեն: Մեր Տեր Հիսուսը պայման դրեց և ասաց. «Նա, ով ինձ հավատում է, ինչպես Գիրքն է ասում...» (Հովհ.7:38): **Տերը պահանջում է, որ Աստծուն երկրպագեն Հոգով և Ճշմարտությամբ** (Հովհ. 4:24): Աստծո խոսքը ճշմարտություն է, որի մեջ Սուրբ Հոգին առաջնորդում է ճշմարիտ հավատացյալներին և սրբացնում է նրանց այդ խոսքով:

Այժմ, որ այնքան մոտ է Հիսուս Քրիստոսի վերադարձը, կարևոր է նաև մարգարեական մասը, ինչպես Պետրոսն է հրաշալի ձևով շեշտել՝ գրելով. «Որովհետև մենք ոչ թե վարպետությամբ հնարված առասպելների հետևելով ձեզ ցույց տվեցինք մեր Տեր Հիսուս Քրիստոսի զորությունն ու գալուստը, այլ Նրա մեծափառությանն ականատես լինելով» (2 Պետր.1:16): Առաքյալը ականատես և վկա էր եղել Այլակերպության լեռան հրաշալի իրադարձությանը: Նա կատարյալ վստահությամբ գրեց. «Եվ մարգարեական ավելի հաստատ խոսքն ունենք, որ եթե դրան ուշադրություն դարձնեք, լավ կանեք, որ մութ տեղը լույս է տալիս, *մինչև որ օրը լուսանա, և առավոտյան աստղը ծագի մեր սրտերում*» (հ. 19):

Այսօր ո՞վ կարող է իսկապես ասել, որ մարգարեական խոսքն ունի, ոչ թե մեկնության, այլ իրագործման մեջ, որը մութ տեղը լույս է տալիս: Մի՞թե ամենուրեք զբաղված չեն իրենց սեփական մարգարեություններով՝ միշտ նորանոր բաներ ներկայացնելով այնպես, որ այլևս չեն զգում գրված մարգարեական խոսքի կանչը: Սուրբ Գրքի ոչ մի մարգարեություն սեփական մեկնություն թույլ չի տալիս, և չի կարող չեղյալ համարվել բազում սեփական մեկնությունների պատճառով. հակառակը, մարդկային մարգարեությունները չեղյալ են հայտարարվում Աստծո խոսքի իշխանությամբ: Այսինքն՝ սուրբգրային մարգարեությունները միշտ կապված են խոստումների հետ, որոնք իրականանալով, վավերացվում են:

Եթե այս ժամանակներում չհետևեր աստվածային արդարադատությունը, այս շարադրանքը նպատակին չէր հասնի. «Եկեք վեր գնանք Եհովայի սարը, Հակոբի Աստծո տունը, և

Ուստի կտրվորեցնի մեզ իր ճանապարհները, և մենք կգնանք նրա շավիղներով, որովհետև Սիոնից դուրս է գալու օրենքը, և Տիրոջ Խոսքը՝ Երուսաղեմից» (Ես.2:2,3): Ճշմարիտ Խոսքը դուրս է եկել Երուսաղեմից: Այնտեղ են հայտնվել մարգարեները, ինչպես նաև մեր Տերն ու առաքյալները, այնտեղ է դրվել Նոր Կտակարանի Եկեղեցու հիմքը, այնտեղ է Եկեղեցին կյանքի կոչվել: Վարդապետության և կիրառության առումով այնտեղ պետք է վերադառնա Եկեղեցին:

## ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ ԵՎ ՍՈՒՏ ՔՐԻՍՏՈՍՆԵՐ

Այժմ կրոնական ոլորտում ապրում ենք երբևէ տեղի ունեցած ամենամեծ մոլորության մեջ: Հիսուսը նախօրոք ասաց Մատթ. 24:11 համարում, որ «շատ սուտ մարգարեներ դուրս կգան և շատերին կմոլորեցնեն»: Ամեն կրոնի, դավանանքի, եկեղեցու, համայնքի ներկայացուցիչները բնականաբար ներկայանում են որպես ճշմարիտ: Արտաքնապես շատ բաներ զարդարվում են սուրբգրային հատվածներով՝ ազդեցություն գործելու համար: Մինչդեռ ամեն բան քննող Տերն ասում է. «Ձգուշացեք սուտ մարգարեներից...»: Մենք պետք է մեր սրտում ընդունենք այս նախազգուշացումը, որովհետև միշտ բոլորը կարծել են, թե սուտ մարգարեները ուրիշ տեղերում են, բայց այստեղ խոսքը Աստծո թագավորության մասին է, այսինքն՝ հավատացյալների, եկեղեցու: Իր ձևով սատանան էլ է հավատում, բայց ոչ Սուրբ Գրքի համաձայն: Աշխարհի բոլոր կրոններում, նաև քրիստոնեական կրոններում շատերը հավատում են ինչպես ուզում են և ինչին ուզում են: Երկիրը լեցուն է այդպիսի հավատացյալներով: Ռեֆորմացիայի ժամանակներում հարց առաջացավ սուտ մարգարեների և հակաքրիստոսի վերաբերյալ: Այս հարցում բոլոր ռեֆորմատորները համաձայն էին իրար հետ, չնայած մնացած տարբերություններին: Մեր մտահոգությունը այս շարադրանքում վերաբերում է բազում սուտ մարգարեներին և սուտ քրիստոնեներին:

Մինչդեռ ովքե՞ր են սուտ մարգարեները: Ինչպե՞ս ճանաչել նրանց: Թողնենք, որ խոսի միայն Սուրբ Գիրքը: Որովհետև երկրի վրա չկա ոչ մի աստվածաբանական ֆակուլտետ, ոչ մի քարոզիչների ճեմարան, որտեղ իսկապես սովորեցնում կամ սովորում են Աստծո խորհրդավոր ծրագիրը: Բացահայտված Խոսքի և Աստծո կամքի մեջ մուտք ունենալու համար են անհրաժեշտ են աստվածային իշխանություն և լիազորություն առաքյալների և մարգարեների օրինակի պես: Նրանք մեզ թողել են այն, ինչ նախօրոք ասել է ամենագետ Աստված, ով սկզբից ի վեր գիտեր ողբերգական զարգացումները:

Առաջին հերթին մենք պետք է ընդունենք, որ տրամաբանորեն ամեն կեղծում հնարավորինս պետք է նման լինի բնօրինակին: Կեղծ դուլարի թղթադրանը այնքան նման պետք է լինի իսկականին, որ անփորձ մարդը չկարողանա տարբերել: Դա ինձ հիշեցրեց մի դեպք, որ անձամբ ինձ հետ է կատարվել: Շատ տարիներ առաջ բանկային փոխանցում էի կատարում, հանկարծ գանձապահը հապաղեց, բարձրացրեց հարյուր մարկանոց մի թղթադրան և ասաց. «Սա կեղծ հարյուրանոց է: Ես պետք է հայտնեն քրեական ոստիկանությանը»: Անփորձ մարդը

դա չի նկատում, բայց փորձագետը ճանաչում է անմիջապես: Դա ինձ համար խորը դաս եղավ: Կեղծարարը ես չի, այդ թղթադրանը փոխանցողներից շատերը նույնպես կեղծարար չէին: Կան շատերը, որոնք փոխանցում են կարծեցյալ «քրիստոնեական ուսմունքի գանձերը» առանց նկատելու, որ դրանք կեղծիքներ են, որովհետև չեն ճանաչում բնօրինակը և չեն տարբերում նմանակումները:

Սուտ մարգարեներն ու սուտ քրիստոսները հենց կեղծարարները չեն, այլ առանց գիտակցելու փոխանցում են կեղծվածը և արդյունքում ինչ-որ ընդհանուր բան ունեն՝ նրանք առաջնորդում են, ճանաչված, առաջնորդող դիրք ունեն, բայց մոլորեցնում են, որովհետև իրենք էլ մոլորեցված են եղել (2 Տիմ. 3:13): Մատթ. 24:4,5 համարներում Տերն ասում է. «Ձգուշացեք, որ մեկը ձեզ չխաբի: Որովհետև շատերն իմ անունով կգան ու կասեն՝ «Ես եմ Քրիստոսը»: Պատերազմների և բնական աղետների մասին խոսելուց հետո Նա ևս մեկ անգամ է խոսում սուտ մարգարեների մասին, որոնք մոլորեցնելու են շատերին (Մատթ. 24:11):

Սուտ մարգարեներն ու սուտ քրիստոսները բոլորովին չեն համենատում իրենց ուսմունքը խոսքի հետ. նրանց գործելակերպը հնարավորին չափ մնան է ճշմարիտին, միայն Աստծո խոսքի իսկական մասնագետն է ճանաչում ընդօրինակումը՝ նմանակումը: «Քրիստոս» բառը ծագում է հունարենից և համապատասխանում է եբրայերեն «Մաշիա» բառին, որն էլ նշանակում է «Օծյալ»: Հին Կտակարանում թագավորներն ու քահանաները օծվում էին: Սավուղ թագավորը օծյալ էր, Դավիթ թագավորը նույնպես, Ահարոնն ու իր որդիները օծյալ էին: Ճշմարիտ մարգարեները կոչվում էին «Աստծո օծյալները»: Տերն Ինքն ասել է. «Մի դիպչեք իմ օծյալներին և իմ մարգարեներին չար մի արեք» (Սաղմոս 105:15): Հիսուսը Օծյալն էր, Աստծո Քրիստոսը: Ըստ Դուկաս 4:17-19 համարների նա կարդաց Եսայի մարգարեի գրքի 61-րդ գլխից հետևյալ խոսքերը. «Տիրոջ Հոգին ինձ վրա է, որովհետև Նա ինձ օծեց...»:

Պետրոսը հաստատում է այդ. «Բայց Աստված ինչ որ բոլոր մարգարեների բերանով նախապես ասաց Քրիստոսի (Օծյալի) չարչարվելու մասին, այնպես էլ կատարվեց» (Գործք 3:18):

«Այն Հիսուսին, որ Նազարեթից է. թե Աստված նրան ինչպես Սուրբ Հոգով ու զորությամբ օծեց. որ ման եկավ բարիք գործելով ու չարից բոլոր հալածվածներին բժշկելով, որովհետև Աստված նրա հետ էր» (Գործք 10:38):



Մինչդեռ Տերը խոսում է սուտ օծյալների մասին, այսինքն՝ նրանք օծյալ են, բայց կեղծ են: Մի հատկանիշ կա, որ հանդիպում է բոլոր մոլորության մեջ գտնվողների մեջ՝ նրանք միասին հավաքվում են ճշմարտության մեջ եղողների դեմ, այսինքն՝ վերջին հաշվով Տիրոջ և Նրա օծյալների դեմ (Գործք 4:24-31): Ոչ միայն եգիպտացի Յանեսն ու Յամրեսն են հակառակ կանգնել Մովսեսին, այլև իր սեփական շրջապատից ապստամբեցին ղեկավարող եղբայրներ Կորխը, Դաթանն ու Աբիրոնը (Թվոց 16): Նրանք միաբանվեցին, մի տեսակ կազմակերպություն ստեղծեցին և ապստամբեցին Աստծո դեմ և ճշմարիտ մարգարե Մովսեսի դեմ:

Եվ կրկին, Մատթ. 24-րդ գլխում Տերը անդրադառնում է սուտ մարգարեներին և սուտ քրիստոսներին և անում է այսնախագգուշացումը. «Որովհետև սուտ քրիստոսներ ու սուտ մարգարեներ վեր կկենան ու մեծ նշաններ և սքանչելիքներ կանեն, մինչև որ, եթե հնարավոր լինի, ընտրյալներին էլ մոլորեցնեն» (Մատթ. 24:24): Եվ կրկին՝ կեղծ, բայց հրաշքներ ու նշաններ գործող: Նա, ով կարող է հասկանալ, թող հասկանա: Դա բնավ չի կարող համապատասխանել և ընդհանրապես տեղ չունի Աստծո թագավորության մեջ: Մինչդեռ, Կորխի և Դաթանի պես, նրանք պատկանում են եկեղեցուն, բայց գտնվում են սխալ ներշնչման տակ և սխալ վարդապետության մեջ: Տերն Ինքը միայն իրավունք ունի եկեղեցուն տարբեր ծառայություններ հաստատելու: Այնտեղ ոչ ոք չի կարող անել այն, ինչ ուզում է, որովհետև դա անկման կտաներ, ինչպես դա կատարվեց Արուսյակի՝ օծյալ քերովբեի հետ: Պողոսը մեզ զգուշացնում է սուտ եղբայրներից: Նրանք եղբայրներ են, բայց սուտ են: Այժմ կան սուտ մարգարեներ և սուտ օծյալներ, և նրանք շատ են, ինչպես ասում է մեր Տերը:

Նրանք իրենց ճշմարտացիությունը ապացուցելու համար հրաշքներ ու նշաններ են ներկայացնում, որով մոլորեցնում են անկեղծ հավատացյալներին: Նրանք ամբարիշտ մարդիկ չեն, ո՛չ, կեղծարարներ էլ չեն. նրանք իրենց ձևով հավատացյալ են և սիրալիիր, և ինչպես պնդում են, որպես քարոզիչներ, հավատում են լրիվ Ավետարանին և ներկայանում են դասական և համոզիչ ձևով: Նրանք նույնիսկ ավետարանչական պատվերում խոստացված հատկանիշներն ունեն՝ հրաշքներ, նշաններ և այլն: Ամեն գործ թվում է ճշմարիտ և բարի: Նրանց հավաքությունները գրավում են տարբեր դավանանքների մարդկանց, և բոլորն էլ տպավորված և զարմացած են: Տերն Ինքը մեզ մղեց մտածելու, որ պետք է զգուշանալ, որ չլինի թե ընտրյալներն էլ մոլորվեն, եթե հնարավոր լիներ: Բայց գոհություն Աստծուն, դա հնարավոր չէ: Անկասկած, դա այնքան մոտ

է ճշմարիտին, որ միայն բնօրինակը ճանաչողները և իսկապես Սուրբ Գրքի համաձայն հավատացողներն են նկատում տարբերությունը և կռահում մոլորությունը: Ընտրյալները չեն հետևում հրաշքներին ու նշաններին, նրանք հետևում են իրենց Տիրոջն ու Փրկչին: Նրանք ամեն ուսմունք, մարգարեություն, քարոզչություն քննում են Աստծո հոսքով, և թույլ չեն տալիս, որ որևէ բան գրավի իրենց, այլ մնում են առաքյալների վարդապետության մեջ (Գործք 2:42, Եփես. 2:20, 2 Պետր.3:2 և այլ համարներ):

Միշտ եղել են նրանք, ում Աստված է ուղարկել, և այնպիսիները, որոնք իրենք են ներկայացել: Սուտ մարգարեներն ու սուտ քրիստոսները իրենց կողմից են ներկայանում, և դա անում են Աստծո թագավորության ներսում: Նրանք չեն մոլորեցնում կանխամտածված ձևով, նրանք այդ չեն էլ գիտակցում: Նրանք կեղծարարները չեն, այլ կեղծվածն են փոխանցում: Նրանք անկեղծ են, բայց մոլորված, ծնվել են կրոնական մոլորության մեջ: Դա նույնպես նախօրոք հաղորդվել է առաքյալների կողմից: Կեղծումները հին ավանդույթների արդյունք են: Մինչդեռ այն ամենը, ինչ ճշմարիտ չէ, այսինքն՝ Աստվածաշնչին չի համապատասխանում, մոլորություն է: Մենք պետք է շատ լրջորեն ընդունենք այդ նախազգուշացումը և հարցնենք.

Ովքե՞ր են այսօր սուտ մարգարեներն ու սուտ վարդապետները, որոնք կորստական հերձվածողություններ են ներս բերում, որոնց դեմ մեզ զգուշացնում է Պետրոսը և որոնց միջոցով հայհոյվում է ճշմարտության ճանապարհը (2 Պետր. 2:1-3):

Ովքե՞ր են այսօր նրանք, ովքեր շիտակ ճանապարհը թողեցին, ազախության վարժված սիրտ ունենալով՝ Բաղասամի ճանապարհին հետևեցին (2 Պետր.2: 12-19):

Ովքե՞ր են այսօր նեռերը, որոնց մասին գրում է Հովհաննեսը (1Հովհ. 2:18-20):

Ովքե՞ր են այսօր շատ սուտ մարգարեները, որոնք աշխարհ են դուրս եկել (1 Հովհ. 4:1):

Ովքե՞ր են այսօր այն մարդիկ, որոնց մասին Պողոսն ասում է, որ եկեղեցու միջից են դուրս եկել և սխալ ուսմունքներ են բերում՝ եղբայրներին իրենց հետևից տանելու համար (Գործք 20:26-32):

Ովքե՞ր են այսօր այն մարդիկ, որոնք ուրիշ Հիսուս են քարոզում, ուրիշ Ավետարան են հռչակում, ուրիշ հոգու ազդեցության տակ են (2 Կորնթ. 11:4):

Ովքե՞ր են այսօր նրանք, ում մասին Աստծո Չոգին ասում է, որ վերջին ժամանակներում վեր կկենան, կլսեն մոլար ոգիներին և կհռչակեն դևերի վարդապետություններ (1 Տիմ. 4:1-3):

Այն, ինչ Աստծուց չէ, ուրեմն սատանայից է: Ոչ մի նմանակում, ոչ մի սուտ ճշմարտությունից չի ծագում (1 Չովհ. 1:21): Իսկապես ողբերգական է, որ մարդիկ հստակորեն չեն տեսնում, որ ավանդական քրիստոնեության մեջ ճշմարիտը փոխարինվել է կեղծիքով: Թեմաները մնացել են, բայց բովանդակությունը փոխվել է:

## ԱՅԺՄ ԱՍԵՆ ԻՆՉ ՆՈՐԻՑ ՊԵՏՔ Է ՍՏՈՒԳՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԾՇՄԱՐԻՏ, ՈՒՍՍՈՒՆՔԸ` ԾՇԳՐԻՏ

Եկեղեցու առաջին շրջանում եղան մարդիկ, որոնք հեռացան առաքյալների վարդապետությունից և դիմակազերծվեցին որպես ստախոսներ (Հայտն.2:2): Մինչդեռ շատ շուտով սխալ ազդեցության միջոցով աղավաղված ուսմունքը ավելի ու ավելի դուրս մղեց ճշմարիտ ուսմունքը: Աստծո խոսքը փոխարինվեց մարդկային խոսքով, մինչև որ ի վերջո Աստծո բարեհաճությունը բացահայտվեց այն փաստի մեջ, որ Թագավորությունը տրվի փոքր հոտին (Ղուկաս 12:32): Եվ այդպես Եկեղեցու բոլոր շրջաններում մնաց միայն ընտրյալ մնացորդը (Հռոմ. 11:5): Ահա թե ինչու եկեղեցիներին ուղղված յոթ նամակներում խոստումները տրվում են միայն հաղթողներին (Հայտ. 2-րդ և 3-րդ գլուխ): Շատ շուտով եղան հավատացյալներ, որոնք հարեցին Բաղասամի վարդապետությանը, որը ժողովրդին տարավ անկման, և նիկողայոսյանների վարդապետությանը, որոնք իրենց բարձր էին դասում աշխարհականներից (Հայտն. 2:14-16): Թույլ էին տալիս նույնիսկ ինքնակոչ մարգարեուհի Յեզբելին սովորեցնել և գործել սեփական հանցանքները (Հայտն. 2:20-21): Իրականում հենց սկզբից գործ ենք ունեցել լիովին ողբերգական զարգացման ուրացության հետ, այսինքն՝ Աստծուց և ճշմարիտ հավատքից հեռացման՝ շեղումների և ամեն տեսակ կեղծումների միջոցով: Շատ շուտ մոլորությունը սկսվեց Սուրբ Գրքի մեկնության պատճառով: Հետագայում այդ մեկնությունները քննարկեցին տիեզերածողովների ժամանակ և ի վերջո գրվեցին որպես եկեղեցու վարդապետություններ և դոգմաներ:

Ճշմարիտ և սուտ օձյալների միջև վճռորոշ տարբերությունը սա է. իսկապես Աստծո կողմից ուղարկված մարդիկ քարոզում են խոսքը, և Տերը այն հաստատում է նշաններով ու հրաշքներով, որոնք ուղեկցում են: Իրենք իրենց հաստատող մարդիկ պատմում են պատմություններ, քարոզում են հրաշքների և նշանների մասին և մարդկանց տանում են խոսքի կողքով դեպի մոլորություն: Միայն նա, ով մնում է խոսքի մեջ, մնում է Աստծո մեջ: Բայց, նախ ամբողջությամբ պետք է ընդունենք խոսքը, որպեսզի կարողանանք մնալ խոսքի մեջ:

Ժամի պատվիրանն է՝ միայն Սուրբ Գրքի վկայության միջոցով որոշել, թե ով է սուտ օձյալ, ով է սուտ մարգարե, կամ երկուսը միաժամանակ: Խոսքը միշտ գալիս է ճշմարիտ մարգարեների մոտ, իսկ սուտ մարգարեները միշտ ունեցել են խոսքի իրենց մեկնությունները,

բայց ոչ երբեք բնօրինակ խոսքը: Նույնը վերաբերում է սուտ օծյալներին: Նրանք չունեն Քրիստոսի և առաքյալների ճշմարիտ վարդապետությունը, այլ իրենց սեփական վարդապետական ուսմունքը, որը ներմուծվել է եկեղեցու պատմության ընթացքում: Աստված Ինքն է խոսել ճշմարիտ մարգարեների միջոցով, իսկ սուտ մարգարեները խոսում են Նրա մասին իրենց սեփական ծրագրի համաձայն:

«Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և հայտնվել է մարմնով՝ սա դավանում են ողջ քրիստոնեության մեջ, նաև սուտ մարգարեներն ու սուտ օծյալները: Բայց այդ դավանանքը ճշմարիտ չէ, եթե այդ ասելով հասկանում են այլ բան, քան Աստվածաշունչն է ասում: Քրիստոնեական աստվածաբանության տեսություններից մեկն ասում է, որ Որդին ստեղծվել է աշխարհի ստեղծումից առաջ, որպես Աստծո ստեղծագործության սկիզբ: Մեկ ուրիշ տեսության համաձայն Նա ծնվել է Աստծուց երկնքում: Դրա վերաբերյալ Նիկյան հավատո հանգանակում գրված է. «Աստված՝ Աստծուց, Լույս՝ Լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց»: Եթե այդպես լիներ, կլինեին երկուսը, որոնք Աստված են, Լույս են և այսպես շարունակ: Երրորդ տեսությունն ասում է, որ Որդին Հին Կտակարանի Միքայել հրեշտակն է: Եվ չնայած այդ ամենին, բոլորն էլ ասում են. «Նա Քրիստոսն է, Աստծո Որդին»: Կան ուրիշ տարբերակներ էլ, որոնք չեն համապատասխանում Սուրբ Գրքի վկայությանը, այլ ավելի շուտ մարդկային խորհրդածությունների և երևակայության արդյունք են:

Հին Կտակարանում Նա Տերն է, Յահվեն, ԵՍ ԵՄ–ը, Լոզոսը, խոսքը, Նա տեսանելի, գործող և քայլող հայտնությունն է անտեսանելի Աստծո, ով Իր բնույթով Հոգի է (Հովհ. 4:24) և որին ոչ ոք չի տեսել (1 Տիմ. 6:16, 1Հովհ. 4:12): Նրան, որ քայլում էր Եդեմի պարտեզում, խոսում էր Աբրահամի հետ, հայտնվեց Մովսեսին և խոսեց բոլոր մարգարեների միջոցով, այն ժամանակվանից, երբ Նա մարդ դարձավ, ճանաչում ենք որպես Աստծո Որդի, ով ծնվեց այս երկրի վրա, Բեթլեհեմի մի գոմում: «Այսօր ձեզ Դավթի քաղաքում մի Փրկիչ ծնվեց, որ է՝ Օծյալ Տերը» (Ղուկաս 2:11): Ոչ թե երկնքում գտնվող Որդին երկրի վրա Որդի դարձավ, այլ խոսքը մարմին դարձավ, Տերը Ծառա դարձավ: Արդարացի է մնում Պողոսի ասածը. ոչ ոք չի կարող ճշմարտապես անել Աստվածաշնչի վրա հիմնված այս վկայությունը՝ Հիսուս Քրիստոսը Տերն է, եթե ոչ Աստծո Հոգով (1 Կորնթ.12:3): Ձևական դավանանք շատերն են բերում: Նույնիսկ դևերն են աղաղակել. «Թող տուր, դու մեզ հետ ի՞նչ գործ ունես, Հիսուս Նազովրեցի» և աղաղակում էին ու ասում. «Դու Քրիստոսն ես՝ Աստծո Որդին» (Ղուկաս 4:34, 41 և այլ

համարներ): Դևերի այս դավանությունը նրանց չարդարացրեց, նրանք մնացին այն, ինչ եղել են նախկինում: Դրանով նրանք ո՛չ քրիստոնյա դարձան, ո՛չ էլ հավատացյալ:

Պետք է մեզանից յուրաքանչյուրին անձնական հայտնություն տրվի, ինչպես մի ժամանակ՝ Պետրոսին (Սատթ. 16:13-17): Մնացած բոլոր բաները մտահայեցական կրկնություններ են, որոնք ոչ մի արժեք չունեն Աստծո մոտ: ԱՅՄՊԵՍ Է ԱՍՈՒՍ ՏԵՐԸ. «... ոչ որ չզգիտի, թե ով է Որդին, բացի Հորից, և ով է Հայրը, բացի Որդուց, և ում որ Որդին կամենա հայտնել» (Դուկաս 10:22): Ինչքան, որ ճշմարիտ է, որ Աստված Որդու մեջ հայտնվեց, նույնքան հաստատ է, որ այդ հայտնությունը պետք է յուրաքանչյուրս ստանանք: Ամեն քրիստոնյա, նույնիսկ հակաքրիստոսը կարող է շրթունքներով դավանել, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, բայց նկատի ունենալով այլ բան, որը տարբերվում է Սուրբ Գրքի վկայությունից: Առանց Սուրբ Հոգու հայտնության դա մնում է մտահայեցական կրկնություն: Առաքյալների վկայությունը կարելի է կարդալ Աստվածաշնչի շատ հատվածներում: Պողոսն այն ամփոփում է 1 Տիմ.3:16 համարում: Իրականում միայն մեկ Աստված կա, մեկ Արարիչ, մեկ Հայր, որ բացահայտվեց Որդու մեջ, մեկ Տեր, մեկ ճշմարիտ հավատք, մեկ ճիշտ մկրտություն (Եփես. 4:4-6):

Ամեն վարդապետություն և դավանանք, ինչպես նաև այն ամենը, ինչ չի համապատասխանում սկզբնական քրիստոնեության առաքյալների ուսմունքին, սուտ է: Սկզբնական Եկեղեցու օրինակը միակն է, որ ուժի մեջ է մնալու մինչև վերջ: Ամենքը և ամեն բան պետք է քննվեն, իսկ միակ չափանիշը Աստծո անսխալական, հավիտենական Խոսքն է:

Սատթ. 7:15 համարում Տերն ասում է. «Ձգուշացեք սուտ մարգարեներից, որոնք ձեզ մոտ ոչխարի հանդերձով են գալիս, բայց ներքուստ հափշտակող գայլեր են»: Այո, «զգուշացեք...». հեշտ է ասել, բայց ոչխարի մորթին ծածկում է հափշտակող գայլի բնությունը: Բանալին բառն է՝ «հափշտակող»: Նրանք կթալանեն ոչխարներին և նրանց չեն տանի արածելու Խոսքի կանաչ մարգագետիններում, այլ կխուզեն նրանց՝ քարոզելով «բարգավաճման ավետարան» և հարստանալով դրա միջոցով: 21-22 համարներում դրա մասին ավելի ճշգրիտ կերպով ենք իմանում. «Ոչ թե ամեն Ինձ «Տեր, Տեր» ասողն է երկնքի արքայություն մտնելու, այլ նա, ով կատարում է իմ Հոր կամքը, որ երկնքում է: Այն օրը շատերն Ինձ կասեն. «Տեր, Տեր», չէ՞ որ Քո անունով մարգարեացանք ու Քո անունով դևեր հանեցինք, Քո անունով

շատ հրաշքներ արեցինք”»։ Այն խմբի մարդկանց նկարագրությունը, որոնց մասին խոսվում է, հստակ է և մեկնաբանության կարիք չկա։ Թե՞ այնուամենայնիվ կարիք կա կարցնելու, թե արդյոք խոսքը մեծ հրաշագործների, ավետարանիչների և խարիզմատների մասին չէ։ Առաջին հերթին այդ «մեծ մարդիկ» Տիրոջը ներկայացնում են այն ամենը, ինչ նրանք արել են Նրա անունով։ Մի՞թե դա ուշագրավ չէ։ Բայց դա բնավ ազդեցություն չի գործում Տիրոջ վրա։ Նա ասում է. «Ես էլ այն ժամանակ նրանց հստակ կասեմ. «Ձեզ երբեք չեմ ճանաչել. Ինձանից հեռացե՛ք, ո՛վ անօրենություն գործողներ»» (Մատթ.7:23)։

«Մի՞թե այդ ամենը Քո անունով չենք արել»՝ այս հարցը հստակ ցույց է տալիս, որ նրանք այդ ամենը Տիրոջը չեն վերագրում, այլ պարծենում են, և այդ ամենի մեջ իրենց սեփական անունն է փառավորվել։ Աստծո ճշմարիտ ծառաները գիտեն, որ փրկությունը, բժշկությունը, բոլոր օրհնությունները գալիս են միայն Աստծուց, և անում են այնպես, ինչպես գրված է. «Նա, ով պարծենում է, թող Տիրոջով պարծենա» (1Կորնթ.1:31, 2 Կորնթ.10:17,18)։ Աստծո Որդին խոնարհությամբ ասաց. «Այն խոսքերը, որ ես խոսում եմ ձեզ հետ, ինձանից չեմ խոսում, այլ Հայրը, որ բնակվում է իմ մեջ, նա է այդ գործերը կատարում» (Հովհ.14:10)։ Պետրոսն ու Հովհաննեսը նույնպես ի ծնե կադի բժշկությունը իրենց չվերագրեցին, այլ Տիրոջը, ուն գործությունը բացահայտվեց նազովրեցի Հիսուս Քրիստոսի Անվան մեջ։ Որովհետև ինչպես Աստված գործում է Քրիստոսի միջոցով, Քրիստոսն էլ շարունակում է Իր գործը Եկեղեցու ծառայությունների միջոցով։ Եկեղեցին կենդանի օրգանիզմ է, ոչ թե կրոնական կազմակերպություն։

Աստծո ճշմարիտ որդիներն ու դուստրերը ունեն Աստծո Որդու միտքը և ասում են ամբողջ սրտով. «Սակայն ոչ թե իմ, այլ Քո կամքը թող լինի» (Ղուկաս 22:42)։ Տերն ասում է. «Որովհետև ես իջել եմ երկնքից, որպեսզի ոչ թե իմ կամքը կատարեմ, այլ ինձ ուղարկողի կամքը» (Հովհ. 6:38, 4:34)։ «...որ Քո կամքը կատարեմ, ո՛վ Աստված» (Եբր. 10:7)։ «Որովհետև ով Աստծո կամքը կատարի, նա է իմ եղբայրը, քույրը և մայրը» (Մարկ. 3:35)։ Այդ կամքով են Աստծո ճշմարիտ զավակները մեկընդմիջտ սրբվում (Եբր.10:10)։

Աստծո կամքի առջև, որը կատարվեց Աստծո Որդու միջոցով, մինչև խաչի մահվան գնացող կատարյալ հնազանդությամբ, հակադրվում է Արուսյակի ինքնակամությունը։ Երկնքում սկզբնապես օծյալ եղողի ինքնակամությունը շարունակվում է երկրի վրա եղող օծյալների ինքնակամությամբ, և դա անհնազանդություն և ապստամբություն

է Աստծո ղեն: Սրա վերաբերյալ Սուրբ Գիրքն ասում է. «Որովհետև ապստամբությունը կախարհության մեղքի պես և անհնազանդությունը կռապաշտության պես է» (1 Թագ.15:23): Բոլոր նրանք, ովքեր հիմնական շեշտը դնում են հրաշքների վրա և միաժամանակ քարոզում են Ավետարանի իրենց սեփական տարբերակը, այն ժամանակ զարմացած կմնան: Նրանք գտնվում են նույն վիճակում, որում գտնվում են այն բոլոր քրիստոնյաները, որոնք արտասանում են «Հայր մեր»-ը, որում ասվում է «Թող Քո կամքը լինի երկրի վրա ինչպես որ երկնքում է», այնուհետև անցնում են իրենց սեփական օրակարգին և մնում են հարանվանության, եկեղեցու, համայնքի կամքի կամ հենց իրենց սեփական կամքի մեջ:

Նրանք, ում Տերը հանդիմանում է Մատթ.7-րդ գլխում, լիովին կլանված են իրենց սեփական գործերով և չեն ուզում ներգրավվել Աստծո ծրագրում: Ահա թե ինչու նրանք կոչվում են անօրենություն գործողներ: Երբ խանդավառությամբ երգում են. «Նա է Տերը, Նա է Տերը...», բայց չկա Տիրոջ և ծառայի միջև հարաբերությունը, խոսում, մարգարեանում, գործում են շրջանցելով Աստծուն: Սուտ օծյալներն ու սուտ մարգարեները չեն մտահոգվում այս ժամանակի համար տրված խոստումներով, ոչ էլ այն փաստով, որ Աստված մարգարե է ուղարկել Տիրոջ օրը գալուց առաջ (Մաղաք. 4:5,6):



## ՄՈԼՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԸ

Մոլորության ոգին արդեն լցնում է մոլորության չափը: Խոսվում է այնպիսի բաների մասին, որոնք չեն կատարվել ոչ մեր Տիրոջ, ոչ էլ առաքյալների ծառայության ժամանակ: Նման հավաքությունները ընդհանրապես շատ տարօրինակ բնույթ են ստանում: Ժամանակակից երաժշտության միջոցով արհեստականորեն մթնոլորտ են ստեղծում: Պարզ երևում է, որ չկա Սուրբ Հոգու օժտություն, ոչ էլ Աստծո անմիջական գործողություն, այլ մի ներկայացում է, որը կենտրոնացած է «խարիզմատիկի» կամ «հրաշքներ գործողի» և նրա առանձնահատկությունների վրա: Ապշեցուցիչ բաներ են պատմում, ինչպես օրինակ, իբր թե մարդիկ գերբնական ձևով ատամնալիցք են ստանում 24 կարատանոց ոսկուց: Վերջերս էլ ասում են, թե ոսկյա փողոցներից փոշի է թափվել քարոզչի սև կոստյումի վրա, իսկ այդ փոշին բարձրացրել է սպիտակ ձին, որը արշավում էր երկնքում: Հեծյալը իր ձախ ձեռքում՝ գավազան, իսկ աջ ձեռքում թուր ուներ: Այս և նման այլ ոչ սուրբգրային բաներ են քարոզում և խոսում են «արթնության երրորդ ալիքի» մասին:

Խարիզմատիկ հավաքությունների մոլորություններից ամենահատկանշականը աղոթքի ժամանակ «մեջքի վրա ընկնելն» է: Դա կոչվում է «slain in the Spirit», որը կարելի է թարգմանել «Հոգուց հարվածված», և ներկայացվում է որպես առանձնահատուկ օրհնություն: Սրա վերաբերյալ նույնպես թույլ տանք, որ Սուրբ Գիրքը խոսի: Խոսքը, որին վկայակոչում են այս մարդիկ, գրված է Ես.28:13 համարում, մինչդեռ դա սպառնալիք է. «... որպեսզի գնան և ետևի վրա ընկնեն ու ջարդվեն և որոգայթի մեջ ընկնեն և բռնվեն»: Այս սպառնալիքն արվում է, որովհետև հոգնած և բռնավորված մարդիկ չմտան Աստծո հանգստի մեջ և չուզեցին լսել: Նախ Աստված ցույց է տալիս այն ողբերգական վիճակը, որում գտնվում են եկեղեցու սպասավորները և ներկայացնում է մեղադրանքը. «Քահանան ու մարգարեն մոլորված են ցքիով, կուլ են գնացել զինիի մեջ, ցքիով խոտորել են, մոլորվում են տեսիլքի մեջ, դանդաչում են դատաստանում» (Ես.28:7):

Այս նկարագրությունը վերաբերում է բոլոր նրանց, ովքեր խմել են Բաբելոնի գավաթից և կորցրել են հոգևոր կողմնորոշումը (Երեմ. 51:7, Հայտն.17:2): «Որովհետև բոլոր սեղանները լիքն են պիղծ փսխվածքով, այլևս տեղ չի մնացել» (Ես.28:8): Ոչ միայն մեկ սեղան, մեկ եկեղեցի, մեկ դավանանք, այլև բոլոր սեղաններն են ապականված

այն բաներով, ինչ դուրս են եկել մարդկանց բերանից՝ աղավաղված խոսքերով:

Այսպիսի իրավիճակում արդարացված է այս հարցը. «Ու՞մ է նա գիտություն սովորեցնում և ու՞մ քարոզ հասկացնում» (հ.9): Այնտեղ, ուր սեղանները այդպես ապականված են, տեղ չի կարող լինել ո՛չ աստվածաշնչյան արդարադատության, ո՛չ էլ աստվածային հայտնության համար: Անընդհատ նույնն է՝ «... հրաման հրամանի վրա՝ հրաման հրամանի վրա, խրատ խրատի վրա՝ խրատ խրատի վրա. մի քիչ այստեղ, մի քիչ այնտեղ...» (հ.10): Բոլորը վստահ են իրենց գործերում և մտածում են. «... որ հորդահոս հեղեղը եթե անցնելու լինի, մեզ չի հասնի, որովհետև մենք ստությունը մեր պատսպարանը շինեցինք և խաբեության մեջ ենք ծածկված» (հ. 15): Նրանք չեն նկատում, որ քայլում են սեփական ճանապարհներով և փոխանցում են Սուրբ Գրքի իրենց սեփական մեկնությունները, որոնցով, առանց գիտակցելու, իրենց համար պատսպարան են շինել: Մինդեռ ԱՅՄՊԵՍ Է ԱՍՈւՄ ՏԵՐԸ. «Եվ ես իրավունքը՝ չափին հավասար, և արդարությունը՝ կշիռքին հավասար պիտի անեն, և կարկուտը պիտի ստության պատսպարանը խորտակե, և թաքուստը ջրերը պիտի ողողեն» (հ.17):

Եթե հիմա ստի պատսպարանին հարվածի ճշմարտության խոսքի մուրճը, մարդիկ պետք է ուշադրություն դարձնեն դրան և վերադառնան Աստծուն: Կա մի կանոն, որը մեզ Տերը տվել է ճանապարհի համար: Պողոսը գրում է իր համագործակից Տիմոթեոսին. «Բայց դու հետևեցիր իմ ուսուցումին, վարմունքին, *մտադրությանը, հավատին, համբերատարությանը, սիրուն, համբերությանը, հալածանքներին, չարչարանքներին*» (2 Տիմ.3:10): Ո՞վ է պատրաստ որպես չափանիշ ընդունել առաքյալների վարդապետությունը: Թող ոչ ոք չխաբվի, Աստվածհավիտյանթույլ չի տա ծաղրելի իրեն: Նրա թագավորությունում և Նրա եկեղեցում միայն Նրա խոսքը արժեք ունի: Մարդկանց խոսքերը պատկանում են մարդկային հաստատություններին, բայց չեն կարող փոխարինել Աստծո խոսքին: Կրկնակի մեղք է, երբ Աստծո խոսքը Իր սկզբնական ձևով մերժում են և փոխարինում են մարդկային խոսքերով՝ իրենց իրենց հանգստացնելու համար (Երեմ.2:13): Աշխարհի բոլոր հարանվանություններում դա այդպես է, թեև մարդիկ դա չեն նկատում:

Հենց նրանք, ովքեր ազատություն են քարոզում, մարդկանց իրենց թակարդն են զգում, և նրանց նոր կազմակերպությունը նման է հին բանտերին: Իրականում ամեն բան առաջվա պես է մնում, որովհետև

ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՏԵՐԸ. «Բայց նա հափշտակված և կողոպտված ժողովուրդ է, նրանք ամենքը որոգայթի մեջ են ընկած փոսերում և կալանաց տան մեջ թաքնված են. նրանք հափշտակվեցին և ազատող չկա, կողոպուտ եղան և ասող չկա թե՛ տո տուր: Ձեզանում ո՞վ կա, որ սրան ականջ դնի, ուշադիր լինի և սովորի հետազայի համար» (Ես.42:22,23): Մինչդեռ ամենուրեք կան ընտրյալներ, որոնց հավատարիմ Տերը կոչ է անում դուրս գալ հոգևոր բանտերից Սուրբ Գրքի խոսքի համաձայն. «Դրա համար նրանց միջից դուրս գնացեք ու բաժանվեցեք,--- ասում է Տերը,--- և պիղծ բաների մի դիպչեք...» (2 Կորնթ.6:16-18, Յայտն. 18:4 և այլն):

Աստծո ներկայության մեջ ոչ ոք մեջքի վրա չի ընկել, այլ, հակառակը, բոլորը ծնկների վրա և երեսնիվայր են ընկել. Աբրահամը (Ծննդ.17:17), Եղիազարը (Ծննդ.24:48), Սովսեսը (Ելից 34:8), Յեսուն (Յեսու 5:14), Դանիելը (Դան.8:17), նաև մեր Տերը Գեթսեմանիում (Մատթ.26:39): Բոլոր մարգարեները և Աստծո ողջ ժողովուրդը ընկնում էին երեսնիվայր: «Եվ բոլոր Իսրայելի որդիները տեսնում էին կրակն իջնելիս, և Տիրոջ փառքը տան վրա էր, և ընկան երեսի վրա գետինը քարահատակի վրա՜» (2 Մնաց.7:3): Նույնիսկ Նաբուգոդոնոսորը՝ հեթանոս թագավորը, երեսնիվայր ընկավ, երբ տեսավ Աստծո գործողությունը (Դան.2:46): Նաև, երբ Աստծո Յոզին գործում է մարգարեության պարզիկ միջոցով, մարդիկ ընկնում են երեսնիվայր (1 Կորնթ.14:25), ոչ թե այնպես, ինչպես անում են այսպես կոչված «կրակի կոնֆերանսների» ժամանակ, երբ մարդիկ ընկնում են մեջքի վրա: Նաև Նոր Կտակարանում բոլորը Տիրոջ վախով երեսնիվայր ընկած են երկրպագություն արել: Սկզբում այդպիսի երկրպագություն արել են արևելքից եկած երեք մոզերը ըստ Մատթ. 2:11-12 համարների և այն շարունակվել է մինչև Յովհաննես առաքյալը Պատմոս կղզում:

Ամեն արթնության ժամանակ և բոլոր ավետարանական հավաքություններում մարդիկ հավաքվում են քարոզչության համար, որովհետև ծարավ են Աստծուն: Մինչդեռ բոլորը պատրաստ չեն ողջ ճանապարհը գնալ Տիրոջ հետ առանց փոխզիջման: Շատերը վկայակոչում են իրենց «փորձառությունները» և շարունակում են քայլել իրենց սեփական ճանապարհով:

Այն բոլոր բաները, ինչ կատարվում են հիմա, պետք է հստակորեն կոչվեն իրենց անուններով և քննվեն Աստծո խոսքի լույսի տակ: Քանի որ Տերը խստորեն մերժելու է հրաշքներ գործողներին, պետք է այս թեման առաջին պլան մղվի: Շատերը շահագործում են Նրա անունը՝ մարգարեանում են, դևեր են հանում, հրաշքներ են գործում և թույլ են

տալիս, որ մարդիկ իրենց մեծարեն: Ի՞նչ սխալ բան կա այն ամենի մեջ, ինչ անում են: Դա թվում է միանգամայն սուրբգրային: Նրանք իրենք են սխալ իրենց մարգարեություններում և ուսմունքներում, որովհետև մի կողմ են դրել առաքյալների ուսմունքները և աստվածաշնչյան մարգարեությունը:

Աստծո զորությունը, որը Հիսուսի Անվան մեջ է, գործում է անկախ այն փաստից, թե քարոզիչը ճիշտ է թե սխալ, որովհետև այն կապված է միայն հավատացյալի հավատքի, ոչ թե նրա վարդապետության կամ կյանքի հետ: Մեր Տերն ասում է. «Նրանց էլ, ովքեր կհավատան, այս նշանները կհետևեն...» (Մարկ.16:17): Նաև գրված է. «Որովհետև նա իր արեգակը ծագեցնում է չարերի և բարիների վրա ու անձրև է բերում արդարների ու անիրավների վրա» (Մատթ.5:44-45):

Ճշմարտությունը մնում է, որովհետև գոյություն ունի նաև մեր Տիրոջ խոստումը. «Դրա համար Աստծո իմաստությունն էլ ասել է. «Նրանց մոտ մարգարեներ և առաքյալներ կուղարկեմ» (Ղուկաս 11:49): Նրանց, ում Տերն Ինքն է ուղարկում, ասում է. «Ահա ես ձեզ ուղարկում եմ, *ինչպես ոչխարներին՝ գայլերի մեջ*» (Մատթ. 10:16): «Ով որ ձեզ ընդունում է, ինձ է ընդունում, և ով որ ինձ ընդունում է, ինձ ուղարկողին է ընդունում: Ով որ մարգարեի անունով է մարգարե ընդունում, *նա մարգարեի վարձ կստանա, և ով որ արդարի անունով է արդար ընդունում, արդարի վարձ կստանա*» (Մատթ. 10:40,41):

Սա զորավոր խոստում է, որովհետև Աստծուց է տրված և հնարավորություն է տալիս վարձ ստանալու նրանց, ովքեր ընդունում են ուղղակիորեն Աստծո կողմից ուղարկված պատգամաբերներին: Նորից մեր Տերը շեշտը դնում է դրա վրա. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. «Ով որ ընդունի նրան, ում ես կուղարկեմ, *ինձ է ընդունում, իսկ ինձ ընդունողը ինձ ուղարկողին է ընդունում*»» (Հովհ.13:20): «Հիսուսը դարձյալ ասաց նրանց.«Խաղաղություն ձեզ. ինչպես Իմ Հայրն Ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում» (Հովհ.20:21): Աստծո կողմից ուղարկված ամեն մարդ գիտի օրը, վայրը և իր ստացած հանձնարարության բառացի բովանդակությունը, երբ նա ստացավ իր կոչումն ու առաքելությունը:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ

Ո՞րն է տարբերությունը ողջամիտ և կեղծ վարդապետությունների միջև: Ինչպե՞ս գանազանել ճշմարտությունը կեղծիքից: Ի՞նչ է ասում Սուրբ Գիրքը դրա վերաբերյալ: Ամեն մարդ կարող է պահել իր սեփական կարծիքը, բայց այսպես, թե այնպես, այն բացարձակապես ոչ մի արժեք չունի Աստծո թագավորության մեջ:

Պետք է համեմատել աստվածաշնչյան հիմնական վարդապետությունը եկեղեցական հայրերի դոգմաների հետ, որոնք շեղվում են աստվածաշնչյան ուսմունքից: Աստվածության, մկրտության և այլ թեմաների վերաբերյալ հիմնական վարդապետություններում եկեղեցական դոգմաները չեն համապատասխանում առաքյալների ուսմունքին: Առանց այդ գիտակցելու՝ շատերը, չնայած օրհնություններին, ապրում են ավանդական կեղծիքների մեջ: Այդպիսին է ողբերգական հաշվեկշիռը շնորհքի ժամանակի վերջում: Աստծո կողմից ուղարկված մարգարեները, առաքյալները և վարդապետները ճանաչում էին միայն մեկ Աստծո, ոչ թե եռակի: Նրանք չէին ճանաչում նաև «Jesus only» (Միայն Հիսուս) վարդապետությունը: Նրանք ճանաչում էին Աստծուն այնպես, ինչպես Նա հայտնվել է Իր բազմազանության մեջ: Երրորդության վարդապետությունը, ըստ որի երեք հավասար, աստվածային Անձեր գոյություն են ունեցել հավիտենությունից ի վեր, սուրբգրային չէ և համապատասխանում է հին, հեթանոսական տեսությանը, որը ի միջի այլոց, դեռ գոյություն ունի բուդդիզմում:

Նոր Կտակարանի եկեղեցու զարգացումը շատ նմանություններ ունի Իսրայելի հետ: «Եվ ժողովուրդը տեսավ, որ Մովսեսը ուշացավ սարից իջնելու և Ահարոնի մոտ ժողովվեցավ ժողովուրդը և ասացին նրան. «Վեր կաց մեզ համար աստվածներ շինիր, որ մեր առաջին գնան...» (Ելից 32:1): Նա պատասխանեց այդ խնդրանքին և մի ոսկե հորթ պատրաստեց, որովհետև Եգիպտոսում երկրպագում էին ցուլին: Այնուհետև գրված է. «Եվ ասեցին. «Սրանք են քո աստվածները, ով Իսրայել, որ քեզ Եգիպտոսի երկրից հանեցին» (հ.4): Պատկերացրեք. Իսրայելի Աստվածը հայտնվել էր լեռան վրա և առաջին հերթին, ասել էր. «Ես եմ Եհովան՝ քո Աստվածը, որ քեզ Եգիպտոսի երկրից՝ ծառայության տնից հանեցի: Բացի Ինձանից ուրիշ աստվածներ չունենաս»: (Ելից 20:2,3): Այդ նույն ժամանակ Ահարոնը ժողովրդի հետ խախտեց այդ պատվիրանը, կռապաշտություն արեց և հորթին «աստված» կոչեց:

Երբ Տեր Հիսուսը ուշացրեց իր խոստացված գալուստը, եկեղեցական հայրերը նույնն արեցին. նրանք ստեղծեցին և ձևակերպեցին երեք գլուխ և երեք կերպարանք Աստծու, որը համապատասխանում էր հեթանոսական օրինակին, և ասացին. «Ահա քո Աստվածը, ո՛վ քրիստոնեություն»: Նա, ով համարձակվում է դիպչել այդ ձևակերպմանը, նրա հետ վերաբերվում են այնպես, կարծես նա վիրավորել է ամենասրբազան բանը: Մինչդեռ ո՞րն է ճշմարիտ հավատքը: Պողոսը մեծ կարևորություն էր տալիս ճշմարիտ վարդապետությանը և շեշտել է. «Որովհետև մեկ է Աստված, որ արդարացնում է » (Հռոմ.3:30): Մեկ ուրիշ տեղ գրում է. «Բայց մեկի դեպքում միջնորդ չի լինում, իսկ Աստված մեկ է» (Գաղատ.3:20): Սուրբ Գրքում ոչ մի անգամ գրված չէ «Եռամեկ Աստված», «Երրորդություն», ոչ էլ «Երկնային Որդի» կամ «հավիտենական Որդի»: Այսպես ձևակերպված Աստվածը լիովին օտար է առաջին եկեղեցուն, մարգարեներին և առաքյալներին: Հստակ մտածողություն ունեցող ոչ մի մարդ Աստծո խոսքի ներկայության մեջ չի կարող պնդել, որ երկնքում իշխում են երեք հոգի և այդ երեքը մեկ են ամեն բանում, այսինքն, երրորդություն են կազմում: Եթե այդ Երրորդությունը գոյություն ունեցած լիներ երկնքում, Աստվածաշնչում այդ մասին վկայություն կլիներ: Քանի որ դա չկա Աստվածաշնչի ոչ մի տեղում, դա չի կարող լինել նաև երկնքում:

Շատերը չափազանցնում են և բարձրաձայն գոռում են. «Այժմ հրավիրում ենք շատ սուրբ Երրորդությանը»: Ներկայացնողը նաև հրավիրում է Հորը, և բոլորը խանդավառությամբ ծափահարում են: Հետո Որդին է հրավիրվում, և նորից աղմուկով ծափահարում են: Հետո շատ առանձնահատուկ կերպով հրավիրում են Սուրբ Հոգուն, և բոլորը խանդավառված են: Մի՞թե որևէ մեկը լրջորեն կարծում է, որ կան երեք Հավիտենականներ, երեք Ամենակարողներ, երեք Ամենագո Անձեր: Ուրեմն դա միակ Աստվածը չէ, որի մասին խոսում է Աստվածաշունչը: Երեք անկախ Անձերը երեք Աստված են, ոչ թե մեկը, եթե լեզուն դեռ իմաստ ունի: Դրանում է մեծ ուրացությունը, որի մասին Պողոսը հաղորդել է, և որը իրականացել է, երբ քրիստոնեությունը լքեց հայտնության հրեական հիմքը:

Ողջ Հին Կտակարանում «ուրացություն» նշանակել է հեռանալ մեկ և միակ ճշմարիտ Աստծուց և գնալ այլ աստվածների մոտ: Նոր Կտակարանում, երբ հեռացան մեկ և միակ ճշմարիտ Աստծուց և գնացին «Եռանձնյա» աստվածության մոտ, սկիզբ դրվեց մեծ «ուրացությանը»: Պողոսը գրում է գաղատացիներին. «Չարմանում են, որ ձեզ Քրիստոսի շնորհի մեջ կանչողից դեպի ուրիշ ավետարան 70

եք այդպես արագ փոխվում» (Գաղատ.1:6): Նույն զլխում նա անեծք է հռչակում նրանց վրա, ովքեր ուրիշ ավետարան են քարոզում: Հետագայում նա հարց է տալիս. «Ձեզ ո՞վ հմայեց...» (Գաղատ.3:1):

Գրեթե բոլորը նույն հանդիմանությունն են ստանալու մկրտության եռամիասնական ֆորմուլայի հետ կապված, որը նրանք օգտագործում են ամենուրեք: Նոր Կտակարանի հիմնումից ի վեր բոլոր հավատացյալները մկրտվել են Տեր Հիսուս Քրիստոսի Անունով, ինչպես Պետրոսը պատվիրեց Եկեղեցուն իր առաջին քարոզի ժամանակ, Սուրբ Հոգու առաջնորդությամբ, Եկեղեցու հիմնվելու օրը (Գործք 2:38): Շատերը համաձայն են եկեղեցական ավանդույթների, բայց բոլորովին համաձայն չեն Աստծո հոսքի հետ:

Նույն մարդիկ, որոնք այնքան զորավոր կերպով օգտագործում են Հիսուսի Անունը, կտրականապես մերժում են մկրտվել սուրբգրային ձևով՝ Տեր Հիսուս Քրիստոսի Անունով, ինչպես պատվիրել և այդպես էլ արել են Պետրոսը, Պողոսը, մյուս առաքյալները մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատվերով: Մինչդեռ դա նրանց բավարար չէ, և Տեր Հիսուս Քրիստոսի Անունով մկրտությունը, որի մասին գրված է Աստվածաշնչում, նրանք բացահայտ կերպով հերձված են համարում, և անում են այդ թե՛ բանավոր, թե՛ գրավոր: Արժե նտածել այդ մասին: Այսօրվա հերձվածողները դրանով մեղադրում են Թագավորության բանալիները ստացած Պետրոսին և աստվածային կոչման շնորհիվ քարոզող և գործող Պողոսին այն բանում, որ նրանք սխալ են սովորեցրել և սխալ են մկրտել և դրանով մոլորեցրել են առաջին եկեղեցու հավատացյալներին: Նրանք իրենք չեն հետևում մեր Տիրոջ պատվերին առաքյալների նման, այլ միայն կրկնում են Մատթ.28:19-ում գրվածը՝ որպես ազդեցիկ, կախարդական ֆորմուլա: Մի՞թե բոլորին հայտնի չէ, որ ողջ հին, «քրիստոնեական» մայրցամաքում «երեք բարձր տիտղոսների» կիրառումով զբաղվում են մոզոթյամբ, կախարդությամբ, ոգեհարցությամբ, ամեն տեսակ ածպարարությամբ և օկուլտիզմով:

Աստվածաշնչի քննադատական հետազոտությունը հաստատում է, որ Մատթ.28:19-ում գրվածը ձեռագրում նախապես այսպես է հնչել. «en to onomati mou»՝ «Իմ անունով», ինչպես այդ պնդում է եկեղեցական վարդապետ Եվսեբիուսը: Համաձայն եկեղեցու պատմության գրվածքների՝ Քրիստոսից հետո առաջին դարերում դեռևս մկրտում էին Հիսուս Քրիստոսի Անունով: Այնուհետև մարդիկ Աստվածաշնչում ներմուծեցին իրենց վարդապետական կարծիքները: Ահա թե ինչու Աստվածաշնչի հետագա թարգմանություններից

շատերում, ինչպես նաև բոլոր մայրցամաքներում կարդացված «Ջեյմս թագավորի տարբերակում», գրված է 1 ՅՈՒՆԻՍԿՈՎ-ի հավելումը. «Որովհետև երեքն են որ երկնքում վկայում են...», թեև այդ համարը չկա բնագրում: Այն գրված չէ նաև եբրայական տեքստում, գերմաներեն լեզվով Աստվածաշնչի հրատարակություններում, ինչպես օրինակ, Յուդիսի հրատարակության մեջ, որը գոյություն ունի Ցվինգլիի ժամանակներից, ոչ էլ Ժ. Ն. Դարբիի ֆրանսերեն թարգմանության մեջ և Լյութերի բնօրինակ թարգմանության մեջ: Մինչդեռ ավանդույթի համաձայն այն թողել են Սուրբ Գրքում և նույնիսկ քարոզում են դրա վերաբերյալ: Պարականոն գրքերը նույնպես Աստվածաշնչի մաս չեն կազմում: Դժբախտաբար, Աստվածաշունչը նույնպես ընկել է մարդկանց ձեռքը. ինչպիսի՞ ողբերգություն: Որոշ ժամանակ ի վեր «Հայր մեր» աղոթքին այսպես կոչված «օրհնաբանություն» են ավելացրել, իսկ վերջերս նույնիսկ այսպիսի վերջավորություն՝ «Հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու»: Նույնիսկ Աստվածաշնչի տարբեր լեզուներով թարգմանություններում պատահում են լուրջ տարբերություններ:

Պետք է ասվի ևս մեկ անգամ. հրեաների վրա դրված անեծքները, խաչակրաց արշավանքները, կախարդուհիների դատերը, խարույկները, ինկվիզիցիան, հրեաների և այլադավանների հալածանքն ու սպանությունը, այդ ամենը եղել են «հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու»: Նույնիսկ Ֆրանսիայում երեսուն միլիոնից ավելի հուգենոտների կոտորածի ժամանակ դահիճները ամբիոնից եռամիասնական «օրհնություն» ստացան: Նույնիսկ այսօր որևէ կրոնական ուխտի մեջ մտնելու համար պետք է երդվեն «հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու». այդպես են անում նույնիսկ հրեաները մասոնական կարգ մտնելու համար: Բոլոր նրանք, ովքեր պատկանում էին Հիտլերի ԷՍԷ ջոկատների նեղ շրջանակին, պետք է կրեին սև համազգեստ, աչ թևին պետք է ունենային դաջվածք, պետք է կրեին մի գոտի, որի ճարմանդի վրա գրված էր «Արյուն և պատիվ», նրանց գլխարկի վրա մեռածի գլուխ էր նկարած, և նրանք իրենց հավատարմության երդումը պետք է տային Ռեյխին, դրոշին և ֆյուրերին «հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու»: Ողջ Եկեղեցու պատմության մեջ այդ ֆորմուլայի ներքո միլիոնավոր մարդիկ են սպանվել դաժանորեն: Առաջվիցից ողջ մնացած հրեաները մահվան նախկին ճամբար այցելության ժամանակ ինձ անձամբ պատմել են, ինչպես նաև հանրային հեռուստատեսությամբ Հոլոկոստի տարելիցի կապակցությամբ, որ սև համազգեստ հագած սբիրները կանոնավոր կերպով մասնակցում էին ճամբարի կաթուղի մատուռի



պատարագներին: Մինչ գազախցիկներից ծուխը բարձրանում էր երկինք, մատուռից բարձրանում էր խնկի ծուխը և աղոթքներ էին ասում «հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու»:

Նա, որ ծանոթ է եկեղեցու պատմության միջազգային գրվածքներին, գիտի, որ Երրորդության գաղափարը և դրա հետ կապված մկրտության երրորդաբանական ֆորմուլան հաստատվել է միայն Քրիստոսից հետո երրորդ դարում: Պոլիկարպոսը և Իրենեոսը դեռևս չգիտեին որևէ քրիստոսաբանական վեճի մասին. նրանք ճանաչում էին Քրիստոսին այնպես, ինչպես առաքյալներն էին քարոզել: Այս տեսությունը քննարկվեց Նիկիայի տիեզերական ժողովում (Ք. Հ. 325 թ.), և ձևակերպվեց Քաղկեդոնի տիեզերական ժողովում (Ք. Հ. 381 թ.): Որպես համընդհանուր ընդունելի եկեղեցական դոգմա՝ այն հռչակվեց միայն 441 թվականին Լեվոն Մեծ պապի ժամանակ:

Պատմաբանները միակարծիք չեն այն փաստի վերաբերյալ, թե եղել են 50 թե 60 միլիոն նահատակներ, որոնք սպանվել են Երրորդության եկեղեցու կողմից: Այլադավանների և հրեաների համար, որոնց համարում էին «Քրիստոսի զազրելի և կարծրասիրտ սպանողներ» դրված էին հետևյալ պայմանները՝ ընդունել «եռամեկ Աստծո» հանդեպ հավատքը և մկրտվել եռամիասնական մկրտությամբ: Բայց հատկապես հրեա հավատացյալը չէր կարող այդ ամենի իր հոգու գնով, որովհետև դրանով կխախտեր Աստծո առաջին և ամենասուրբ պատվիրանը: ԱՅՍՊԵՍ Է ԱՍՈՒՄ ՅԱՅՎԵՆ. «Լսիր, ո՞վ Իսրայել, մեր Եհովա Աստվածը՝ Եհովան մեկ է» (2 Օրին.6:4): Այս նահատակների հոգիները ըստ Հայտն. 6:9-11 համարների, վրեժխնդրություն են աղաղակում. «Երբ հինգերորդ կնիքը բաց արեց, սեղանի տակ տեսա նրանց հոգիները, որ սպանվել էին Աստծո Խոսքի համար և այն վկայության համար, որ ունեին: Նրանք բարձրաձայն աղաղակում էին և ասում. «Մինչև ե՞րբ, ո՞վ սուրբ և ճշմարիտ Տեր, չես դատում ու մեր արյան վրեժը երկրի վրա բնակվողներից չես առնում»: (Հայտն. 6:9-11): Պետք է հարց տալ. ո՞րն է այն հաստատությունը, որը պետք է հաշիվ տա Աստծուն դրա համար: Ու՞մ մասին է խոսվում հետևյալ համարներում. «Քանի որ սրբերի ու մարգարեների արյունը թափեցին...» (Հայտն.16:6): «Եվ տեսա այն կնոջը՝ սրբերի արյունով ու Հիսուսի վկաների արյունով արբած» (Հայտն.17:6): «Եվ կինը, որին տեսար, այն մեծ քաղաքն է, որ թագավորում է երկրի թագավորների վրա» (Հայտն.17:18): «Եվ նրա մեջ գտնվեց մարգարեների, սրբերի և երկրի վրա սպանվածների արյունը» (Հայտն.18:24):

Եկել է ժամը որոշման: Ամեն վարդապետություն, ամեն կիրառություն, հավատքի ողջ ժառանգությունը պետք է քննվեն Աստծո խոսքի Լույսի տակ: Այժմվանից վերոհիշյալ խոսքերի միջոցով բոլորը գիտություն ունեն այդ խոսքերի վերաբերյալ: Հնարավոր է արդյոք, որ թեկուզ մեկը խուսափի վերջին դատաստանից՝ առանց պատասխանատվություն կրելու: Ինչ վերաբերում է հավատքին, ո՞վ է պատկանում Արյունով գնված Եկեղեցուն, և ո՞վ է պատկանում արյունով պղծված մայր-եկեղեցուն, որը միաժամանակ նկարագրվում է որպես մեծ Բաբելոն (Հայտն.17:1-6): Այժմ յուրաքանչյուրը պետք է ինքն իրեն որոշի, թե որտեղ է գտնվում ինքը հավատքով:

Ռեֆորմացիայի հոգևոր պոռթկումից ի վեր Տերը Իր ժողովրդին քայլ առ քայլ դուրս է հանում այն ամենից, ինչ սուրբգրային չէ, մինչև որ Եկեղեցին լիովին կառուցվի առաքյալների հիմքի վրա:

Քարոզիչ եղբայրներ, մի՞թե չէք տեսնում, թե ուր է տանում ճանապարհը: Դուք հիմնել եք աստվածաշնչյան դպրոցներ և սովորեցնում եք մյուսներին, ինքներդ չե՞ք ուզում Աստծուց սովորել: Մի՞թե չէք տեսնում, որ միակ Աստված Նոր Կտակարանում մեր փրկության համար, հայտնվեց որպես Հայր երկնքում, Որդու մեջ՝ երկրի վրա, և Սուրբ Հոգու միջոցով՝ Եկեղեցուն: Դա կատարվեց Նոր Կտակարանի՝ Ուխտի միակ Անունով՝ Տեր Հիսուս Քրիստոսի Անունով, որը միակ Անունն է, որում գտնվում է աստվածային փրկությունը, որով մկրտվում են հավատքի եկածները:

Հին Կտակարանում ոչ ոք չի աղոթել՝ «Հայր մեր, որ երկնքում ես», այլ դիմել են Տեր Աստծուն: Այս անվանումը գտնում են 6700 անգամ: Ոչ մի մարգարե չի իմացել «երկնքում գտնվող հավիտենական Որդու» մասին, ոչ էլ կանչել են Նրան: Հենց սա է նոր խորհուրդը, որ ազդարարվել է խոստացվել է Հին Կտակարանում, սա է Աստծո անըմբռնելի և անբացատրելի հայտնությունը Քրիստոսով (2 Կորնթ. 4:6, Կողոս. 2:2,3, 1 Տիմ.3:16 և այլ համարներ): Նա, ով չունի այս հայտնությունը, սխալ կհասկանա խոսքի տառը, սխալ կբացատրի և սխալ տեղում կդնի: Հոր, Որդու և Սուրբ Հոգու Անունը, որով պետք է մկրտվենք, իրականում Տեր Հիսուս Քրիստոս է: Եբրայական «Յաշուա» անունը նշանակում է «Յահվե-Փրկիչ», ինչպես «Էմմանուել» նշանակում է «Աստված մեզ հետ»: Ճշմարիտ դավանությունը այսպես է հնչում. Հին Կտակարանի Տերը (Յահվեն) Նոր Կտակարանի Հիսուսն է (Տերը): Սա է աստվածաշնչյան ճշմարտությունը: Հոր Անունն ուրեմն Որդու Անունն է (Սաղմ.22:22), որում Նա ճանաչվել է: Բոլոր քարոզիչներին և ավետարանիչներին, ինչպես նաև բոլոր հավատացյալներին կոչ ենք

անում համաձայնել, որ առաքյալների ժամանակներում և նույնիսկ 200 տարի անց ոչ մի աստվածաշնչյան գործողություն և աղոթք չի արվել եռամիասնական ֆորմուլայով:

Պետրոսը՝ առաջին ժամհարդը, կատարեց այն, ինչ հարուցյալ Տերը պատվիրել էր Իր աշակերտներին. «Նրանց սովորեցրեք, որ այն ամենը, ինչ ձեզ պատվիրեցի, պահեն» (Մատթ. 28:20): 40 օրվա ընթացքում Տերը Իր աշակերտների հետ խոսեց Աստծո թագավորության մասին: Նա նրանց սովորեցրեց և լիազորություն տվեց (Գործք 1:1-3): Այդ առիթով Նա նրանց տվեց նաև ավետարանչության կարգադրությունը, որը նրանք գործի դրեցին: Քրիստոսի վարդապետությունը եղել է և մնում է Աստծո վարդապետությունը: «Իմ ուսուցումը իմը չէ, այլ ինձ ուղարկողինն է: Եթե մեկը ցանկանում է նրա կամքը կատարել, *նա այդ ուսուցման մասին կիմանա, թե արդյոք Աստծո՞ւց է, թե՞ ես ինձանից եմ խոսում*» (Հովհ. 7:16,17): Իսկ առաքյալների վարդապետությունը միշտ եղել է և մնում է Քրիստոսի վարդապետությունը: «Ամեն ոք, ով հանցանք է գործում և Քրիստոսի վարդապետության մեջ չի մնում, Աստված չունի. ով որ մնում է Քրիստոսի վարդապետության մեջ, նա Որդուն էլ ունի, Հորն էլ: Եթե մեկը ձեզ մոտ գա և այս վարդապետությունը չբերի, նրան ձեր տուն մի ընդունեք ու նրան բարև մի տվեք: Որովհետև ով որ նրան բարև ասի, նրա չար գործերին մասնակից կլինի» (2 Հովհ. 9-11):

## Մ Ա Ր Տ Ա Յ Ր Ա Վ Ե Ր

«Ձգույշ կացեք, որ չմերժեք նրան, ով խոսեց, որովհետև եթե այս երկրի վրա պատգամ տվողին մերժողները չկարողացան ազատվել, ապա որքա՞ն ավելի մենք, եթե երկնքից խոսողին մերժենք» (Եբր.12:25):

Հարցն արդարացի է. այսօրվա հոգևոր առաջնորդները մի՞թե չեն վարվում այնպես, ինչպես Քրիստոսի առաջին գալստի ժամանակ՝ շարունակելով իրենց ավանդույթները, կարծես Աստված ոչինչ չէր արել: Ով հոգևոր առաջնորդներ, որ տեսել եք Աստծո գերբնական գործողությունը մեր ժամանակներում, դուք, որ առանց Աստծո կողմից հաստատված մարգարեական ծառայության չէիք ունենա ձեր սեփական, ավետարանական ծառայությունը, մի կողմից ասում եք. «Բրանհամը գորավոր մարգարե էր, Աստված նրան ամեն բան բացում էր», ինչպես վկայեց նաև Թ. Լ. Օսբորնը, մյուս կողմից ասում եք. «Նրա վարդապետությունը սխալ էր»: Ինչպե՞ս համաձայնեցնել այս երկու բաները: Դուք ասում եք, որ Աստված նրան աստվածային հաստատումներով անկրկնելի ծառայություն է տվել, ինչպես ուրիշ ոչ մեկին, մինչդեռ դուք հանուն ձեր ժողովրդականության շրջանցում եք ճանապարհը ցույց տվող այն Պատգամը, որը նա բերեց Տիրոջ Անունով և որը պետք է պատրաստի Քրիստոսի երկրորդ գալուստը: Մի՞թե մեծ և անուղղելի սխալ չէք վերցնում ձեզ վրա: Դուք ներկայանում եք, որպես այս ժամի մարդիկ, բայց զրպարտել եք Աստծո մարգարեին: Դուք ձգտում եք ավերել Աստծո կողմից տրված միակ արտասովոր ծառայության ազդեցությունը: Բայց դա ձեզ չի հաջողվի: Շշմարիտ ոչխարները կհետևեն բարի Յովվի կանչին: Բոլոր նրանց մեջ, որոնք նախասահմանված են հավիտենական կյանքի համար, կկատարվի Աստծո Խոսքը, որն ուղարկվել է այս ժամանակի համար:

Այն ժամանակվա դպիրների պես ո՞վ է ուզում մերժել Աստծո խորհուրդը իր անձի մասին (Ղուկաս 7:29,30)՝ չմկրտվելով աստվածաշնչյան ձևով, թեև Պողոսը վկայում է, որ ինքն էլ այդպես է մկրտվել(Հռոմ.6:3): Քարոզիչներ, չէ՞ որ այդպես դուք վերցրել եք գիտության բանալին, դուք ինքներդ չէք մտել, ցանկացողներին էլ արգելել եք (Ղուկաս 11:52): Եկեղեցու աստվածային կարգուկանոնը, որի մասին վկայել է Պողոս առաքյալը, և որը նորից շեշտել է Բրանհամը, դուք անուժ եք դարձնում մի արհամարհական ժպիտով: Դուք ասում եք. «Դե, դրանք Բրանհամի վարդապետություններն են՝ մեղքի մեջ անկումը, Աստվածությունը, մկրտությունը, կնոջ աստվածաշնչյան դերը և ուրիշ շատ բաներ»: Իսկապե՞ս: Մի՞թե

դրանք Սուրբ Գրքի վարդապետությունները չեն: Այսօր ու՞մ է Տերը հանդիմանում յոթնապատիկ «վայ»-ով, ինչպես այն ժամանակվա հոգևոր առաջնորդներին (Մատթ. 23:13-33): Աստված ամեն մեկից հավատք և հնազանդություն է պահանջում:

Մատթ. 25-րդ գլխում խոսվում է Փեսայի գալստյան մասին: 24-րդ գլխում մեր Տերը ցույց է տալիս Դիսուս Քրիստոսի գալստին նախորդող և դրան ուղեկցող հանգամանքները և շեշտը դնում է այն մասի վրա, որը կատարվում է վերջնական փուլում՝ լիակատար վերականգնման ժամանակաշրջանում: «Ուրեմն ո՞վ է այն հավատարիմ ու իմաստուն ծառան, որի տերը նրան իր ծառաների վրա դրեց, որ նրանց ուտելիքը ժամանակին տա: Երանի այն ծառային, որի տերը երբ գա, նրան այդպես անելիս գտնի: Ճշմարիտ են ասում ձեզ, որ նրան իր ողջ ունեցվածքի վրա կդնի» (հհ. 45-47): Այժմ պետք է ներկայացվի Աստծո ողջ խորհուրդը, լիակատար խոսքը, բոլոր հոգևոր գանձերի հետ միասին: Աստվածային կոչման պատճառով, որ ես՝ Էվալդ Ֆրանկը, ստացա Տիրոջ զորավոր, թափանցող և իշխանությամբ լեցուն ձայնով, 1962 թվականի ապրիլի 3-ին, Պոդոսի նման պատասխանատվություն ունեն Աստծո առաջ:

Այժմ խոստացված խոսքը պետք է բաժանվի որպես հոգևոր կերակուր, վերջին Պատգամը պետք է քարոզվի ողջ ճշմարտությամբ, աշխարհով մեկ, Քրիստոսի վերադարձից առաջ: Տերը իր մոտ տարավ իր ծառային, բայց նրան հայտնված խոսքը թողեց մեզ որպես հոգևոր կերակուր և թարմ մանանա, որով Աստված հազեցնում է այն քաղցը, որն ուղարկել է Ամոս 8:11 համարի համաձայն: Աստծո խոսքը մնում է հավիտյան, և Աստծուց ծնվածը լսում է Աստծո խոսքը (Հովի.8:47): Այժմ կատարվում է նաև այն, ինչ գրված է Անգե մարգարեի գրքում. «... և ժողովրդի բոլոր մնացորդը իրենց Տեր Աստծո ձայնին և Անգե մարգարեի խոսքերին լսեցին, ինչպես որ իրենց Տեր Աստվածը նրանց ուղարկել էր, և ժողովուրդը վախեցավ Տիրոջ երեսից» (Անգե 1:12):

Մենք դեռևս ապրում ենք շնորհքի ժամանակաշրջանում, և յուրաքանչյուրս հնարավորություն ունի շտկելու իր ընթացքը և լիովին կանգնելու Աստծո կողքին: Այժմ վերջին անգամ Աստծո խոսքը դուրս է գալիս մեր փրկության և ուսուցման համար, որպեսզի մենք վերադառնանք աստվածաշնչյան ճանապարհի համար: Նրանք, ովքեր չեն հետևում խոսքին, այդ նույն խոսքով կդատապարտվեն վերջին դատաստանի ժամանակ (Հովի. 12:48): Այս կանչը վերաբերում է բոլորին. «Այսօր եթե նրա ձայնը լսեք, ձեր սրտերը մի խստացրեք...» (Եբր. 3:7,8): Այդ նա է աղաղակում մեզանից յուրաքանչյուրին

անծամբ. «Եթե դու էլ այսօր իսկ իմանայիր քո խաղաղության մասին...» (Դուկաս 19:42):

Ողջ աշխարհում Աստծո բոլոր գավակները ընդունում են, որ Աստված ուղարկել է Իր Խոսքը մեզ բժշկելու (Սաղմոս 107:20) և մեզ ամեն մոլորությունից ու խառնաշփոթությունից դուրս կանչելու համար: Հիսուս Քրիստոսի Հարսը այժմ շնորհքով ապրում է վերջնական հաղթանակը թշնամու զորությունների և խարդավանքների վրա: Այդ Հարսին են վերաբերում հետևյալ սուրբգրային հատվածները. «Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով ու իրենց վկայության խոսքով և իրենց անձերը չսիրեցին մինչև մահ» (Հայտն.12:11): «Խնդանք և ուրախ լինենք ու փառք տանք Նրան, որ Գառան հարսանիքը եկավ, և նրա կինը պատրաստեց իրեն: Նրան տրվեց, որ սպիտակ, մաքուր և լուսափայլ բեհեզ հագնի (որովհետև բեհեզը սրբերի արդարությունն է): Եվ ինձ ասաց. «Գրիր, «Երանելի են Գառան հարսանիքի ընթրիքին կանչվածները»: Եվ ինձ ասաց. Սրանք Աստծո ճշմարիտ խոսքերն են»: (Հայտն. 19:7-9):

Հուսով եմ, որ այս շարադրանքը կընդունվի որպես Աստծո կողմից բարեկամական խոսք, որը ցույց է տալիս ուղղությունը Իր Խոսքի միջոցով:

«Այս գրքի մարգարեության խոսքերը մի՛ կնքիր, որովհետև ժամանակը մոտ է... ահա շուտով գալիս են, և իմ վարձը՝ ինձ հետ, որ ամեն մեկին հատուցեմ ըստ իր գործերի... այս բաները վկայողն ասում է. «Այո՛, ես շուտով գալիս եմ»: Ամեն: Ե՛կ, Տե՛ր Հիսուս: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը ձեր բոլորի հետ լինի: Ամեն» (Հայտն.22:10,12, 20, 21):

## Contents

Մեծ Որբերգոււթօնինը եւ ԱՍՏՕՈ Փրկոււթօնը Ծրագիրը Վերջին Ժամանակների ՊԱՏԳԱՄԻ ԼՈՒՅՄԻ ՏԱԿ	1
ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ՍԿՍՎԵԼ, ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ՎԵՐՋԱՆԱԼՈՒ	4
ՄԵՂՔԻ ՄԵՋ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՇՏԿՈՒՄԸ	7
ԵՐԿՈՒ ՍԵՐՈՒՆԴ	12
ՆՈՐԻՑ ԱՄԵՆ ԻՆՉ ԼԱՎ ԿԼԻՆԻ	15
ԱՍՏՎԱԾ ՄԻՇՏ ԳՈՐԾՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ	17
ՀՍՏԱԿ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ	21
ԵԻՇՏ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ	23
ԱՍՏՎԱԾ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԻՐ ԾՐԱԳԻՐԸ	27
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԿԱՆԵՐ	32
ԳԵՐԲԵՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՈՐՈՇՈՒՄ Է ՊԱՀԱՆՁՈՒՄ	38
ՆՇԱՆՆԵՐԸ ՑՈՒՅՑ ԵՆ ՏԱԼԻՍ ՆՊԱՏԱԿԸ	43
ՃՇՄԱՐԻՏ ՄԱՐԳԱՐԵԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	47
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՈՒՄ	51
ՍՈՒՏ ՄԱՐԳԱՐԵՆԵՐ ԵՎ ՍՈՒՏ ՔՐԻՍՏՈՍՆԵՐ	55
ԱՅԺՄ ԱՄԵՆ ԻՆՉ ՆՈՐԻՑ ՊԵՏՔ Է ՍՏՈՒԳՎԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՃՇՄԱՐԻՏ, ՈՒՍՄՈՒՆՔԸ՝ ՃՇԳՐԻՏ	60
ՄՈԼՈՐՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԸ	65
ՀԻՄՆԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇԸ	69
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ	76